Ո՞հ , ինչ ամօթ բան . լոկ հետաքրքրութիւնը համոզեց զիս վախնամ , վասն զի կարծեմ թէ բարի տղեկ մը իր ժնողաց համելի ըլլալու . համար , շուտ մանոնց խօսքին կ'հետզանդի : Մարզրիտ դուռը բացաւ և զիս մօրս մօտ տարաւ . իմ մուտքու փառաւոր չեղաւ :

« Զօրապետ , ըստ մայրս գերձանի կտոր մը տռնելով , մօտեցիր , գործն երկար չպիտի տեւէ : »

Բայց , ահա , երբ գեձանն փաթթեց՝ ակռաս մօրս ձեռքը մնաց : Ակսայ քահ քահ խնդալ , խոյս առալով :

Ես ալ զգացի որ ծիծաղելի էր վարժունքս , և իրօք քոյրիկն իզմէ աւելի քաջասիրտ էր : Կ'իրաւեմ ընթերցողս որ թոյլ տայ իր կաթի ակռաները քաշել , վասն զի շատ դիւրին բան է : Այսպէս շատ դիւրաւ քաջասիրտ տղեկի մը համբաւը պիտի ստանայ . իսկ եթէ երրեք իր յուշավիւպը դրելու ելնէ , իր ժամանակակիցներուն այս էջէս աւելի փայլուն տողեր աւանդած պիտի ըլլայ :

Ա՞հ , քոյրս որբան իրաւունք ունէր զիս այս արխուր խցիկին գուրս հանելու , ուր այնքան տաղաւուկ կ'զգայի : Իմ արտօնուքս շորցան երբ այն գեղեցիկ հաւերը տեսայ : Մարզրիտ մոռցեր էր ըսելու թէ գեղին գոյնով հաւեր ալ կան , ոև աքլորներ ինչպէս նաև կապոյտ ու կանաչ երանգներով :

Աիրուն տնակ մը և փոքրիկ պարտէզ ունէին ազւոր հաւերն : Առջի օրերը , մեր բոլոր զրօսակնեղու անոնց հաց նետել և խնդալ , երբ կ'զիտէինք

թէ ինչպէս իրարմէ կ'ափշտակէին մեր տուած սր-
նունգը :

Նեռու տեղերէ կ'զային որ մեր հաւերը տեսնեն :
Ամէնքը կ'զբայլէին , բաց ի Կատէրինէն , նա կը
պեզէր , թէ իր հաւերն , չատ գերազանց են այն
հաւերէն որ հեարգով յառաջ եկած են : Եւ երբ
հայրիկը հետը իյնալ ուղեր , անոր վառեակները կը
կտրէր : Բայց նա շիտակը ըսելով կ'սիրէր և կ'յար-
գէր իմ դայեակս :

Խեղճ Կատէրին հարուստ չէ , իրաւ , բայց հայ-
րիկս ունեւոր էր , և այս ալ նոյն բանն է : Երբ
Կատէրին չկարենայ աշխատիլ , բանի մը կարօտ չի
սիրտի մեայ , այլ սիրտի հանգիստ ընէ միայն . Շի-
տակը նշանաւոր է իմ դայեակս :





ԳԼՈՒԽ ԺԵ

Ա Ն Գ Լ Ի Ե Ր Ե Ն Լ Ե Զ Ո Ւ Ն

Դիտե՞ս եղբայր իմ, ըստ Մարգրիտ, անզինցի վարժուհի մը պիտի ունենամ որ անգլիերէն սորզիմ։ Դու ազ պիտի սորզին և միասին պիտի խռախնք։ ուրիշները շպիտի հասկնան, կուզե՞ս սորզիլ։

— Ես, օրիորդի մը հետ սորզիմ, երբէք, Մարգրիտ։ Այդ միայն վորքիկ աղջկան մը համար լաւ է։

— Հազար եռ Պահանձնին քիչ մը բան կ'ուսնիմ։

— Այդ տարրեր խնդիր է։

Բարեբազդաբար, սիրելի Մարգրիտու տարբեր խնդիր խօսքէս զոհ եղաւ, թէ ոչ պիտի չփոխթէի և շպիտի կարենայի բացատրել թէ ինչ է տարրերութիւնը։

Կան վայրկեաններ ուր կ'սիրեմ դիմադարձութիւն ընել, կամ այսպէս ըսեմ բարեմիտ ըլլալու

բաջութիւնը շունիմ, վասնզի կ'զգամ թէ եթէ ուղէի կրնացի բարեմիտ ըլլալ :

Եսատ անհամերեր էի տեսնելու օրիորդ Արտավել-լան . չատ հետաքրքիր եմ, և երբ հիւրեր գան՝ կ'ուրախանամ :

Մարզրիտ շարունակ կ'խօսէր ինձ զալիք վարժուհին վրայ :

« Հէերի՛կ, կրնաս ըսել թէ՝ արդեռք օրիորդ Արտավելան ինչ դէմք ունի :

Խոկ ես, որպէս զի խեզամ և քուրիկս բարեկացնեմ, ահարկու զոյներով զանի կ'նկարագրէի : Օր մի խեզը անզլուհին կազամախիփի աղէս բարձր էր, երկար թէ եւեր՝ ունէր, կանգունի շամի ցից ակռաներ, և առոր աղէս հավաքաւոր ձիբքեր : Հետեւալ օրն, այնքան փոքր է կ'ըսէի իր հասակին որ մինչև անգամ լիսնին օրորոցը կրնար ազմիլ :

Վերջապէս օրիորդ Արտավելան եկաւ . ազէկ կ'որ իմ զծած և ոչ մէկ պատկերին կ'նմանէր : Այնքան ազէիւ և համեստ բարի կերպարան մ'ունէր որ խոկոյն սիրեցի զինքը : Բայց այս կարծիքս Մարզրիտին շըսի : Բոյրո շատ ուրախ էր որ իր մաս անբաժան ընկերուհի ունէր, անզիիքէն զաս կ'առ իրեն և աղէտք . եզած առեն՝ մինչև անգամ հետք կ'խազար :

Մոսցայ յատնելու որ շատ հպարտ էի, ինչպէս որ Կատերին կ'ըսէր, բայց ես այդ բանը կամակարութիւն կ'անուանէի (կարող եղաք արդէն յդատել) : Եթէ խնդրէին իզմէ բան մ'ընել, կ'մերժէի կարծելով թէ այսպէս կարեւորութիւն կատանամ,

և որշափ ազաշին , այնքան կ'զիմաղբէի , և այս ընտթեամբու շատ կորուստեր ըստ եմ . թերեւ այս պատճառու էր որ հայրիկն ու մայրիկը չէին առաջարկեր ինձ որ անդլիերէն սորտիմ , թէ և շատ փափագ ունէի սորվելու , երբ կը լսէի քոյրս որ փոքրիկ խօսքեր կ'չինէր և իր վարժուհին հետ կը խօսակցէր , շատ աւարօրինակ կ'զանէի և կ'մուտեէի որ եթէ քրոջս հետ խօսակցէի , շատ աւելի սիրուն բան մը պիտի ըլլար :

Մայրիկն , ինչպէս որ ըստ եմ , ամէն ինչ կը գուշակէ , և հաստատ զիտեմ որ ըստ եմ , և հաստատ զիտեմ որ ինքը ըստ է Մարգրիտին որ մանրը զաներ տայ ծածուկ : Ահ , որչ' զի բարի է քուրիկս , քանի որ փափագ ունէր ինձ զաս տալու , ինք ևս աւելի ժրաֆան կ'զառնար : Երբ առանձին պարտէ զը վազվզէինք , շատ մը անդլիերէն բառեր կ'սորվեցնէր ինձ :

Օր մը ինձ ըստ .

« Եզրայր իմ , խորհուրդ մը , զարմանալի խորհուրդ մը կ'զառնայ մաքիս մէջ . մաիկը ըրէ , երկու ամսին Մայրիկին տանին օրեն է : այժաք է անդլիւրէն լեզուով շնորհաւորես իրեն տանը :

— Ինչ , անդլիւրէն բարբառով :

— Հենրիկ , խնդրեմ կատակը մէկոին , իմ խորհուրդս շատ սիրուն է , քեզ փոքրիկ առակ մը պիտի սորվեցնեմ : Օրիորդ Սրապէլլայի քով պիտի կրկնես , որ սիսալ չընես : Այն օրը անդլիւրէն պիտի նախաճաշիկ ու ճաշ ընենք , և Պետրոս սպա-

ուռորը չպիտի հասկընայ երբ հաց ուզենք :

Ավոտ'ս , ի՞նչ պիտի մտածէք իմ զրայ , եթէ ըսեմ ձշմարիտը զիսցիք ուրեմն որ Պետրոսին զարմանք և շփոթութիւն պատճառելու յոյն մեծապէս օգնեց քրոջս առաջարկն ինձ ընդունել տալու :

Ուրեմն մեր հանգստեան ժամերն անդիմերէն սորվելով կ'անցնեինք : Երբեմն մեր զասն իրբ պատահմամբ օրիորդ Արագէլլային առջև կ'սորվէինք , որ բարորոշին անտարբեր դէմքով և առանց երեսու նայելու իր բանուածքին զրայ ծռած՝ պիտիներս կ'ուզգէր : Զարմանայի յարմարութիւն ունեին , այս , զարմանայի կ'ըսեմ , պարոններ և օրիորդներ , որովհետեւ փորձով կ'ըսեմ , հազիւ տասն ութ ամիս կայ որ քոյրս այս խորհուրդն ունեցաւ և ես արգէն ֆրանսերէնի չափ կ'խօսիմ անդիմերէնը :


Այս երկու ամիսները միւսներուն չափ շուտ անցան , և Սուրբ Աննայի օրը , առաւօսուն ժամը իներն Մայրիկին սենեալը մտանք : Մարգրիտ ևս բռնած էինք մեծ վարդէ փունջ մը :


Քոյրս օրիորդ Արագէլլայի օգնութեամբ սորվեցուցած էր՝ինձ (այս սիրելի օրիորդին հետ բոլորովին հաշոտած էի) սիրուն շնորհաւորական ուղերձ մը : Եաւ լաւ սորված էի : Երբ յանկարծ ազատորէն իմ զգացմունքս յայտնելու մտօք աւելի յարմար զայց ըսելու մօրս .

Y love you (կ'սիրեմ բեզ)

Այս մի քանի խօսքերը կայծակի աղդեցութիւն ունեցան : Մայրիկին կարծեց թէ այս մե մ'էր որով կ'ուզէի ըսել , որ այսուհետեւ անդիմերէն պիտի սոր-

Մարդիրնեւ եւ եւ բարկում էին այն գարդի փոսիզ մը :





զիմէն կը աւելի ուշ անոր և հօրս զարմաները
երբ սկսայ իրենց առջեւ գոյ տուակ մը խօսիլ առանց
բառ մը մասնավու և այեղափափ չեւշող մը որ օրիորդ
Արագելլայի ժողովը կ'ըսրժէր :

TUE SHEEP.

*Lazy sheep, pray tell me why
In the pleasant fields you lie,
Eating grass and daisies white,
From the morning till the night?
Every thing can something do,
But what kind of use are you?*

*Nay, my little master, nay,
Do not serve me so; I pray.
Do'nt you see the wool that grows
On my back, to make you clothes?
Cold and very cold you'd get,
If I did not give you it.*

*True it seems a pleasant thing
To nit the daisies in the spring;
But many chilly nights I pass
On the cold and dewy grass,
Or pick a scanty dinner, where
All the common's brown and bare.*

*Then the farmer come at last,
When the merry spring is past,
And cuts my wooly coat away ;
To warm you in the winter's day ;
Little master, this is why
In the pleasant fields I lie.*

Նայրիկը շտառ գոհ էր , երեսներս կ'զգուեր , իր վորքիկ տղան կ'ահուանէր զիւ , և կ'խոսառանար զիւ Անդին տանել : Տայց այս խոսանման սիէտք շունեի որ երջանիկ ըլլամ . երբ տղայ մը բարեմիտ է իր վարձքն ինքնին կ'զանէ :

Ջեմ ուղեր պարծենելուս մ'ըլլալ և ենթաղրել թէ ամէն վորքիկ տղաք անդիներէն զիտեն , քանի որ քիչ մնաց որ ես չպիտի սորպիլի : Կ'վայսաքիմ իմ սիրելի ընթերցողիս առակին թարգմանութիւնն տալ : Եթէ անգիներէն զիտէ , դարձեալ ովիտի հաւատնի իմ յատուի զիտաւորութեանս :

Ո Զ Խ Ա Ծ Ն Ե Ծ Ը

Մոյլ ո՛յխարներ : Խնդրեմ , ըսէք ինձ , ինչո՞ւ համար առառընէ մինչև իրիկուն կ'մնաք զուարթ դաշտերուն մէջ , խոտ և ճերմակ մարդարտածաղիկներ ու տեղով : Ամէն արարած կրնայ բան մ'ընել , բայց զուք , ինչ բանի օգուտ ունիք :


Եռամ մի՛ զատեր , սիրելի պարսես , համբերէ որ ըսեմ , խնդրեմ , այդ կերպով մի՛ վարուիր ինձ

հետ , չե՞ս անսներ բուրդը որ կ'աճի իմ զբայ , ո՞հ ,
որչափ պիտի մաէիր , և շատ պիտի մաէիր , եթէ
քեզ այդ բուրդը շատայի :

Երաւ , հանելի կ'թուի ինձ գարեան մարդքիտ-
ներ կտրելը , բայց որքան զով գիշերներ կ'անցնեմ
խռնաւ և ցուրտ մարդադեռնին զբայ , կամ ինչ
անորարարտ նախաճաշիկ կ'կրծեմ այն չոր և տիտոր
ամայի գաշտավայրին զբայ :

Ապա կ'գայ ազարակազանիը , երբ զուարիթ գա-
ռունը կ'անցեի և բոլոր իմ բրդեայ հազուասս կը-
խռուզէ , որովհ աղի ձմեռուան եղանակին մէջ ըեզ
առարցեէ : Փոքրիկ ովարոն , հիմանկ իմացար թէ ինչու-
համար ուրախ զուարիթ մարդերուն մէջ կ'արածիմ :





ԳԼՈՒԽ ԺԶ.

ԵԱՅ ԳՈՀ ԵՎՔ . — ՎԻԵՏ ՈՒԽԻՄՔ

Մեր սանիկին մայրը զառնիկ մը քերաւ մեզ :
Խնձ ուրախութիւն , մեր ալքին առջև խոտ կ'ու-
տէք , մեզի կը նայէք : կ'մայէք : Մարդրիս ժապա-
ւէնի մը մէջէն բաժան մ'անցուց և անոր վիզը կա-
խէց : Նոր հիւրը մեր առենուն աչքին լոյն էր :
Կ'արծեմ նուն որ քրտջո կողմէ սանարուելու պէտք
չունէք . շան պէս մեր եռեւէն կ'զար : Վ'գիացու-
գէի անոր առուն մը տալ . Մարդրիս պնդեց թէ
շայխափ զանէինք առելի լու անուն մը քան զանիկ
առուննն , և եռ հաւանեցայ : Անոն շատ շուտ խնա-
ցաւ թէ որբան տարբեր է մեր զառնիկն իր թզիտէ
ոչխարիէն : Միշ մ'առեն իրարմէ զախ զզ ալքէն եռու՝
մանրօնցան , և այնայիսի խորդեր կ'սառզային որ մեր
խնդուկը կ'չարժէն :

Վահե կ'առելիար մեր հասակն , մենք մեզի զի-

պեր կյարինէինք ուրախ զուարթ, այնովէս կ'երեւակայէինք որ մայրիկին և հայրիկին զաւակները չենք, այլ ողորմելի տղաքներ որ իրենց ապրուսող ճարելու կ'աշխատին :

Օր մը մեր մոքին այնողէս փշեց թէ փոքրիկ հոգիւներու կեանքէն աւելի զեղեցիկ բան չկայ :

« Խեայիս, կ'ըսէք Մարգրիտ, միշտ միասին պիտի պարսէինք, նախ ահ ու զողս պիտի բռնէք մուսածերով որ վայրենի կենդանիներ կան, ուստի քովզ նուտած զուլուստ պիտի հիւսէի : Խակ զու ուռիտ սապատեներ, վանդակներ պիտի շինէիր . իմ քովս նուտած երրեմն պիտի երգէիր : Երիկունը մեր հըղիկը պիտի հաւքտէի, կարգի զնէի և թանը պիտի եփէի : » Եւ քոյրս որբան կ'ըստրկանար, երբ զըրման օրելով կասկած կյայանէի իր Եփելիք թանին համին պրայ :

Երբեմն ալ չըջուն փոքրիկ վահառողներ կ'ըլլայինք : Ամէն մարդ մեզ կ'ափրէք և մեզմէ բան ծախու կ'առնէք : Որչափ ուրախ պիտի ըլլայինք, եթէ մեր շահած ստակն առներ տանինէնք : Առան զի եթէ Մարգրիտ պարծանք կ'սեպէք անսես լինիլ, կը փափաքէր նուե լու մայր մ'ունենալ և իր մայրը զինքը շատ կ'ափրէք :

Մէծ պրօսանք մ'էր ինձ լուն Մարգրիտին վեպիներն ու զիւտերը :

Ի՞նչ զարմանալի բան, մարդուս զժբազզութիւնը կ'հասնի ճիշդ այն ժաման որ մոքէն չանցնիր : Միթէ այս բանը զիտած էք :

Մենք ամէնքս չտա զո՞յ ինք : Աքանչելի էր

օդը : Պիշ առենին շագ անակները պիտի ժողուէինք և ուստէինք , երբ բարի պարոն Հերսան հիւանդ եղաւ : Եաւ ցաւ զգաց որ անկողին ընկաւ , և զիս մինակ թողուց որ աշխատախմ , թէ և օրիորդ Արագ-պէլլա վրաս կ'առկէր , և այդ աղջիկն սկսեր էի շատ սիրել :

Հայրիկը կարծեց ամէնուն հետ որ պարոն Հերսան շուտով պիտի թժչյուի . հակառակը եղաւ : Ուստի որովհետեւ քիչ օրէն զիւղին պիտի իջնէինք . մայրիկս մտածեց որ զիս Լիօնի զիւերօթիկ դպրոցը զրկէ , վասն զի շատ բան չէի սորմեր , և միայն անկիսարէնի մէջ առաջ կ'երթայի :

Այս լուրո ինձ ախորժելի չէր , ինչպէս կրնաս երեւակայել : Հայրիկն ըստ ինձ :

« Իմ փոքրիկ տղաս , իրաւ որ շատ խելոք ես և կ'յուսամ որ պարոն Հերսանին միշտ չափանի ուստանակաս իր հիւանդութեան ժամանակ անհնագանդ զանուելով : Եաւ անգամ ըստած ես թէ զինքը շատ կ'սիրես , որեւին պէտք է սիրոյդ ասլացոյցը տաս :

« Կարելի է պէտք ըլլայ որ ամիս մը առենին զուրս անցնեաս (սկսայ լալ) . լաւ ընկերներ պիտի ունենաս որոց հետ պիտի խաղաս : Պիտի գամքեկ տեսնելու : Եաւ շուտ պիտի անցնին օրերը : Մանաւանդ ինեւ տաս տարեկան տղայ մը պէտք է արգէն քաջութիւն ցոյց տայ :

Պատասխան տալու աեղ քիթս կ'սրբէի :

« Տեսնեմ քեզ : շարունակեց հայրիկս , դոյլ լաւ տղեկ մ'ես . ուստի , քեզ իրը վարձ՝ պայուտակդ համակառ պիտի զնել տամ , և ճիռվ պիտի եր-

թանիք կայարանն , իրքն երկու մեծ մարդ : Այսպէս չէ , չէ երիմ :

Այստ զբեթէ անցաւ :

Բայց Մարգրիտ ինձի ոլէս շուտ մը զիշտը յիմարտեց . մայրիկը սաստեց զինքը , այն ատեն ձայն չի հանեց :

Երկրորդ օրը , սասանց լալու մի հեծայ զացի : Խմ գաւազանս ձեռքս էր :

Աշակերտները զեռ գասարանները չէին մտած , և սակայն միայն տառենինդ հոգի կար , վորքը և միջակ , մէկ քանիին ծնողքը շատ հեռու էին , ուստիք արժակուրդէ զրկուած էին , զատեն զի չէին աշխատած : Տունը մեծ ու զեղեցիկ էր , ահազին բակ մը կար ծառաւէտ , ուր հանգստի ատեն՝ կը խաղացին :

Դաստուններու շատ լաւ ընդունեցին զիս : Պարաւուոր եմ ըստ թէ կարծածիս շափ զժուարաւ չը բաժնուեցայ հօրմէս և այս բանն զիս զարմացուց :

Աւստի , կերեւի թէ զիտմամբ հանգստի ժամանակ տարեր էր զիս դպրոցն , այնովէս որ շուտ մը սկսայ տղոց հետ խաղալ :

Հազիւ զայրեւան մը կար որ բակին մէջն էի , երբ զիտեցի փոքրիկ խարսել և դեղնուկ տղայ մը , իզմէ քիչ մը մեծ , չէ շատ : Մեզ կ'նացէր , և կարծես թէ և ոչ մէկը հոգ կ'ընէր որ այնպիսի տղայ մը ներկայ զտնուէր :

Փոքրիկ տղու մը հարցուցի թէ ինչո՞ւ համար այդ տղան միւսներուն հետ չէր խաղար :

Աւստ զի չեն սիրեր զինքը :

— Ենչու համար , որքան տիսուր դէմք ունի :

— Անկյացի է , չորս բառ քովէ քով բերել յը գիտեր , և երկինք կ'նայի՝ իրո թէ միանաերէնը երկինքէն աղատի իջնէր :

— Միթէ ինձի պէտ նորէկ է :

— Այն , երեք ամսէ ի վեր այս աեզ կ'գտնուի , յեմ գիտեր ու սկզբ եկած է , և ոչ աղայ մը զինքը չսիրեր :

— Միթէ չար աղայ մ'է :

— Ոչ ոք գիտէ :

Փոքրիկ անկյացին գիտեց որ իր վրայ կ'իսուինք . կարմբեցաւ , և ձեռքը գրապահը գրած կ'երթար կ'գար :

Ես բան մը չեմ ըսեր : Յովոր անկյարէն բառներս միտքս կ'ըէրի , օրիորդ Արտապէլլան և Մարգրերիալ կ'յիշէի , բառդ իրքս և անկյերէն քերականութիւնն :

Քիչ մ'ատեն զարանելէս ետքը : որուեցի քայութիւն մը գործել :

Եռնշան խազը կ'ակաէին , մէկ մեծ չոնչանով մը : Ինչ և իցէ , ամէնքը թողուցի , և շիտակ այն վորքրիկ ընկեցիկ աղուն մօս գացի :

Կարող էի շատ լաւ պատճել ընթերցողին մը խօսակցութիւնն որ ունեցանք անկյերէն լիւզով , բայց եթէ անկյերէն շգիտէ ընթերցողը գոհ չաղիտի ըլլայ : Ուրեմն համեստ և կարելի է աւելի աղանդով բանն է միանաերէն գրելը :

« Կ'ուզե՞ս խօսիլ ինձի հետ , քիչ մը անկյերէն գիտեմ : »

Հէրի կառ կարմիր եղաւ և ձեռքը ինձ երկնցոց
և Ե՞նչ երջանկութիւն զոշեց . բայց զիացիր որ
քեզ պիտի տառեն եթէ զիս սիրես :

— Ինչո՞ւ համար :

— Ինչո՞ւ որ չեն սիրեր անկլիացիները : Իմ վրայ
կ'անդան և սիտի ծեծին զիս եթէ համարձակէին .
թող զան նայիմ , և Հէնրի բուռները ակզմեց :

« Ես չեմ գախնար , հայրիկս հազարապետ է ,
և ես զինուորական պիտի ըլլամ :

Խառնու տառեն սխալներ կ'ընէի և կ'գարանէի :

« Ո՞հ , բանէ մը մի գախնար , ընդհակառակն ,
իմ լեզուս պիտի ուրժեցնեմքեզ և զու ալ քուկինդ
ինձ կ'ուրժեցնես :

Այսպէս դաշն դրինք , գործի ոկառ , և թէ-
պէս ապերախատ չեմ , բայց կ'պարտաւորիմ խոստո-
վանիլ որ այս անկլիերէն դասը , երբ փոքրիկ ըն-
կերակիցս ինձ տուառ , աւելի շահաւէտ երեւցաւ
ինձ քան թէ օրիորդ Արագէլլային դասերը , մինչև
խել քրոջս ընկերակցութեամբ : Իսկ սրտիս համար
նոր ուրախութիւն մ'էր փոքրիկ առայ մը մխիթա-
րելու :

Այն օրէն , բոլորազին ինքզինքս փոխուած գը-
տայ : Միաքս կ'ըերէի իմ ամէն սիրականներս , այս-
ինքն , հայրիկս , մայրիկս . քոյրս , Լեռնը , Կասէ-
րինը և մեր զիւղը : Եւ երբ կ'մտածէի որ Հէրի
այս բաներէն և ոչ մէկը ունէր , կ'հպարտանայի որ
զանի կ'սիրեմ և ունոր երջանկութիւնն եմ : Ուստի
ըստ բարեկամիս :

« Պէտք է մոռնալ անոնց ըրածը : Ալազր անոնց հետ պիտի խաղանք :

— Ինչ որ ուզես պիտի ընեմ :

Երկրորդ օրը երբ առաջին անգամ հանդստի ժամը հասաւ, քարե նստարանի մը վրայ ելայ, և զրեթէ այսպէս խօսեցայ :

« Պարոններ, ձեզի լուր մը պիտի հաղորդեմ . Հէրի իմ բարեկամն է, և ձեզի պիտի ըսեմ պատճառը : Տեսնելով որ բոլորովին մինակ է, մոռածեցի որ եթէ ես իր տեղը ըլլայի շատ անքազդ պիտի գտնէի ինքզինքս, և որովհետեւ զեց ամսէ ի զեր քրոջս հետ անկյիերէն զատ կ'առնեմ, միտքս զրի անոր հետ զրունուլ : Երբոր մեծնանք և պատերազմ հրատարակուի, անկյիացւոց հետ պիտի կուռինք բայց հիմա խօսքս մտիկ ըրէք, և եկէք իրր փոքրիկ դաղղիացիներ և փոքրիկ անկյիացիներ միտքեղ խաղանք : »

Կեցցէ պռաաց մէկն և ամէնքը սկսան ծափի զարնել : Այն առեն Հէրիին ձեռքէն բռնեցի և ընկերակիցներս ուրախութեամբ զրկեցին զանի, ամէնքն ալ կ'փութային գնդակներ և շաքարեղիներ տալ :

Թէ և այս միջոցիս ոչ կօշիկ և գաւազան ունի, բայց իմ կարեւորութիւնս և այնպիսի գոհունակութիւն մը կ'զգայի որ կենացս մէջ շպիտի մոռնամ, եթէ շատ ծերանամ իսկ Լեռնին կնքառնօր պէս :

Երկրորդ օրը հայրիկը եկաւ զիս տեսնելու, եւ կրնաք մոռածել անշուշտ որ չմոռցայ իմ՝ Հէրի քարեկամիս վրայ հօրս հետ խօսիլ : Հայրիկն շատ զովեց իմ վարմունքս, քաջ ողայ մ'ես դու, ըստ ինձ

և գուշակեց որ իմ նոր բարեկամն երբէք չպիտի մոռնայ իրեն համար ըրածս : Հայրիկն խնդալով հարցուց ինձ եթէ զզջացեր եմ օրիորդէ մ'անդյի-երէն դաս առնելուս վրայ : Շատ անդամ կ'ըսէին ինձ թէ շատ սիրուն եմ, և ես կ'հաւատապի - բայց հասկցայ որ Հէրիի հետ վարժունքս շատ նշանաւոր էր, և թէ սրտիս ձայնին միտ դնելով բարի զօրծ մ'ըրած էի և զրաւած էի հօրս, զատատուներուս և ընկերներուս համարումն : Հէրի նոյն աղեկը չէր, կ'վազգվէր, քիչ մը կ'խօսէր (չէին համարձակեր զանի ծաղրելու) : Ուստի այսերը կարմրեցան և ամենքը կ'ըսէին որ, եթէ ես չփնիի կարելի է որ ցաւէն մեռնէր :

Խաղը չէր արգիլեր զիս Հէրիի հետ երբեմն, խօսելու : Երբ զիտեց որ իրեն ըստը կ'հասկեամ, պատմեց ինձ Լիոն գտնուելուն պատճառը :

« Ես ալ հայրիկ մ'ունիմ, բայտ բարեկամն միայն թէ Հեղկաստան կ'գտնուի, շատ հեռու է, աշխարհացոյց տախտակին վրայ սիտի ցոյց տամ քեզի իր գտնուած տեղը : Ուստի արձակուրդի տանեն յըկրինար զիս դպրոցէն հանել : Մայրիկս զիս ծնած օրը մեռած է : Եզրապէթ, երկու քոյրերէս անդրանիկն զիս մեծցուց, բայց ան ալ Հէլիս նոռապետին հետ ամուսնացաւ : Շատ կ'փափռաքէի հօրս և քոյրերուն հետ միտաին Հեղկաստան երթալ . բժիշկը հրաման շտուաւ, բայտ որ ճամբորդութիւն ընելու համար շատ տկար եմ : Այն ատեն հայրիկս այս քաղքին մէջ Պարոն մը և Տիկին մը ճանշեալով այս տան մէջ զրին զիս : Դժբաղդարար երկուքն ալ

շատ տարւոք են , միշտ հիւանդու , և չեն կարող զիս գուրս հանել : Երբեմն Տիկինը ինձ անուշեղին կ'ըերէ , բայց ինչ օգուտ ունին ինձ համար :

Դու այս տեղ շնասած , Հէնրիկ ամէն որ և շտա անդամ զիշերները կ'ըսյի : Անդպիերէն խոռք կայ որ կ'արտասանես առանց բուն խմասոր խմանվու , հօմէ այսինքն տուն , չդիակ որքան զժքակա է առայ մ'երր տուն չունի : հօմէ հայրենի տունն , այն ամեն բաներով որ մեջը կ'զտեռին : Դու երկիրդ շատ զեղեցիկ է , թէ և բնու իմ երկրիս չի նման նիր : Կուզէի տեսնել ծովը և անոր մրայ երթեսեկող մեծ շոգենաւները , լսել ազլիերէնն իր բուն հրնչ մունքով : Երբ հայրիկս Հեղեատանէն զտանայ Անդիսա պիտի երթամ :

Հէնրիկ՝ միշտ մենք սիրով վարուինք ինչպէս հիմակ : Խնչ միտու ունի եթէ մէկը անդլիացի և միւսն փրանտացի ըլլայ , բաւական է որ բարի սիրու ունենայ : Մանաւանդ թէ ես երբէք քեզ չպիտի մոռ համ :

— Եւ ոչ իսկ ես , Հէրի , մինչեւ որ հայրդ Հընդկատանէն զտանայ , մեր զիշզը պիտի տանիմքեզ : Պիտի տեսնես թէ ինչպէս հայրիկն ու մայրիկը բարի են և Մարգրիտ այ շատ սիրուն : Պիտի տեսնես նաև օրիորդ Արագելը որ քեզ թէյ սիտի պատրաստէ և բյիթներ որ քու հօմիլ համն ու հոսն սիտի ունենայ : Ո՞ւ . Հէրի երթանիկ սիտի ըլլաս :

Երբ ես կ'մսիթարէի բարեկամու , ինքն ալ հոգ կ'առանէք որ ես ալ պիշտ չունենամ . ոչ միայն ձանձրոյթ շէի զգ որ , այլ և կ'զուարձանանայի . զարմանա-

մեւ թէ թիշտէս չուտ կ'գաղրին վիշտերը :

Անդլիական խաղերը կ'սազրէի , չատերը մեր խաղերուն կը նմանին : Խնչպէս քերդախաղ , կազմախաղ , եռաբայլ : Խոկ իրրեւ նոր խաղ սիխտի նրկարագրեմ մահաւանդ զնդախաղն (croquet) : Ահաւասիկ . իրարմէ հեռու և եածւէ եածւ կ'զնեն երկար քառակուսիի մը զրայ փոքրիկ ազեղներ՝ որ հողին մէջ տնկուած են . և առա զնդահար փայտով զնդակ մը կ'քշեն այնպիսի ձարովիկութեամբ մ'որ այդ զնդակն ազեղներուն մէջէն անցնի , Անդլիաս այս խաղն , մանր տղոց զնդախաղ կ'անուանեն : Այս խաղն մեծ հաշակ ունի մեր մէջ՝ կարելի է անոր համար որ նոր էր : Պատի յիշեմ համեստնագ հդակն (foot ball) : Այսինքն զնդակն ուրագ կ'նետեն : Այս խաղին մէջ զուարձալին այն է որ երբեմն խաղացողը վար կ'իյնայ :

Այսպիսի զրօսալի վիճակի մը մէջ . Մարդրիտին զրայ կ'մտածէի , առանց կարօտ մը զգալու , վասն զի պէտքը չէի տեսներ : Խմ սիրելի փոքրիկ քոյսներէ ինձ այս խոստավանութիւնս : Քեզի այնքան կ'սիրեմ որ համարձակ այսպէս կ'խօսիմ : Բայց իմ զլիսաւոր յանցանքո այս է որ զեռ քեզի չ'զրեցի , թէև քեզի խօսք տուած էի : Ուստի շատ ամշցայ երբ հայրիկը քեզմէ նամակ մը քերաւ ինձ : Մարդրիտ իր թզմներուն մէջէն առէնէ ընտիրը տուեր էր , իր նամակը կարմիր կերպամունք կնքուած էր , և մայրո իր կնիքը անոր տուեր էր : Քանի որ այս այս զիբնե կանաչ թերթակային մէջ ողաներ եմ ,

իէցիք , հիմակ ողիտի երթամ վետուեմ , Մարդրիս շոփտի տռնուի թէ որ այս Յուշապէ ողիս մէջ անցած առևնել :

Գ. Բ 0 2 0 Ն Ա Մ Ա Կ Ը

ԱՀՆ-Ժանի գղեակը , 29 սեպտ .

Արելի ՀԵՂԵԿԻՆ :

« Դամի քիչ մը ցաւ զգացի որ քեզմէ զիր մը շառի , բայց իւրովի ըսի , ընդհակառակն պէտք եր գոհ ըլլալ , վասպի զի եթէ ՀԵՂԵԿԻՆ գերազզ ըլլար , ցաւ մը իր քրոջը պիտի դրէր , ովնակն չէ , եզրոյր թժ : Կ'զուշակիմ որ աշխատաւթենէ եարը կ'խազա , և աշա՛ անոր համար ինձ զրելու ժամանակ չես զաներ :

« Ես ցաւ կ'նեղանամ որ քեզմէ հեռաւ եմ :

« Աւելի յաւ պիտի սեպէի որ հաւերը և բազերը ևս մինակս կերպարէի , միայն թէ զաւ քավս ըլլայիր :

« Հոյրիկը բարեկամիդ վրոյ մեզի խօսեցաւ : Եստ կը փափաքէի զանի տեսնելու : Երբ որ քազարը զանանց , մայրիկը տռնոր պիտի բերել տայ զանի : Կ'նշ բարի մոյրիկի ունինք : Կ'երեւի թէ զաւ ցաւ բարի տզայ մ'ես : Պ. Հերան ցաւ գոհ է : Քաւ վրոդ ցաւ կ'խօսին : Կ'մոտածեմ որ եթէ ես ալ բացակայ ըլլայի իմ վրուա ալ պիտի խօսէն : Գատանակը ցաւ լաւ է , սակայն բիչ մը ախուր կ'գանեմ զանի : Հայք ցաւ տերեւներ թափեց զետքնը , ցաւ զուարճալի և անանց վրոյէն քալել և խցրաց հանելը : Լրառերն կ'ըսէ թէ զու քովը ըլլալովզ . Ժամերը երկար կ'զանէ : Երեկ իրեն հետ զացի մը դաստանին խնձորները մողուելու , ցաւ կան , մեծ ու պրզարիկ : Ո՞նթը բլու : Համար ցագանակներ խորսիլ կ'տամ :

« Ահաս բարեւ , իմ սիրելի փայրիկ եզրոյրս , ցաւ առելի կ'սիրեմ քեզ :

« Վոյրդ ցմահ :

« ՄԱՐԴՐԻՑ 3

Այս նամակը ՀԵՂԵԿԻՆ կարդացի , ցաւ ուրախա-

ցաւ որ Մարդրիտին հետ կ'ծանօթանայ : Զեմկարձեր որ Մարդրիտ իմ գրած պատասխանս պահած ըլլայ , ուստի չեմ ուզեր խնդրել , այս իրաւ է որ իմ գիրք իրենին ովէս գեղեցիկ չէր : Բակին մէջ՝ ուշանի մը զբայ նաևած գրեր էի , երբ շննչանս կը պառնար , այս կ'զրեմ , որովէս զի ընթերցողը չի ցաւի :

Կրեայի այս կտորը չի գրել . բայց չեմ ուզեր . բացէ ի բաց կըսեմ թէ դպրոցէն հեռանալուս զբայ կ'ցաւէի , այս անհամ բան չէ :

Ճշմարիտ շատ կ'սիրէի Հէրին , և ասկէց զատ տղոց հետ լսաւ կ'զուարձանայի : Թէ և Մարդրիտ շատ սիրուն քոյլ մ'էր , բայց չեմ կրնար ամեն խաղ անոր հետ խաղալ : Երբէք չէի կարծեր որ ամիս մը այսովէս շուտով անցնի՝ երբ մէկը առևելին հեռու գ անուի :

Օր մը հանգստի ժամանակ , հայրիկը եկաւ զիս առևելու : Ամէն ընկերակիցներուս մնաք բարեւ ըստ , ամէնքը զժզո՞ւ էին որ այնքան շուտով կ'մեկնիմ : Հէրի շլացաւ թէ և սիրուն շատ ելած էր : Առկայն միւսներն զինք կ'սիրէին և իմ տեղու որբիւ բարեկամ մը թողուցի :

Հաղիւ դուրս ելեր էինք և արտմութիւնս ունցաւ : Կ'ուրախանայի որ ամէն սիրականներս նորէն կ'առնենիմ : Հայրիկը հարցումներուս կ'խնդրար և կառքին մէջ լրազիր չէր կարդար մեր զիս զի մէկ զբացիին ովէս : Հայրիկը իր սեննեկին մէջ լրազիր կը կարգայ , երբ մեղի հետ նստի կ'խօսի և մեղի կը զուարձացնէ :



ԳԼՈՒԽ ԺԵ

ԻՄ ՏՈՒՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈ

Մայրիկը , Մարզրիտ , օրիորդ Արամիլա և կատերին բակը իջեր էին որ մեզ զիմաւորեն : Ես այն միջոցին մայրս զրկելու կ'վազէի , կատերին զիս բռնեց և ամէնէն առաջ նաև զիս համբուրեց : Մայրիկն ուրախ էր , կարծես թէ երկար ճամբորդութենէ մը կ'գառնայի : Նախ զացի սրարոն Հերաներ աւեսելու որ սրահը կ'զանուէր : Եաւ զոհ եղաւ , հոյնալէ ու եւ ես : Մարզրիտ տարաւ զիս որպէս զի հաւերը և ոչխարը ինձ ցոյց տայ : Երկուքնիս ալ միասին կ'խռատինք , զիտամար խենդ ու խելտու խօսքեր կ'ընէի որ քոյլս զուարձացնեմ : Օրիորդ Արամիլա չէր կրնար մեզի հետեւիլ :

Մարզրիտին ամէն հարցումներուն ուստասիսան տալու համար օր մը չէր բաւեր : Պէտք եղաւ երկ-

բորդ օրեն ալ շարունակել : Շատ կ'փափազէի Հէրին
տեսնել : Աքանչելի ող մ'էր , ուստի մայրիկը բառ
թէ , իմ վերագարձու տօնելու համար , հանգիստ
սիստի ընենք և պիտի երթանք տեսնել թէ ինչով ո
կ'ժողունն շադ անակենքը : Ա՞հ . զուարձալի բան է :
Եւ Երբ ազարապանները հունձը կը ժողունն ազ-
բառ մարդիկ կ'զան որ տերեւներուն մէջէն կոր-
ուած շադ անակենքը հաւաքեն :

Փոքրիկ ազգիկ մը տեսանք որ կ'լսր , որովհետեւ
շադ անակ ժողունելու առեն մատները ծակեր էր :
Մարդրիտ փոքրիկին մատները ազմեց և իր թաշկի-
նակով սրբեց զանոնք : Եաբը իրեն ըսինք որ հան-
գիստ նատի իր տեզը : Անենք պիտի հաւաքենք : Կո-
ղովը լեցուելին ետեւ իրեն սռուինք : Անդարէն կ'մա-
րէր , մատուցներուն տակէն մեզ կ'նայէր և շարու-
նակ կ'խնդար : Մարդրիտ շատ կ'փափազէր համ-
րուրել այս փոքրիկ ազգիկը , բայց նա մերժեց եւ
ազւոր շադ անակենքը լի կողովը առաւ փախաւ :

Իմ զատերս նորէն սկսայ , այնովէս լաւ կ'սոր-
վէի որ պարոն Հէրանի կ'զարմանար : Կ'ջանայի խե-
լօք նասիլ որ այդ բարի Պարոն Հէրանին ձահճրոյթ
շտամ . բայց երկար շտեւեց , և առաջուան ովք ո
նորէն խենդութիւններս սկսայ :

Քանի մ'օրէն քաղաք պիտի դառնայինք , բայց
իրիկուան այնքան ձիւն իթաւ , որ մայրիկը ուղեց
սպասել , ինչու որ մայրիկը շատ կ'փախայ երբ կառ-
քայ ձահճրոյթեն . թէ և աւելի զժուար էր մեր զիւզի
լիւնէն իթիելը քան թէ ելիելը : Բայց բնաւ ևս շէի
նեղանար աւելի մնալով զիւզը . լաւ կ'զբանուինք :

եռ և Մարգրիտ, ձիւնին մէջ մեր հետքը թողլով։ Պարտիզանին տղան մեղի համար ձիւնէ մեծկալ մարդ մը շինեց որ քանի մ'օր կանգուն մնաց։ Վերջը ելանը զայն տասպալելու իմ գուշականոց։ Շատ ախորժելի էր այս խաղը։ Խնչողէ ո հիացած կը զիտինք դաշտերը որ բոլորովին ճերմկցած էին։ Կատերին, առառ մը մեզ հագուեցնելու առենք, ըստ թէ այս ձիւնը առենուն համար զուարձայի բան մը շէր և թէ ագարակաղանք պատռու կին մը գտեր էր ձիւներուն մէջ որ քիչ մնաց լեբան զրայ պիտի մնայ եղեր։

Եռուս մը հագուելով մայրիկին սենեակը զազեցինք որ պառաւ կնկան զրայ տեղեկութիւն առնուիք։ Մայրիկը պատեց մեզ, որ այս բարի պառաւը ամսէ մ'ի վեր իր երկան զրայ լուր մը չառնելով, քանի որ հիւանդանոցը կ'զ անուէր, միաբրդ զրեր էր իր պառաւութեան չնայելով մինչեւ Կրօնովլը ուրգով երթալու։ Իրիկուան ժամը տասնին ձիւներուն մէջ կ'զ անեն զինքը և գզեակը կ'բերեն։


« Եկէք, երթանք հետք տեսնուինք, » բառ մայրիկը։ Շամբարդ կինն զ զեկին մէկ սենեակն զըրտած էին, մայրս անոր տաքուկ ներբնազդեստ մը տուեր էր և կրտակարանին մէջ փայլուն կրտեկ մը կը զառէր։

Մեզ տեսնելով՝ խեզն պառաւը, ձեռքերը զեր վերցուց և պօռաց։

« Բարերար Աստուած, միթէ զիս տեսնովը շաղիւի կարծէ որ մեծ ամելին մ'եմ։ Բնչ անկողին, որշափի հանդիսաւ եմ, հասրու այս փոքրիկ տղայքն



Տղան մեզի համար ձիւնի մարդ մը շինեց



որ զիս տեսնելու կ'զան : Իբրաւ որ ստոյգ է ոյն
խօսքը թէ զժբազզոմթենէ ալ երբեմն բարիք կը
ծնի :

Այսպահ պառաւ կին մը երբէք տեսած չունեինք .
ձեռքերը և երեսը մազազաթի կ'նմանին : Չենք
կրնար մեր աշքը անոր վրայէն անդին դարձնել :

Երբ որ դուրս ելանք , Մարգրիտ ըստ ինձ .
և կ'կարծես որ մայրիկն ալ այսպիս պիտի պառաւ-
նայ :

Զէ , ըսի , վասն զի զիտեցի որ այս մատճմունքը
ցաւ կ'ուտանառէր Մարգրիտին . բայց ստոյգ չեմ :

Իրիկուն մը կ'քնանայի , Երբ յանկարծ քոյրո
կատէրինին սենեակը վազերով եկաւ . և ահաելի ա-
զաղակներ արձակելով՝ ըստ :

« Դայեանկս , դայեանկս , կ'լսե՞ս , մէկը կ'մեռցը-
նեն : »

Կատէրին Մարգրիտն իր զիրքին տռան և ոկտա-
խնդալով ըսել .

« Իմ անուշիկս , հանդարտ կեցիր՝ այդ ըստ
անձի այզպիս սաստիկ պիտի պառար , Եթէ ական-
ջէն իսկ քաշէին : Պէտք է անշուշտ սպաննել զանի ,
որ Երշիկ ու խճուզ ունենանք :

— Ա՞ն , ըստ Մարգրիտ , ուրեմն խոզն է այն :

Կեզ Մարգրիտ , սիրալ կ'զարծէր , կ'զոզար ,
դայեանկս շաքարաթուր տռաւու անոր , և մինչեւ քո-
նք տանիցը անոր քովր արթուն նստաւ :

Երկրորդ օրը շատ խնդացինք Մարգրիտին զգա-
ցած սարսափին վրայ : Մեծ եղաւ մեր ուրախու-
թիւնն , Երբ մայրիկը ըստ մեզ թէ հրաման կ'ամար

մեզ որ երշիկ եփաղ խոհարարին աշխատիլը առևնելը : Քոյքս գիշերուան վասնը մոռցաւ : Կատէրին խոհանոցի յարմար հազուատ մը հազցոց , վասն զի Մարդրիս խճուղ մը պիտի շինէր և ես երշիկ մը :

Այս օրն որ խոհանոցը անցուցինք շատ ախորժելի երեւաւ մեզի համար : Երշիկ շինոցին առջեւէն եռենէն կ'քալիինք , այնքան հետաքրրութեամբ կ'նայէինք անոր միս կարենի , մանրենի , որ կարծես թէ մոզական լազարեր մը կ'ցուցնէր մեզի : Բայց երբ մարդը խոստումը պահելով բառ ինձ , որ աղիքը գիշեմ , իսենթի ովէս մեծ ուրախութիւն զզացի առանելով որ թազանդը կ'ուոի : Մարդրիս յարհամարհնեց իր վոռըրիկ ձեռքերով սեղմելու մեծ ժոռքը որ իւզոտ էր :

Երիրորդ օրը նախահայի առան մեր զդացած երկիւզն բոլորուին անցաւ , զդայուն Մարդրիս հարցուց եթէ ազարակազանը ուրիշ խոզ ալ պիտի մորթէր :

Երեք շորո որ անցելէն եաբը , ձիւնը բոլորուին հալեցաւ . բարի պատուը տարցեր էր , և ամէնքս մէկին զարձանը , միայն Կատէրին մնաց քանի մ'օր եւս որ յաթերը լուսայ :

Հերիին խոսք տուած էի որ զինքը չմոռեամ , բայց շիտակը բոելու համար , մոռցեր էի զինքը , մահաւանդ մեր երշիկ եփած օրը :

Երբ քազաք հասանք , ազաշեցի հայրս , որ զիս տանի զսրոցն որ բարեկամն առանեմ : Խոսք տուած ինձ որ միւս օրը հանգստի ժամանակ տանի զիս : Կ'ուզէի որ միւս օրը շուտ մը հասնէր :

Հէրի հազիւթէ տեսաւ զիս , որ շուտ մը թե-
ւերուս մէջ նետուեցաւ : Գոհ և ուրախ զէմք մը
ունէր : Բաւական լաւ ֆրանսերէն կ'խօսէր : Հայ-
րիկը գգուեց զան և ըստ որ մեզի հետ դուրս պի-
տի ելնէ :

Ութ որ ետքը իմ Հէրի բարեկամն մեր տունն
եկաւ : Մայրիկն այնքան անուշ կերպով ընդունեց
զանի որ բնաւ վախ շզգաց : Մարդրիտին հետ անկ-
լիերէն խօսեցաւ և կարծ եմ թէ մեծ եղաւ զարման-
քըն տեսնելով որ ֆրանսացի մը բաւական լաւ անկ-
լիերէն կ'խօսէր : Բայց ոռոուոզ չէ : Իր տեզը ե-
թէ ևս լինէի՛ շտա ողբարի Հայարտանացի : Կ'կարմրէր
նա , երբ Հէրիի հետ կ'խօսակցէր : Խսկ օրիորդ Ա-
րագէլլան , իր նմաններուն մէջ գտնուոզ թուշունի
մը ոլէ՞ ուրախ էր : Այնքան շուտ կ'խօսէր , որ
քոյրս և ևս հազիւ կ'խօսնացինք ըստածը :

Մայրիկը , սիրական մայրիկը այնպիսի նախա-
նուշ մը ոպատրաստել տուածէ էր որ փոքրիկ անզ-
մացիի մը ճաշակին յարմար ըլլայ : Պիֆստէք , գետ-
հաբանձոր , կարագ և թէյ : Օր . Արագէլլայ , իրաւի
բրիտանական եռանդով , որ շտա զուարձալի էր ,
կարար կ'պատրաստէր , և Հէրի այնքան ճարովիկու-
թեամբ զանոնք կ'կլլէր : Մարդրիտ մեզի հետ դրե-
թէ բոլոր օրն անդիմիքն խօսելով խազաց : Մայրի-
կը կ'ըսէ թէ այս մէկ օրուան հանգիւարը մէկ ամիս-
ուան զաստութենէն աւելի կ'արժէ , մենք ալ ա-
նոր համամիտ ենք :

Ինչ կ'ուզեն թոզ ըսեն , ժամանակից խազալով
շտա աւելի շուտ կ'անցնի քան թէ աշխատելով՝ և

առնելու շատ զարմացանք երբ ձաւի ժամեր հասաւ, զերջը իրարժէ բաժնուելու ժամեր :

Հերի և եռ զիրար դրկելով մետս բարեւ ըսինք, Մարգրիտ անոր ձեռքը սիրալիյր կերպով թոթուեց :

Իրիկուն մայրիկը կ'ըսէր հօրս . այս խոճքը լսեցի բայց մի կարծէք թէ ականջ զրի, քաւ լիցի :

« Հաւասարի եր՝ որ եթէ մեր զաւակներն ամսում մը միայն անզլցու մնան, շատ լաւ պիտի խօսին :

— Ես ալ այդպէս կարծէմ . բայց . սիրելի Անես, զուն որ կաշվից մը կարելու համար անդամ ծախսքէն կ'զախնաս, ինչպէս չես մնանք եր որ ինչ մեծ ժամաք պէտք է ամբողջ ընտանիքի մը համբորդութեան համար :

— Ամենեւին, Դէորդ, Հենրիկ և Մարգրիտ, միշտ պիտի յիշեն այդ ուզեւորութիւն, շատ բան սիրուի շահնին, և առբիներ խակ անցնին անզլիքէնը երեսի զբայ չափանի թողուն, ինչպէս որ շատ անզամ կ'որատահի երբ մշկը օտար լեզու մը սորին :

Հայրիկ, պիտինը դարձնելով՝ պատասխան արուելու :

« Այդ բանին զրայ մնանք ելու ժամանակ ունինք : »


Աւազեցի շուտ մը քրոջա ըսի բոլոր լսածու, խընդուելով որ գաղտնի պահէ :

Անզլիան երթալու յոյսով ուրախութիւնէս կ'ըթուէի : Մարգրիտ աւելի անսարքեր էր : Քանի կ'մնանք եր որ ծովի սիրու անցնէր կ'սուսկար նաև կ'ըսէր :

« Աւելի աղէկ ունիմ երթալ, երբոր մեծ համար : »

Սակայն Անգլիոյ աշխարհացոյցը բոլորովին մեր
ուշադրութիւնը զրաւեց : Խակ ևս ճարպիկութեամբ
հարցումներ կ'ընէի օրիորդ Արտավէլլային իր հայրե-
նիքին զրայ : Պատասխան տարու համար ծանրէն չէր
քաշէր , ես ալ Մարզրիափն աշք ունկ կ'ընէի :

Այս խորհուրդն մեր միաբր սրաշարեց շարունակ
ութ օր , և սրովշեառեւ մայրիկը խօսքը շէր ըներ :
վերջապատճառ մենք ալ բոլորովին մնացանք :





ԳԼՈՒԽ ԺԸ.

ՀԱՅՐԻԿԻՍ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

Ուզեսրութեան տեղ մեծ արագմութիւն մ'ունեցանք . յանեկարծ հայրիկս հիւանդացաւ : Ո՞ւ ինչպէս տունը տեղը սուզը պատեց : Մայրիկն ալ մեր հոգը շիբ տաներ : Հազիւ թէ զինքը կ'տեսիւնք : Այլ և այլ խազեր կ'հնարիին որ մեզ սփոփեն : Հնարիին հետ դուրս ելած օրերս հեռաւոր տեղեր պառայաներ կ'ընէինք , բայց չի ինք կարող զրօնեւ , միւտ հայրիկին վրայ կ'մտածէինք :

Բժիշկը օրը երեք անգամ այցի կ'գար , ամեն բարեկամ և ազգական իր առաջնութեան վրայ լուր կ'հարցնէին : Օր մը մօրս մէկ պատաւ բարեկամունին , ժարտին տէ բլանի (հասարակային բարաստակի) մէջ , մեր առջեւ ելաւ , համբուրելուվ մեզի , ըստ , խեղճ փոքրիկներ , և Պ. Հերտանին նշան մ'ըրտւ , Մարգրիտ սկսաւ լուլ :

« Հայրիկը պիտի մեռնի , բայտ ինձ կամացուկ մը : — Ոնկարելի է , քոյլ իմ :

— Ուրիշ հայրեր շատ անգամ կ'ձեռնին , կորելիի է մեր հայրիկն ալ մեռնի :

Բարեբազդաբար պարոն Հէրսանի միտքն ընկաւ մեզի յարդարի թուշունները ցոյց տալու :

Այն առեն Մարգրիտ լացը կարեց և շատ հաճայք զգաց , վասն զի զեղեցիկ թուշուն մը տեսներ . լու համար մզոն մը տեղ կ'քալէր :

Շատ ուրախ էի , վասնզի քրոջա վիշտն անցած էր , բայց այն ինկան գէմքն և խօսքերը շարունակ միտքս կ'գային : Կ'մասածէի թէ արգեօք մայրս որ շափ դժբազտ պիտի ըլլար , նոյնալէս մենք ամենքս : Աեւ հագուստներ պիտի հագնէինք , շատ պիտի լայինք և վերջապէս անհայր պիտի մնայինք : Իմ հընհընուքս պարոն Հէրսանի յայտնեցի : Շատ զարմանք զգաց , բայց մեծ մարդիկ միշտ փոքրերը կ'միշիթարեն :

« Իմ փոքրիկ բարեկամո , շատ անգամ մարդիկ կ'ցաւին այն բաներուն համար որ երեխք չեն պատահիր : Հայրիկդ կրնայ շատ ծանր հիւանդ ըլլալ , և չ'մեռնիլ : »

Յիշեց ինձ մեր մէկ ազարակապանն , որ երկու ամսի շափ տեսնդ ունեմ , իսկ հիւմակ տատ մզոն տեղ հետքուան կրնար քայել :

Բայց ինչ որ ըստ ինձ ուրոն Հէրսան , իրուս միսիթարանք , այնքան շազդեց իմ պրայ որքան մեր ազարակապան ծերունի Յակոբին պատմութիւնը :

Պարոն Հէրսան յարեց թէ պէտք էր աւելի խելք ըլլալ և որոտվին ազօթել Աստուծոյ , որովհետեւ

Աստուած բան մը չի մերժեր այն աղոց որ իրենց
ծնողքն շատ կ'սիրեն :

Այն տաեն ըսի Մարդութիւնն թէ պարտաւոր ենք
աւելի խելօք ըլլալ :

Մեր առառուան աղօթքին ետքը՝ շատ անգամ
կ'աղօթքինք և երբեմն աղօթքներ կ'հնարինք : Օր
մը մայրիկն եկաւ և մեզ գտաւ կատէրինի սենեակն
ծուեր դրած, ինքն ալ մեր մէջուեզր նստաւ, եր-
կուքս թեւերուն մէջ սեզմեց առանց բառ մ'ըսելու :
Ո՞հ, որշախ գեղեած էր մայրիկն, համբուրեց մեզ
և շուտ մը գնաց :

Ամիս մը կար որ հայրիկն չէինք տեսած, երբ որ
մը, ճաշէն ետքը, մայրիկը դուռը բացաւ և նշան
ըրաւ մեզ որ ներս մտնենք :

Հիմանկ պիտի կարծէք թէ խենիթի ովէս ներս
վազեցինք, բայց ոչ, կամացուկ մը կ'քալէինք, եւ
սակայն մեր սիրտը սասատիկ կ'զարնէր :

Հայրիկն անկազինն էր : Իր մարտրը այնքան
երկնցած էր որ զինք չէի հանչեար : Բայց երբ
խնդալով մ'ըսաւ, Բարի բիշու, փոքրիկ զաւկներս,
քիչ ատենէն պիտի առողջանամ : Անօիթապէս նոյն
հայրս գտայ : շուզեց մեզ զրկել, անշուշտ վախ-
նալով որ իր հիւանդութիւնը մեզ չտայ : Մայրի-
կոն բառ որ հայրիկն տեղ ինք պիտի համբուրէ
մեզ, իր ծունկերուն զրայ տաւ և շատ ու շատ
սկաշիկներ տուաւ մեզի :

Հայրիկը խմելիք ուզեց, Մարդութ ելաւ որ թէյն
ինք տայ : մայրիկն ալ թողուց որ տայ : Հայրիկը

կ'իսնդար նայելով որ Մարգրիտ զգալի ինչպէս ըլ-
նորհքով կ'գարձնէր :

Մարգրիտ բարձի մը վրայ կոխեց և բաժակը
հայրիկին տռւաւ : Հայրիկը խմելէն ետքը՝ ըստ որ
քոյրս շաքարն աւելի շափով կ'զնէ քան թէ մայրս :
Եւ Մարգրիտ հաւատաց : Ես լաւ հասկցայ որ քը-
րոջս ուրախութիւն պատճառելու համար ըստ :
Տաս վայրիեածին եաքը մեզ սենեկին դուրս հա-
նեցին :

Այն օրէն հայրիկը երիտալով կ'առազգանար : Ա-
ւելի երկար կ'մնայինք իր սենեկին մէջ : Մարգրիտ
հրամանեներ կ'առար , պատճութիւններ կ'սպառմէր :
Եստ անգամ կ'պատահէր որ հայրիկը կ'քնանար ,
Մարգրիտ իր խօսքը կ'չարունակէր միշտ , մայրիկին
և . . . թերեւս իրեն համար :

Վերթապէս մեր զթամիրան հայրիկը բոլորովին
տողջութիւնը դառաւ : Ի՞նչ մեծ ուրախութեան
օր եղաւ տան մէջ : Սպասառորները մեզէ աւելի
ուրախ կ'երեւէին : Պարոն Հերան որ միշտ ամէն
բանէ բարոյական կ'հանէր , ըստ ինձ .

« Կ'նայիս , տղաս , ինչպէս բարի տանտէրներն
սիրելի են իրենց սպասառորներուն : »

Ես ալ խօսք տուի պարոն Հերանի որ բարի տան
ալի մը բլամ :





ԳԼՈՒԽ ԺԹ.

ԵԱՅ ՄԵ ՀԵՑԱԳՐԴՐԱԾԱՐՁ ԲԱՆԵՐ

Հէրին արձակուրդի օրեր կանոնաւոր կերպով
մեր տռոնը կ'զար : Հայրիկին հիւանդութեան տ-
տեն զինքը չտեսնելու մեծ զրկում մ'էր ինձի հա-
մար : Սակայն, եթէ սովորականին ովէս զար, չեմ
կարծեր որ կարենայի հետը խաղալ, վասն զի չտա
արտում տիսուր էի :

Ինչպէս ամէն բան գոյառուեցաւ մեր տան մէջ
երբ հայրիկն իր բոյժը զտաւ : Զիաւոր սպաներ կը
զային և հայրիկն անոնց հետ զուրս կ'ելնէր : Ժար-
տին տև բլանոյի մէջ մեզ պատահած բարի կինը ի-
րաւունք ունէր արտում ըլլալու, երբոր մեզ կը
համբուրէր : Եթէ հայրիկն և մայրիկը շըլլան տունը՝
աշքին բան մը չերեւիր : Օ՞ն, ալ չեմ ուզեր արրա-
միլ : շատ գո՞ն եմ :

Մոռցայ ըսելու ձեզ որ իմ Հէրի բարեկամն զը-
ծազրութեան համար զարմանալի յաջողակութիւն

ուներ : Երբ փոքր էր և դեռ կարգալ ու զրել չեր զիտեր , կ'նեկարէր վագրեր , ահանի առցւծներ , ծառաւի պարտէզներ : Հիմակ կ'գծազրէ մարդու զլուբներ մեծ մօրուքով , և սիրուն դաշտանեկարներ : Այս տեսնելով ես ալ ժամանեցի ժամանու , և ան ալ հաւանութիւն տուաւ , և ինձ դաստան մը բանեց որ զուարձանամ , և կարելի է ուզեց փորձ մ'ընել որ հանգարտ մնամ : Հայրիկն ըստ որ զինուորականերու համար շատ օգտակար է գրծագրութիւնը : Եաւ ուրախ էի որ մատիտակալներ , ու մատիտներ և զրապահ մ'ունէի , նաև հացի միջուկ որ սրբեմ գծածներս , և այս միջտ սիրանի է :

Ես Հէրիի պէս գծազրութեան խենի՛ չեի : Բայց վարժութիւն կ'ընէի զուարձանալու համար . Մարգարիտին պատկերը կ'գծէի , թիւպէս , բարեւոփու պառաւ կին մը կ'նեկարէի , քիթը մէկ կանգուն երկայն և թերանը մինչեւ ականջները : Յետոյ այս զաւելչուական գծազրին տակ կ'գրէի . Մարզրիտին պատկերը :

Եաւ կ'սիսալիք եթէ կարծէք թէ քոյրո կ'բարկանար , ընդհակառակն իզմէ աւելի կ'ծիծազէր :

Մհ . պէտք է զիտեաք , որ Մարզրիտ , միջտ վորբիկ սիրուն աղջիկ մ'եղած է , նոյնովէս ուրախ զուարիթ և կամարար . Հիմակ որ կ'ակսի քիչ մը մեծնալ , տարսելոց շունիմ որ սիրահ ախործի եթէ կարելու տազանողը վարձեմ :

Մակայն կան ծաներ բաներ , որոց մէջ իր ան-

կարողութիւնը կ'իսոստովանի . ինչպէս անցեալ օր սանդղին բազրիքէն վար տահելու միջոցիս . ճըռթ . . . ճըռթ . . . և ահա տարածու կը պատոի : Բայց և այնպէս , երբեմն այնպիսի զիսգուածներ կ'պատահին , որոց համար Մարգրիտին տաեղն իմ գործիս շատ կ'զայ : Իմ տեսրակներս կատէրինին պէս կը կարէ , միայն շատ կ'վախնամ որ իր մանր մատուքները չնակեծիէ , ուստի կ'օգնելով իրեն երբ անզը մզելու . և քաշելու պէտք ըլլայ :

Շատ ատեն կայ որ Լեւոնին վրայ խօսած չունիմ ձեզի հետ : Թողուցեր էի որ մեծնայ : Անշուշտ ուրախութեամբ պիտի խօսնար որ շատ սիրուն չարածնի մը կ'երեւի իր բազէնով : Գլուխը ծռելով մեզի բարեւ տալու ձեւը շատ կ'զուարձացնէ մեզ : Կ'զրկեմ զանի և հետր կ'խաղամ :

Մասձեցէք միանդամ որ ես ալ Լեւոնին պէս ժողոր եզած եմ , հօրս պէս պիտի մեծնամ , և պիտի ծերանամ հօրեղրօրս պէս , որ հովանոցամեւ ցուպ մը կ'բռնէ ձեռքը :

Հիմակ պիտի պատմեմ բան մ'որ այնքան պատմաւոր չէ , ինձի համար , բայց հոգ չէ , մինչեւ մերջը անկեղծ պիտի ըլլամ : Փոքրիկ եղրայրու առելի հնազանդ կ'երեւի քան զիս , երբ իր տարիքն ունէի : Կ'հիմանամ այդ փոքրիկ սիրուն Լեւոնին վրայ , երբ իր հետ կ'խաղամ , արդէն փիլիսոփայի պէս կ'վարուի : Առջի օր՝ մօրս ծունկերուն վրայ դըրուած Աստուածաշունչի մը պատկերը կ'նայէր , ինչպէս Մարգրիտ և ես կ'նայէինք՝ երբ գեռ փոքրէնիք : Այն ինչ հասաւ այն է՞ն , որու մէջ Ադամ

ու Աւագ դրախտելն զուրս կ'զննառաւէին , մայրիկն անոր բացատրեց թէ ինչ էր անոնց անհետպանդութեան պատճառը : Աւոն մատը պատկերին վրայ դրաւ : Երեսը կախեց և քառ .

« Մայրիկ , եթէ ինձորք ճաշէն եաք ուտէին , անշուշտ այն ազւոր պարտէզէն զուրս չոփափի վրալուտուէին , այնպէս չէ : »

Արդ՝ Աւոնին հրաման չկար ճաշէն եաք պտուզ ուտել , և ահա այս արգելքն պահելով անդամ՝ իմ փոքրիկ եղբայրս անկից բարոյական դաս մը հանել ուզեց :

Սակայն մեր պարոն Աւոնը միշտ այսպիսի անաշառ ոկզբունքի տէր չինաց , մահաւանդ տապեթանի մասին : Ուստի որ մը չգիտեմ ինչպէս կծիկը կ'զնէ և կատէրինին քովին կ'հեռանայ : Ասդիս անդին ամէն կոսք կ'փնտռեն , կ'կանչեն՝ Աւոնն , Աւոնն , բայց պարապ տեզը : Դայեակո կ'սկսի հոգ ընել : Աղէկ միտքն ինեկաւ որ մինչեւ խոհանոցը գնաց որ զանի օնտուէ : Խնչ տեսնէ ազէկ , մեր պարոն Աւոնը բաց գարանին առջեւ ծունկ չոքած՝ կ'ժառանք սապեթանով լի պիսակի մը և կ'ջանար իր փոքրիկ ձեռքը դդալի տեղ անոր մէջ գնել : Կատերին հազիւ կրցաւ սապեթանին անուշ համեն հեռացնել փոքրիկն , և այս շահատակութան հետեւանքին վրայ մասածելով՝ շատ անհանգիստ կ'լինէր , երբ եղբայր այս խօսքն , — չկերայ , չկերայ . . . զինքն հանգարանցուց :

Գուն եմ որ քոյր մ'ունիմ , բայց նոյնչափ ուրախ եմ որ փոքրիկ եղբայր մ'ալ ունիմ , որու անդրա-

նիկն եմ։ Այդ փոքրիկը կ'մեծնայ, խակ եթէ չորս
տարու աւելի մեծ եմ, բաւական շատ է։ Պատի
կրնամ օգնել անոր որ զաները սորտի, պիտի ը-
սեմ անոր թէ ես ինչպէս կ'ընէի երր փոքր էի։
Ճշմարիտ է որ զիրար պիտի սիրենք, եթէ ուզէ
ինքն այ զինուարական ըլլադ, իմ վաշտիս մէջ պիտի
առնում զանի։

Եթէ իմ բարեկամն Հէրին հըլլար, ձմեռը ինձ
շատ երկար պիտի երեւէր, Պարագ անզը կ'զովիքն
աչք կապուկի անուշութիւնը և հանդարու խաղերը,
չկայ ինձի համար աւելի տիտոր բան մը քան թէ
սենեկի մը մէջ գուակուած մնալը, թող թէ շատ ան-
գամ այ վորձանք մը կ'հասնի, ինչպէս, կանթեզ
մը վար կիյնայ, ապակի մը կ'կուարի, և մանաւանդ
շարունակ մոտրդ կուակին մօտենալու և վիճելու վա-
փաքը կ'ունենայ։ Ակամայ անհնազանդ կ'ըլլաս և
սաստ կ'ըսես։ Ամառը աւելի զուարթ եմ քան թէ
ձմեռը, երր անձրեւէր, և սուզիւ լիօնի մէջ սոէպ
կ'անձրեւէր, Պարոն Հէրսան մեզ պառոյտի խոստում-
ներ կ'ընէր որ զուարճանանք։ Օր մ'որոշեց որ մօ-
տակայ գիւղն երթանք, ուր ընտիր պանիր կար։
Այս առթիւ զիճարանութիւն մը ծագեցաւ պարոն
Հէրսանի և օրիորդ Արագէլլայի մէջ։ Այս վէճէն
առ իմացանք, Մարդրիտ և ես, որ Զէսթէրի գա-
ւառին մէջ երեսուն երկու հազար կոտ կ'զանուի,
որոց կաթը ամէն տարի 11500 տակառ պանիր կ'ար-
տագրի, և ամէն մէկ տակառ 23780 անեղիսկան
լիտր կ'պարունակէ։ Բայց Մարդրիտ քոյրս բնաւ
պանիր շարեր։ Հիմակ պիտի ըստմ պատճառը։

Փոքրիկ մանրադէտ մ'ունինք , զիսէք անչուշտ
թէ ինչ է . ապակի մ'որ առարկաները խոշոր կը
ցուցնէ : Քոյրս և եռ շատ անգամ այս փոքրիկ ման-
րադիտակին մէջ , զրունլու համար , մանր անքեւներ ,
ձաններ , մամուռի կտորներ , մազ մը կ'գնէինք ,
և այս առարկաները կարգէ զուրս խոշոր կ'երեխի :
Մարզրիտի մազին մէկ թել առատանի շաբի հաստ
կ'երեւի : Օր մը ճաշի ժամանակ , սպանիրի կտոր մը
զրինք մանրադիտակին մէջ : և ինչ տեսնենք ազեկ :
Օճ մը : Մարզրիտ ճիշ մ'արձակեց և անկէց ետքը
չուզեց բնաւ սպանիր ու տել : Երբ եռ սպանիր ու տեմ
հետը իշնալու համար կ'ըսեմ : « Քոյր իմ , օձերը
զմայլելի են , կ'ուզես քիչ մը ճաշակել : » Մայրիկը
քիչ մը կ'սաստէ զիս :

Զէք կրնար երեւակայել թէ որքան զուարձալի է
մանրադիտակի մէջ նայիլը : Փոքրիկ ծաղիկներուն ,
նոյնպէս ճանձին թեւերուն և խոտի չիզերուն բո-
լոր գաղտնիրը կ'տեսնես : Պարոն Նէրսան իրաւունք
ունի : Առառած շատ գեղեցիկ բաներ ստեղծեր է :

Քիչ շատ իմացաք թէ ինչպէս կ'անցնենք ձեռոց
հիմակ որ մեծցանք :

Շատ անգամ շագանակի և շաբարեզէնի համար
խազեր կ'խաղանիք : Նայրիկը կ'ըսէ որ այս կերպով
շատակերներ սիստի ըլլանք : Մայրիկն աւելի կ'սիրէ
փոքրիկ շատակերներն քան թէ փոքրիկ ազահները :
Մայրիկն ազահներն կ'ատէ : Ոհ , ստուգիւ որչափի
բարի է :

Մարզրիտ կ'ըսէ միշտ , ևս կ'ուզեմ մայրիկին
հոմանիլ :

Հայրս իրաւունք ունի , ես ալ բոլորովին միտքս զրած եմ հօրմէս որինակ առնուլ , որ կատարեալ մարդ մը պիտի ըլլար , եթէ զենք կանուխկէկ պատկելու չի զրկէր : Աղեղի միտքս եկաւ . կ'յիշեմ խենդութիւն մ'որու համար կարելի է ներոզամիս ըլլալու իրաւունք մ'ունենաք :

Նախ պէտք է գիտեալ , որ պարոն Հերսան իր փողպատը կապելու համար շատ ժամանեալ կ'անցեէ . արդ՝ զօրահանդէս մը տեսնելու պիտի երթայինք :

Սրահին մէջ մինակ էի , միտքս դրի ժամացոյցը յառաջ տանիլ : Փոքրիկ ամեռուակի մը զրայ կ'ելեմ , կ'բանամ ժամացոյցը և առեզր առաջ կ'քշեմ , բայց , ինչ յուսահատական բան , և ահա հին ժամացոյցը կ'ակսի զարեել : Ամիսն տռաւ զիս , հնհնուքի մէջ էի :

Նախաճաշիկէն եաքը , մայրիկն ըստ . և Ատենը որչափ ուշ է :

— Ամենեւին , սիրելիս , ըստ . հայրս զրափահէն ժամացոյցը հանելով՝ մեծ ժամացոյցն է որ երեք քառորդ առաջ կ'երթայ :

— Անկարելի է , Գէորդ :

Կաս կարմիր կարեցայ :

« Անշուշտ ապաստոր Պետրոսն ժամացոյցին մատ գոզուցած պիտի ըլլայ :

— Զէ , հայրիկ , ես ըրի :

— Եւ ինչու համար ըրիր , պարոն :

— Որոք ո զի պարոն Հերսան ուելի շուտ հազ-

Չանգակը զարդին , հայրիկը շուտ մը դուրս ե-
լու , կինդար :

Մայրիկը բնաւ չխնդաց , այլ հրամայեց որ ու-
րիշ անդամ յնաւ ժամացոցին չգոպչիմ որ և է պատ-
ճառի համար , ազաւ յարեց .

« Կ'ներեմ քեզ , ազաւ , ինչու որ ճշմարիտը խօ-
սեցար . և աղեկի ըրիր , ազաւ թէ ոչ զօրահանդէս
չպիտի Երթայիր : »

Միշտ ճշմարիտը պիտի խօսիմ :

Մեծ եղաւ ուրախութիւնս երբ աեւաց որ հա-
զուսաներս կարձնալուն , փոքրիկ ազաւ մը տուին :

Բայց այս պարզ եւն ոչ այսպէս կ'ընէին : Խեղճ
ու բարի զործաւորի ազայ մը կ'ընարեն , կատէրին
աղեկի մյու զրան զլուխու կ'մաքրէ , մայրիկը ձեռքովք
մազերը կ'կարէ , ազան կ'հազցնեն , անոր կերա-
կուր կ'տան , բայց մեկնելը առաջ մայրիկն կ'ըսէ
անոր որ ազտոտ ազգացքը շահրեց , և եթէ լաթերն
ազտոտէ , յաջորդ տարին ուրիշ ազաւ մը պիտի տան
հազուսաներս :

Օր մը սասաիկ կ'անձրեւէր , չզիտէինք ինչ ը-
նել պէտք էր զուարձանալու համար : Հայրիկը դուրս
ելէր էր , անոր սենեւակը կ'մանեմ , նոր ածիկուեր
էր : Աձառի խոզանակն առի , երեսներս աղեկի մը
առարկնեցի , այնովէս որ մինակ երկու աչքերս կ'ե-
րեւնային : Մարզրիտ շուտով եկաւ զիս դառ :

Եստ մը խնդալէն ետեւ՝ իմ դէմքու տեսներով ըստ
ինձ .

« Եզրայր իմ , տօնավաճառի մը մէջ աեւաց կա-
պիկ մ'որ փայտէ գլուխ մը կ'ածիկէր : Խնդրեմ ,

թող տուր ինձ որ ածիլեմքեզ , չեմկարեր երեսդ .
փոքրիկ դանակս ածելիի տեղ պիտի գործածեմ :

Այս գաղափարը սբանչելի էր , այնովէս չէ սի-
րելի ընթերցող : Առաջի քրոջս առաջարկը ընդու-
նեցի : Երբ սիրելի Մարգրիտ իմ հաւանութիւնն
առաւ , սրփիչ մ'անցուց վիզէս : առարկեց թէ ա-
ճառը բաւական թանձր չէր և գլուխս բռնեց :

Թիթս աճառով լեցուն էր , ստիպուեցայ գոցել
բերանս և աշքերս ու ինքզինքս փոքրիկ քրոջս ձեռ-
քը յանձնել : Աերջապէս երբ աճառով լաւ մ'երեսս
չփեց , իր փոքրիկ դանակն ձեռքը առաւ և ակառ
աճառը հանել : Պէտք չունիմ ըսելու որ քանի մը
անգամ քիթս կամթեց և աճառ քուց մօրուքիս այն
կոզմերն որ հասաւ էին :

Այս գործոզութեան ժամանակ կատէրին վրայ
հասաւ : Միթաղելով գուրս վախանկ :

Գործը մօրս ականջը հասնելով , արդիլեց զիս
հօրս սենեակը մանելու : Այդ բանն իմ հաշակիս
յարմար չէր , վասն զի սովոր էի հայելիին մէջ նա-
յիլ . քիչ մը մաքրուիլ և քիչ մը հոտաւէտ ջուր
դնել թաշկինակիս :

Զարմանալի է թէ ժամանակը ինչոքս շուտ
կանցնի՝ մինչև անգամ կրթութիւներ ընելու միջո-
ցին : Զմեռը նորէն կ'անցնէր և մայրիկն արդէն
զիւղ երթալու խօսք կ'ընէր : Դիւզն , ո՞հ , որշափ
գեղեցիկ է , զրօսալի և հանգիստ : Թէ և մայրիկը
միշտ շատ պարզ կերպով կ'հագուեցնէ մեզ , բայց
զիւղն շատ առելի պարզ կ'հագուինք : Ինչույժու
որ եւ , այնովէս գուրս կելնես պարտելու . գաւա-



Եր փոքրիկ դանակն ձեռքը տուած . . . Եր . 156

զանդ կ'առնեու և ոչ ուրիշ բան :


Օրերը կ'համրէինք , այն օրը որ մեզի շատ հեռու
կ'երեւնար , վերջապէս հասաւ :

Կառքը ծրաբներով ծածկուած էր : Հայրիկն ու
մայրիկը մեզի շափի գոհ էին , այնպէս , ամենքը
գոհ էին , բայց ՚ի Հերիէն , որու սիրուն ելաւ , երբ
անդլիարէն մենաք բարե ըստ մեզի :

Ամենեին մարէ շանցեիր , թէ ի՞նչ սիսոյ սրասա-
շի :

ՀՐԱՄԱՆ

ԱՌԱՋԱԾՔ ՎԻՃԱՎԻ ԱՌԵՎԱՐԱՐԻ





ԳԼՈՒԽ Ի.

ԸՆԹԵՐՑՈՂԸ ՊԻՏԻ ՎԵՏԱԿԱՑ

Աերթապէս կ'հասնինք , առեն կողմ կ'զազենք ,
բարե եղբայր Պետրոս , բարեւ պարոն Յակոբ ,
բարեւ Մարթա , վերթապէս բարեւ ամենուն :

Եթէ մէկը ինձ ըսած ըլլար որ այս հետաքրքրութեանս գործը կրնար զիս գժբաղդ ընել , չպիտի հաւատայի : Անդադար աշքիս առջև կ'գար ըրածս և աւելի կ'վախնայի : Վերջապէս չդիմացայ , Մարզրիտը ծառուղիին ծայրը տարի , ըսելով թէ գաղանիք մ'ունիմ իրեն հազրողելու :

Վոյրս կարծեց թէ մայրիկին համար համելի բան
մը կ'պատրաստեմ : Պատմութիւնս , լսեց ըրուկի
պէս կարմրեցաւ , որպէս թէ ըրած խնդութիւնս
իրեն կ'զաշէր :

Ոհ . ըստ Մարգրիտ , առանց բնաւ ճամբոր-
դութեան վրայ խօսելու , արդեօք որչափ կ'ցաւիս
այդ ըրածիդ վրայ , այդ շատ գէշ բան է Հէն-
րիկ , եթէ ես քու տեղդ ըլլայի , շատ մը կ'երթայի
և յանցանքս հօրս կ'խռատովանէի :

60

Կ'ուզե՞ս որ զիս կշտամբէ՞ :

ՄԱՐԳԻՏ

Եղբայր , հոգ չէ , վերջէն սիրտդ պիտի հան-
դարտի , որքան անշահ բան է հետաքրքիր ըլլայլ :
Մանաւանդ որ հայրիկին ու մայրիկը միշտ առջեւ
կ'խօսակցին և եթէ մեզմէ բան մը կ'պահեն , պէտք
չէ որ հասկնալու ջանանք :

Մարգրիտին խօսքերը սիրտս թունդ հանեցին :
Եւ իրեւ միակ սփոփանք քուրիկս կ'յորդորէր զիս
որ երթամ սաստ լսեմ : Այս ևս ըսեմ , որ բնաւ չէր
խնդար իմ ըրած զիւտիս վրայ :

Սակայն երկար բարակ առանձին մտածելէն
ետքը , միտքս զրի Մարգրիտին խրատին հետեիլ և
յանցանքս մօրս յայտնել . որ անտարակոյս հօրս
պիտի ըսէր խնդրելով որ չպիտնալու զարեկ :

Ուստի յարմար ժամ մը գտայ , երբ մայրիկն

առանձին էր և հրաման մը խնդրելու պատրուական ներս մտայ :

« Ի՞նչ կուզես , սիրելի տղաս :

60

Անշահ պատմութիւն մ'ունիմ քեզի պատմելու : Եւ առանց աչքս վեր առնելու , ուսքի վրայ մօրս առջևը կանգուն , յանցանկս ըսի՝ առանց բան մը պահելու :

ՄԱՅՐԻԿ (Զարժացմամբ)

Հաստ անկարգ գործ մ'ըրեր ես , տղաս , բայց երբ յանցաւորը ինքնին կ'առասովանի , ըսել է թէ յանցանքին ծանրութիւնը կ'զգայ : Ուստի չպիտի յանդիմանեմ քեզ որդեալ , այս միայն կ'ըսեմ որ ոչ միայն հայրդ կրնար յանկարծ վրայ հասնիլ , և չատ ծանր կերպով պատժել քեզ , այլ նաև վախ կար որ մեր սպասաւորներն քեզ տեսնեին : Ի՞նչ կարծիք ովտափ ունենային իրենց փոքրիկ տիրոջ զբայ :

Նրբ կ'ժամփարիս բան մ'իմանալ , տղաս պէտք է որ մեզ հարցնես : Եթէ յարմար տեսնենք հարցմանդ պատասխանը կ'տանկք :

Մայրիկը (որքան բարի է) համբուրեց զիս , ըսելով նաև թէ լսա գործ մ'ըրի , որ յանցանքս մուցնելու պիտի օգնել :

Այսուհետեւ այնքան կ'վախնայի հետաքրքիր ըլլալ , որ շատ անգամ ականջներս կ'զոցեմ և կ'եր-

գեմ երբ տեսնեմ հայրիկն ու մայրիկը որ միատեղ
կ'խօսին

Այս դէպքին վրայ խօսք չեղաւ, միայն կյլիէի
Մարգրիտին հետ, որ կ'հանդարտեցնէր դիս ըսելով
թէ հայրիկս բան մը չգիտէր: Ես այնպէս կ'կար-
ծեմ որ մայրիկն ամէն բան կ'պատմէ հայրիկին մի-
այն որոշած են որ հայրիկը մեծ յանցանքնե-
րու համար յանդիմանէ դիս և փոքրերու համար
մայրիկը:

« Ըստ Մարգրիտին :

Ի՞նչ ձամբայ կ'բռնես այդպէս միշտ խելօք ըլ-
լալու համար : »

— Եղբայր իմ, միշտ կ'ջանամ որ հայրիկին ու
մայրիկին հաճելի ըլլամ: Առառու ազօթք ընելու ա-
տենս՝ ինքնիրեն կ'ըսեմ, կ'ուղեմ շատ սիրուն և
շատ բարի ըլլալ, և իրիկուն, օրուան մէջ ըրած-
ներս միտքս կ'բերեմ, և երբ տեսնեմ որ խոստում-
ներս չեմ կատարած, երկրորդ օրը նորէն նոյնը
կ'կրկնեմ, և միշտ այսպէս, Հէնրիկ :

Միտքս կ'դնեմ Մարգրիտին օրինակին հետեւիլ
և շատ կ'աշխատիմ: Բայց է՞ն միշտ ան ինձի կ'յալ-
թէ: Աիրելի ընթերցող, միթէ չե՞ս սիրեր Մար-
գրիտը :

Հէրիի միակ հոգին էր Անգլիա դառնալ: Անդա-
դար հօրս կ'հարցնէր թէ երբ պիտի դայ այն օրն: Աշխարհացոյցին վրայ երթալիք ճամբան կ'նայէինք :

Անդամ մը Հէրի կ'ըսէր՝ թէ աշխարհիս ամենէ
գեղեցիկ բանն ծովն էր: Ես կ'պնդէի՝ թէ լեռնե-
րըն են: Երկու ագլոբներու պէս զայրացած էինք :

Հէրի թեթէ մը հրեց զիս , եւ աւելի ուժով հրեցի , և ահա մեր մէջ կռիւ մը սկսաւ :

Մարդրիտ նախ կարծեց թէ խաղ է ըրածնիս , բայց շատ շանցաւ վազեց որ շուտ մը օգնութեան կանչէ :

Երբ հայրս վրայ հասաւ , խելոյն հանդարտեցանք : Ես սկսայ խօսիլ որ կռուին պատճառը իմացնեմ . իմ ճարտարախօսութիւնս հօրս քըքիչը գրգռեց : Ականջս քաշեց ըսելով :

«Դու կուրօրէն կ'խօսիս , վասն զի բնաւ ծովը տեսած չունիս : Պարոններ , դուք երկու վորքիկ խեւեր եք , Աստուծոյ ամէն գործերը գեղեցիկ են , և զարմացման-արժանին : Հէրի կ'կարծէ անշուշտ թէ իրեն մեծ պարծանք կ'բերէ Ովկիանոսն որ իր երկրին չորս կողմը կ'պատէ , և դու կ'կարծես թէ Բանքը աւ Բելվու լեռներն քեզ կարևորութիւն կ'տան :

Ո՞ն . առաջուան պէս լաւ բարեկամներ եղիք , ամենքս միասին մինչև Բարիզ պիտի ընկերանանք Հէրիին : »

Այս լուրը ըսելով , բարեկամիս թեերուն մէջ նետուեցայ , և զգացի որ մեր ճակատամարտէն ետք զինք աւելի կ'սիրեմ :

Մարդրիտ շատ ուրախ չէր , խել կատէրին՝ բնաւ եթէ մայրիկը դայելիս խօսին հաւատար , ամենեին մեր տեղէն շարժելու պէտք չէր : Քաջ զիւտեմ որ շատ ծրարներ կան , և այնքան ախորժելի բան չէ սնտուկներ պատրաստել և պարպելը : Բայց , ի՞նչ օգուտ :



Երկու արլորներու պէս զայրացած . . . Եր 216

Եաւս անգամ զարմացած եմ մօրս համբերութեան վրայ Կատէրինին ընթացքին համար : Այս զարմանքս Մարդուտին յայտնեցի . ան ալ ըստա .

«Եղբայր իմ, շատ իրաւ է : Երբ շատ փոքր էինք, դպրեալիք մեզ կ'օրորէր բոլոր գիւերներ և երգերով կ'ափոփէր մեզ : Դու շես յիշեր անշուշտ . բայց մայրիկը երբէք չմոռնար :

Հոգս չէ, եթէ Կատէրինը սցկան շտիրէի շատ ձանձրոյթ պիտի տար ինձ :

Ահա, այս գրածս ազւոր բան չէ, բայց չպիտի սրբեմ : Չեմ ուզեր կարծել տալ որ բոլորովին կատարեալ տղայ մ'եմ : || հ', չէ', դեռ շատ անգամ սրտնեղութիւններ ունիմ : Կուզէի որ ստէոլ խելքիս փշածը ընեմ : Բայց մի՛ զախնաք, գիտեմ որ գէշ բան է, կարելի եղածին չափ ինքզինքս կ'զալեմ, և երբ անտանելիք դառնամ այն ժամանակ կ'զգֆամ :

Թէ և ուրախ էի որ տեղ պիտի փոխենք, բայց քիչ մը սիրտս կ'յուզուէր որ մեր այս գեղեցիկ զիւզէն պիտի հեռանայի . ծառերը պտուզներով ծածկուած էին և խոտերու գեղերը տարուան եղանակին մէջ կրկին կ'երեւէին : Պօղ և Նորիկ Բարիզի վրայ ինչ որ խօսեր էին յիշելու պէտք կ'զգայի որպէս զի միսիթարուիմ՝ գեղձերն և խաղողներն թողլուս համար, ինչու որ շատակեր եմ : Եթէ ընթերցողն ալ շատակեր է, պիտի ներէ ինձ երբ կ'զգայ թէ բերնին ջուրերը կ'զագեն : Տեղն է յիշելը հիմանի իմ տղացութեանո ժամանակ պատահած մէկ փոքրիկ դէպեր . չորս տարեկան էի, որ մը հօրըս մէկ լաւ բարեկամին տունն ընտանեկան մեծ

Հացկերոյթի մը գտնուեցայ : Մօրս քոյ նստած էի ,
և զլուխ կ'ըռնէի որ մեծ մարդիկներու մէջ կ'գըտ-
նուի : Մայրիկն ըսեր էր ինձ . « Թէ վոքրիկ տղայ
մ'ամեն բան ուտել պէտք չէ , պէտք է նաև մի
բանի բանէ զրկուիլ : » Կարծեցի թէ մօրս կարծի-
քը իրաւացի է , և քիչ մ'եւաքն անոր ականջին ըսի ,
« Մայրիկ , եզին միսէն շիերայ , հիմակ շեմ կրնար
ամեն բան ուտել : »

Ներէ ինձ շատախօսութեանս համար : Շատ
հաճոյք կ'զգամ հիմակ որ մեծ եմ , յիշել այս մանր
մունք բաները :

Ընդունայն զրօնելու կ'յանայինք Նէրի և ես .
Ժամանակը շատ երկար կ'երեւէր մեզ : Բոլոր մեր
խօսակցութիւնը համբորդութեան վրայ կ'գառնար :
Սակայն երբ հայրիկն ըստ թէ որոշած է զիս մին-
չև Անգլիա տանիլ՝ մեր ուրախութեան շագիլ լցաւ :
Նէրի սկսաւ խենդ ու խելառ բաներ ընել : Բոլոր
օրը Թամիզի շոգենաւներու և ծովէն բռնուելու
վրայ կ'խօսէր : Նիսցմամբ մարիկ կ'ընէի և ես իմ
վրաս հիմանալու , պատճառ ունէի , վասն զի ստար
երկիր պիտի երթայի և այն երկրին լեզուն զիտէի :

Այն օրէն ի վեր ֆրանսերէնն բոլորովին մէկ
կողմ դրի . անգլիարէն կ'խաղայինք , անգլիարէն
կ'ուտէինք , անգլիարէն կ'սիրէինք զիրար և անգ-
լիարէն կ'երազէինք : Ո՛վ որ այս կանոնէն չեզէր ,
գրաւ մը կ'տար : Երբէք գարժուհի մ'այնքան երջա-
նիկ եղած յէ՝ որքան օրիորդ Արագլլաս , բոլոր այն
օրերն որ այս նրիտանական քմածին հաճոյըը տես :



ԳԼՈՒԽԻ ԻԵ ·

ԵՐԹԸ · — ԲԱՐԻԶ

Վերջապէս թէ և Կատէրին դանդաղ էր , ամեն
բան կազմ՝ ու պատրաստ եղաւ , և ազգոր օր ժ'էր
երբ համբայ Ելանք : Նոյն իսկ Անոն ձեռքերը
լ' զարդէր :

Եարունակ մեր աչքն գլուխին և գեղեցիկ լեռ-
ներուն վրայ մնաց , մինչև օր անցայտ եղանք : Ան-
շուշա զայեակս Հէրիին զէմ սիմափ արտանշար ,
եթէ երրէք մէկն արտանջ մը կրնար հանել բեր-
նէն բարեկամիս զէմ : Անոր անուշիկ զէմքը կ'հաւ-
նէր , անոր զուարթ բնաւորութեանը , մանրազի պ-
ների , իր ձայնին շեշտն զինքը կ'ուրախացնէին :

Չպիստի յիշեմ թէ ի՞նչ հաճոյք կ'զգայ մէկը երբ
շողեկառը կ'մանէ և ստէոյ վար կ'իջնէ օր տեղ
փոխէ և ինքովներ մեծ բանի տեղ կ'զնէ . յետոյ ու-

զանատուն կ'մտնես ուզածդ կ'առնէս , կ'շտապիս և չնչապառ շոգեկառք կ'նետուիս . անշուշտ այս ամեն բաներն զգացած էք :

Եռւտ Բարիզ կ'հասնինք : Դժբաղդ արար չեմ կրնար իմ ուզելորութեան մասին զգացածս ձեզի պատմել , վասն զի՞ թէ և տաս տարեկան էի , մեր ժողովիկ Աւոնին օրինակին հետեւցայ , և երբ հասնէք այնպէս լաւ քննցեր էի որ հազիւ զիտէի թէ ուր եմ , իսկ միւս օրն արթիննալով կարծէի որ կ'երազեմ : Քիչ քիչ խելքս զլուխս եկաւ , և ուրախութենէս սկսայ ինձ սովորական եղած մէկ եղանակով մը պոռալ . Ենարիզ կ'գտնուիմ , Բարիզ , Բարիզ : » Յետոյ առանց հրաւէրի՝ ելայ վազեցի երկրորդ գատիկոնին պատուհանը : Պրայդօն պանդոկն էինք , Ռիվոլի փողոցը : Միրելի ընթերցող , եթէ Բարիզ եկած ես , անշուշտ այս գեղեցիկ փողոցէն անցեր ես , և կրնաս երեակայել իմ զարմանքս և ուրախութիւնս , երբ տեսայ գեղեցիկ պարտէզ մը ուր տղաք արդէն կ'խազային :

Պզսիկ մարդու մը պէս՝ ձիւն չհանելով պրաս զլուխս շակեցի : Կատէրին զեռ կ'ուզէր որ ինք կարգի դնէ , զիս բոհքուէ , ինչպէս ինք կ'ըսէր , բայց մայրիկը շատ ծաղրելի կ'գտնէ որ տանամեայ տղայ մը մինակը հագուիլ շգիտնայ : Իրաւ է որ ես շատ մաքրասէր եմ , մանաւանդ չափէն աւելի կ'ըսիրեմ ջուրը : Նատ անդամ կ'պատահի որ կոնքս կ'յորդի , և Կատէրին կրակ ու բոց կ'թափէ : Սարդրիտ շուտ մ'եկաւ իմացուց ինձ թէ ինք պատրաստ

էր և հայրիկը կ'ուզէր ազւոր օդէն օգուտ քաղեցով մեզ պարտելու տանիլ :

Պ. Հերսան զիւղը մնաց : Թէ և իմ ուսուցիչս շատ կ'սիրեմ , ստեղայն իր ներկայութիւնը շատ չեմ ժինառէր , սա իրաւացի պատճառաւ որ ուսուցիչ կ'նշանակէ՝ վերլուծութիւն , ընթերցանութիւն եւ : Թէ և վստահ էի որ մեր աշխատանքը պիտի դադրէր որքան ժամանակ որ հարիդ մնայինք , բայց ես աւելի հանգիստ էի տեսնելով որ Պ. Հերսան մէջմէ հարիւր մզոն հեռաւ է : Այս ապերախտութիւն չէ , այն բարի Պ. Հերսանն ալ ոլէ ոք որ ժամանակին լեռ ու ձոր ելնէ ու վաղվզէ :

Հերի արգէն հարիդ տեսեր էր , և դիտեցի որ քիչ մը կ'ընդ վիզէր , մեր տեսնելիք ազւոր բաներուն վրայ խօսելու տանեն :

Հայրիկն ու մայրիկ մեզի ոլէս ուրախ էին : Շատ հաճոյք կ'զգային մեր զուարթութենէն և մեր բացագանցութիւններէն եթէ մեր վրայ հոգ տանելու սովոր չինէին անշուշտ պիտի շփոթէին , վասն զի այն բարի հանդարտ կատէրին չուզեց բնաւ դուրս ելնել , մարդս խելքը պիտի թռցնէ կ'ըսէր , և անշուշտ ոտքը կամ ձեռքը կուրած տուն պիտի դառնայ : Միայն մեզի հետ մինչև Աէն-Ռոք եկաւ , և ստոյգ եղիք որ երբ Աէնդ-Շնորէ վողոցէն կ'անցնէինք՝ բնաւ հանգիստ չէր :

Չեմ զիտէր ինյու համար կ'մոռնամ պատմել ձեզ հասպիտաներու մէկ տեսարանը որ երբեմն այնքան գրգռէր էր զայրոյթու : Տիկին մը շատ աղացք

ժողվներ էր որ հասպիտներու մէկ խաղին ներկայ գտնուին , և այս շարաստէր անձը մեր ամենուն պատմութիւնը պատմէր էր : Ծառ մեծ անձարակութիւն էր այս իր կողմէ , վասն զի տեսնելով որ մեր ամեն ըրածներն պատմեր են իրեն , այնուհետև արժէք շտուինք իր դուշակութեանց :

Բայց ես քէն շեմ պահէր , և յանձն առի երթալ նորէն հասպիտ տեսնել : Ծառ սիրուն նաև մարդագար երեցու ինձ , կարծեմ թէ այս բան կարեռ է ի Բարիզ որ մարդ ինքզինքը սիրել տայ : Ծանզ — Էլիզէն , Պուա տը Պուանյը , Անդրայ , Սէն — Գլու շատ զարմանք տուին քրոջս և ինձ : Հայրիկն ամեն բան մեզի կ'բացատրէր , կենդանիները , թռչունները և փոքրիկ ձուկերը մեր հիացումը կ'զրգուէին : Այ հոգս շէր եթէ Անդրիա շերթայինք : Հերիին շէի ըստ և իրաւունք տնիք . ինքնին ալ շէր ըստ ինձ կ'այրէր ու կ'մրցէր որ մեկնի , թէ և ես իր ժամանաքը կ'գուշակէի :

Դիմէի որ հայրիկը շատ բարի է , բայց չ'ըսէ ձեզի որ փոքրիկ կոյր մը խնամել կ'տար : Մայրիկը կ'ուզէր որ փոքրիկ Յովհաննէսը Բարիզի կոյրերուն դպրոցը դրուի , ինչու որ շատ խելացի էր և կըրնար կըրթուիլ : Մեզի վանդակներ և առարատներ կ'չինէր , ես բան մը շեմ կարող ընել , երբ աչքերս գոց են :

Խօսրը Յովհաննէսին պրայ էր , և որոշուեցաւ որ Անդրիա զատ՝ ամենիրու միասմին կոյրերուն կըրթուիլ :

Բնաւ շաղիտափ մոռնամ մեր այս այցելութիւնը
բրոջա բան հարցենելու պէտք յեմ զգաբ , առեն բան
կ'յիշեմ կարծես թէ դեռ երեկ գացինք , պիտի
տեսնէք :

Գրեթէ ութառն տարի կայ որ Շարիզի մէջ ա-
ռաջին անգամ խորհեցան կոյրերը կրթելու . ինչ
կ'ընեն ուրիշ տեղ չգիտեմ : Աւասիկ ինչպէս գործը
պատահեցաւ , ամառուան իրիկուն մը ութ , առա-
տարեկան շատ մը կոյրեր բանուել ժողով մը նստած
էին , այլ և այլ նուազ արաններ խենդ ու խելաւ
կ'ածէին և անցորդներու ծիծաղը շարժելու համար
մէն մի գրակալ դրած էին իրենց առջև և վրան
երաժշտական տեսքներ և ակնոցներ քիթերուն
վրայ : Անցորդը կ'նայէր , թէ և ահռելի ձայներ
կ'հանէին , բայց մաֆկ կ'ընէին և ողորմութիւն մը
կ'տային : Բայց այն քազմութեան մէջ՝ պարուն մը
(կուզեմ ըսել ձեզ շուտ մ'իր անունը) Վալանդին
շոյ մոռածեց որ արդարեւ շատ բարի գործ մը պի-
տի բլար եթէ կարենացին իրօք երաժշտութիւնն
սորվեցնել կոյրերուն : Քանի որ այս գժրաղղներ ,
կ'ըսէր ինքնիրեն , առ արկանները շօշափելով կ'իմա-
հան ամեն բան , զանոնք կրթելու միջոցը կրնայ
գ անուիլ անշուշտ : Եւ ահա այս Պարոն Վալանդին
կ'սկսի խորհիլ :

Նորատի աղայ մը տասն և զեց տարեկան , Ափե-
կօր անուն , գրեթէ ՚ի ծնէ կոյր , իրեն բերին ը-
սելով թէ աննման խելք ունէր : Վալանդին (հայ-
ռիկը Պ. չէր ըսէր) շատ հոգ տարաւ իր աշակերտին

և շատ ուրախացաւ նորատի տղուն յառաջադիմութեան վրայ : Անի ալ շատ երթանիկ էր որ կ'աշխատէր և բան կը սորմէր փոխանակ եկեղեցին զուռ նստել մուրալու :

Այս պատմութիւնը ամենուն խօսակցութեան նիւթե եղաւ և մինչեւ անդամ Լուի Ֆֆի արքունիքը հասաւ : Նշանաւոր մարդիկ գումարուեցան և կոյրերուն այնքան համակրեցան որ յատուկ տուն մը պատրաստեցին որ զանոնք պատապարեն և կրթեն : Այդ հաստատութիւն մեր տեսածը չէ :

Կոյրերը շատ շուտ յառաջ գացին : Թագուհին և Թագաւորը ուզեցին անենել այս խեղճ տղայքը : Վերսայլ բերել և իրեկց առջև քենել տուին : Շատ գոհ եղան : Երբ թագաւորական ընտանիքը քաշուեցաւ, շարական մ'երդ եցին անենքը միասին : Ուժ օր տղայքը Վերսայլ զվեակը պահեցին, անշուշտ աղւոր ճաշեր ըրած են :

Այն ժամանակին իվեր մեծ հոգ տարին կոյր տղոց վրայ, և այսօր Ենվալիտի պուլվարին վրայ գեղեցիկ, տուն մը կ'բնակին : Այն տեղ հասանք ձիչդ այն միջոցին որ հայրիկը մեզ պատեց այս պատմութիւնը :

Այս հիմնարկութեան տեսուչը մեզ ընդունեց, շատ բարեգէմ կ'երեի և քաղաքավար է : Հայրիկն ու մայրիկն Յովհաննէսին վրայ խօսեցան հետո : Ժամը երկար կ'երեւէր մեզ, կ'փափաքէինք տեսնել, կոյրերու աշխատանիքը :

Վերջապէս դաստիան մը մտանք : Քսանի շափ

աղայք պատմին կողմը գրասեղաններուն վրայ եղս-
տեր էին : Դաստառուն վորբիկ սեղանի մ'առջև
նատած , ուղղագրութեան կ'զբաղեցներ զանոնք ,
բոլոր աշակերտները կը դրէին , բայց ոչ զրիչով :
Ցից կէտեր կ'շինեն հաստ թղթի մը վրայ , որ յա-
տուկ շրջանակ մ'ունի . կայ նաև սահուն քանակ
մ'որ չխտակ զբելու կ'օգնէ :

Ասոնց այր ու թէնը տասը ցցուած կէտերէ կ'ը-
րազկանայ , որ տարրեր ձեռի տեղաւորած , կ'րա-
ւեն զբելու ինչ որ պէտք է , թուանշաններն ալ
նոյն կերպով կ'սորպին ու կ'զրութին :

Մարզրիտ և ես շատ կ'զարմանայինք , սակայն
ամէնէ աւելի մեր զարմանքն աւելցաւ՝ աւենելով
որ զասատուն ալ կոյր էր : Իր մատերը շուտ շուտ
կ'սահեցնէր այդ զրուած երեսներուն վրայ և տուն
կ'տար : Մեծ զիրք մը մեզ ցոյց տալու հանեցաւ
զոր ինք անձամբ բալիքուած զզրոցի մը մէջէ հա-
նեց : Անոր մէջ կրցանք տեսնել այրութէնը , ապա
աշակերտ մ'ելու և ուղղագրութինը բացատրեց ,
շատ լաւ վերլուծեց : Կարծես թէ Պ. Հէրոան շատ
գոհ պիտի ըլլար եթէ ընդունելութիւնները ոյս նո-
րատի կոյրին չափ զիտնայի : Այս խեղճ տղոց կ'ը-
սորվեցնեն նախ զբել ու կարդալ , քերականութիւն ,
պատմութիւն . այխարհագրութիւն , բնական զի-
տութիւն , այսինքն բուսաբանութիւն , թռչուններ ,
թիթեռնիկներ եւ : Երբ որ աւելի մեծնան , օտար
լեզուներ ալ կ'սորպին , նոյնալիս ուսողութիւն (մեծ
հաշիւներ) տիեզերական պատմութիւն , նոյնալիս
կ'կարդան արժակ կամ ոտանաւոր զբեր :

Կոյքի մը համար վեց տես պէտք է որ կարդալ սորզի : Կարծեմ շատ չէ : Եթէ տարիէ մը շորովին, շատ գէշ է : Խակ ես որ գրեթէ երկու տարիի շափ չուզեցի սորզիլ : Այս բարի փոքրիկ կոյրերը ձայնագրութիւն, ներդաշնակութիւն, և մանաւանդ երգելն կ'սորզին : Ո՞հ, որչափ գոհ եմ որ կրնան երգել և քիչ մը զրօնել :

Այս բաւական չէ : Այլ և այլ գործարաններ գացինք, կողովագործութեան գործարան, այսինքն ուրաեղ կ'չինեն, սապատներ և խոզանակներ : Օրինակի համար վարպետ մ'ունին որ կոյր չէ, և անոնց դաս կ'տայ : Այս գործաւորը բառ մեզ որ աշակերտ մը գրեթէ տարին հարիւր ֆրանք կ'չաշից բայց այս շահած ստակը իրը չէ, այլ իրին վարձ մաս մ'անոր կ'տրուի : Հաւասարի եմ որ կոյրերը աւելի աղէկ ունին առանց վարձքի աշխատիլ քան թէ առտուընէ մինչև իրիկուն ձեռքերը կապած նստիլ :

Տեսանք նոր ուսանող մ'որ առաջին անգամ սէզով խոզանակ մը կ'չինէր : Խնկը շատ սիրուն էր, և Հէրի անոր պատկերը շինեց :

Կայ ուրիշ գործարան մ'ուր աթոռներու վախաթը կ'հիւսեն : Կին մ'է դաս առողը : Եւ առանախարակի գործարան մը : Զէի կարող հաւատող որ այս նորատի աղաք կոյրը ըլլան, այնքան շուտ կ'աշխատին և աղւոր թասեր կ'չինէին : Ամենէն աւելի մեզ զարմացնող գործաւորներն էին կազմարարներն, իրենց հասաւ ասեղներն մեր կատէրինէն

շուտ կ'անցնէին : Պէտք է առևսել զանոնք միատեղ նստած որ գրքերու թերթերը կ'կարեն : Ոհ . այն բարի Պ. Հոյ որբան պիտի զոհ ըլլար , եթէ նորէն դար իրեն պաշտպանած տղոց մէջ գտնուէր :

Տպարան մը կայ , ուր աեղ կ'ապուին այն հաստատութեան ամեն սիէտք եղած գրքերն : Ամոռնայի ըսել ձեզ թէ երեք հարիւր հասոր կազմուած գիրք տեսանք այն աեղ :

Դաշնամուրի դասի մը ներկայ գտնուեցանք . Աշակերտու խել կիսամայնի վրայ աստիճանեակը կ'ըկարդար (մայրիկը ըստ) կոյր դաստառն ուզի վրայ էր և մաստովն ամեն ձայնագիրներուն վրայէն կ'անցնէր , և աշակերտն երբ սիսալէր կ'ուզզէր : Ես կ'ըսօսէի անդադար հարցութեար կ'ընէի : Նէրի և Մարդրիտ բան մը չէին ըսեր . բայց պիտի տէսնէք ետքը որ բոյրս ալ ինձի շափէ կ'խորհէր :

Ճաշատուեներն ալ պարտեցանք , խոհանոցը և վերջը մատուար . գեղեցիկ և սիրուն մատուա մը , պատկերներով զարդարուած որ Նէրիին աչքին զարկաւ :

Փոքրիկ կոյր աղջիկներուն կոզմն ալ դացինք , 60 հաս կայ , իսկ տղաք գրեթէ 140 : Ըսին մեզ թէ մի և նոյն կերպով կ'սորպին նաև աղջիկները : Անոնց սովորական զրազմունքն է գուլպայ շինել հիւսել և մանել : Նոյնպէս երաժշտութիւն . շուտ կ'սորպին : Տասն և վեց տարեկան աղջիկ մը շատ աղլոր կտոր մը նուազեց :

Մեր այցելութիւնն զերջ առաւ այն սրահն ուր

կոյրերուն շինած այլ և այլ բաները կ'ծախսեն , ուրտեղ կային բաժակներ , տուփեր , տղոց ձեռքով պատրաստուած այլ և այլ ճախրածե առարկաներ , և աղջկանց ձեռքով շինուած անհամար քսակներ , տեսակ տեսակ հիւսկէններ :

Հարկ չկայ ըսել թէ հայրիկն ու մայրիկ այլ և այլ բաներ ծախու առին : Շատ հաճելի երեցաւ ինձ այս ընթացքը : Եթէ քոյրս և ես ստակ ունենայինք մեր կոյր բարի բարեկամներու շինած բաներուն համար անշուշտ բոլորն ալ ծախք պիտի ընէինք :

Այն , բարի են , բարեպաշտ , երախտագէտ և շատ խոհեմ : Շատ իրաւունք ունին սիրել զԱստուած բոլոր սրտով և խելօք ըլլալ : Հաւաստի եմ որ այս պատճառաւ տխուր և դժբաղդ չեն :

Ուսումնապետն հրաւիրեց մեզ որ յաջորդ շաբաթ ըլլալիք նուագահանդէսին ներկայ գտնուինք :

Հայրիկը մերժեց , վասն զի Անգլիա պիտի երթայինք :

Ո՞հ . այս այցելութիւնը որքան հաճոյք պատճառեց ինձ : Զէի մտածէր բնաւ կենդանեաց պարտէզին վրայ կ'երեակայէի թէ կոյր եմ , քալելու ատեն աչքերս կը գոցէի : Հայրիկը շատ կարճ բարոյական դաս մը տուաւ մեզ . գովեց այս տղոց օրինակելի վարմունքը , աշխատասիրութիւնը և համբերատարութիւնը :

Երբ Մարգրտին հետ մինակ մնացի , նորէն սկսանք խօսիլ , քոյրս տխուր էր ,

ՄԱՐԳՐԻՏ

Հ . ոչ այն տղակը որքան՝ դասատուներ իմ
— ա ազգեցութիւն ըրին : Երևակայէ թէ ինչ
ք բարեսիրտ ըլլալ պէտք են որ դաս տան ա-
ռանց ձանձրոյթ զգալու : Ո՞հ , շատ պիտի ցաւէի ,
եղբար իմ , եթէ հայրիկն ու մայրիկ կոյր ըլլային :

60

Հապա թէ որ ես կոյր ըլլայի , միթէ չպիտի ցա-
ւէիր :

ՄԱՐԳՐԻՏ

Ո՞հ , այս , բայց հաւատայ շատ հոգ պիտի տա-
նէի քու վրադ , ստոյգ եղիր :

61

Բայց ի՞նչ օգուտ Մարգրիտ , ես քեզ չպիտի
տեսնէի և ոչ իսկ Սառւայի գեղեցիկ կապոյտ զը-
ւարդագոյն ամպերը և չպիտի տեսնէի նաև երբ
մեծնաս՝ որ մայրիկին պէս սիրուն լրջազգեստներ
պիտի ունենաս և յարդէ գտակ մը շեփորուկի ծա-
ղիկներով :

Ուզեցի կոյրի պէս խաղալ , Մարգրիտ չուզեց :
Երկրորդ օրը՝ լուսնալու մօտ , քոյրս սկսաւ այն-
պէս պոռակ որ ամենքս ալ արթնցուց : Մայրիկը
դողդղալով քրոջս քով վազեց , ուր կատէրին զանի
արթնցնելու կ'փորձէր : Մարգրիտ մղձաւանջ ունէր
և երազին մէջ կ'տեսնէր թէ կոյր էր : Մայրիկը

ծունկերուն վրայ առաւ զանի , և փեղկերը բանալ
տուաւ :

Ես ալքով դացի , և տեսայ խեղճ Յակներ . որ
կ'զողար և կ'լար : Հայրիկը անհանգիստ կ'ու-
էր :

« Աննա շատ իրաւունք ունէիր , ըստ , պէտք
չէր որ մեր հետը տանէինք զանի , շատ ջղոտ է : »

Վերջապէս Մարգրիտ հանդարտեցաւ , մայրի-
կըն անոր աչքերը կ'համբուրէր մեղմիկ և կարծես
թէ ըսել կ'ուզէր . չէ , իմ սիրելի փոքրիկ աղջիկս ,
կոյր չէ , ազուր լաւ կապոյտ աչքեր ունի զոր նա-
յելով չեմ յագենար :

Մայրիկը վախցաւ որ այս մղձաւանջը նորէն չը-
դայ վրան . ուստի այս բարի մայրիկը քրոջս անկո-
ղինը իրենին մօտ դնել տուաւ :

Մեր տիսուր գաղափարները ցրուելու համար ,
հայրիկը մեզ Ռօպէր Հուտէնին տարաւ . իր նպա-
տակին հասաւ . կոյրեր երազելու տեղ սկսանք
թուղթի խաղեր , ծաղիկներ և շաքարեղիններ ե-
րազել , որ շատ զուարձալի էին :

Անձրեւ մեր Դիւյլըրիի խաղերուն վերջ տուաւ :
Բայց որքան կ'խնդայինք տեսնելով անցորդ ներն որ
տղմին մէջ կ'կոխսկրտէին և հովանոցներն իրարու
կ'զարնէին : Կատէրին , Բարիկ շատ տղեղ կ'գտնէ
երբոր կ'անձրեէ , ես ալքիչ մ'իր կարծիքէն եմ ,





ԳԼՈՒԽ ԻԶ ·

ՊԱՐՈՆ ԵՆՏՐՍՈՆ · — ԾՈՎԸ

Պ. Ենտրսոն ճիշդ որոշած օրը հասաւ և եկաւ գտնելու մեջ պանդոկը : Հէրի վազեց շուտ մը և հայրը գրկեց : Անշուշտ թէ մին և թէ միւսը շատ գոհ էին , բայց անգլիական ուրախութիւնը ֆրասականին չնմանիր : Պ. Ենտրսոն , բարձր է , նիհար և քիչ մը դեղնած , կ'զարմանար , կ'ապշէր լսելով որ լեզուն համարձակ կ'խօսէինք , և իր գոհունակութիւնը կ'յայտնէր ստէպ մեր ձեռքերն ուժով մը թոթուելով : Շնորհակալ եղաւ հայրի՛ին ու մայրի՛ին որ այնքան խնամք տարած էին Հէրիին համար : Չմոռցաւ նաև իզմէ շնորհակալ ըլլալ :

« Պէտք էր , մաստըր Հէնրիկ (մաստըր տիտղոսը կ'տան տասներկու կամ տասներեք տարեկան տղոց) խնդրել հօրմէդ որ մեզի հետ Անգլիա գաս : Շատ գոհ պիտի ըլլամ եթէ քեզ մեր երկրին աղւոր բաները ցոյց տամ :

— Մենք ալ այդպէս որոշած ենք, սկարոն, սպատասխանեց մայրիկը : Ես այս տեղ պիտի սպասեմ ճամբորդները :

ՀԱՅՐԻԿԵ

Այս ճամբորդութիւնը շատ պէտք է երկու բարեկամաց մէջ ծագած կռուին վերջ տալու համար, այսինքն՝ թէ իրաւ ծովն աւելի աղւոր է թէ ոչ Ալպեան լեռները :

Պ. Էնտըրսօն շատ խնդաց, բայց քաջ դիտեցի որ Հէրիին համամիտ էր և ծովը գեր ՚ի վեր կ'դասէր :

Հայրիկը Պ. Էնտըրսօնը ճաշի հրաւիրեց : Եկաւ, ճաշը շատ զուարձակ եղաւ և իրարմէ բաժնուեցանք . « Ի կրկին տեսութիւն ըսելով : »

Հէրի նոյն տղան չէր : Աւելի վստահ կ'քալէր նաև քիչ մը գլուխ բոնելով : Ինչու զարմանանք : Փոքրիկ տղայ մը ինքզինք աննշան բան մը կ'գտնէ երբ հայրն ու մայրը իր մօտ չեն որ զինքը պաշտպանեն կամ սաստեն : Ես շատ դշրագդ պիտի ըլլայի, և ահագին Պ. Էնտըրսօնի ներկայութիւնը շատ ուրախացուց զիս, վասն զի Հէրին կ'սիրեմ, և անոր երջանկութիւնը քիչ մ'ալ իմս է :

Կատէրին սրտին խորէն յոյս մ'ունէր որ ճամբորդութիւնս չպիտի կատարուի : Երբ ըսի թէ երկրորդ օրը պիտի մեկնիմ, կարծեց թէ կատակ կ'ընեմ : Մայրիկը հարկ սեսկեց լրջօրէն խօսիլ հետը : Յետոյ իմ լաթերս ալ հայրիկին սնտուկին մէջ ամփոփել տուաւ : Սիրելի կատէրինը իրիկուն ըստ

ինձ թէ՝ շատ լաւ կ'ընէր այս անդլիացին՝ եթէ իր
տունը մնար :

Հապա փոքրիկ քոյրս ի՞նչ կ'ըսէր :

ԵՍ

Միթէ կ'նախանձիս, Մարգրիտ որ հայրիկին
հետ Լօնտօն կ'երթամ :

ՄԱՐԳՐԻՏ

Հէնրիկ, ի՞նչ կ'ըսես, ես նախանձիմ: Ես միշտ
կ'ուզեմ քեզ գոհ տեսնել, դու շատ պիտի զուար-
ճանաս անշուշտ, եղբայր իմ, և ասոր համար ու-
րախ եմ: Գիտեմ որ ինձի համար աւելի դժուար
է մեկնել քան թէ քեզի համար: Եթէ հիւանդա-
նամ, հայրիկը շատ պիտի շփոթի: Քեզ կ'աղաջեմ
միայն որ ինձ ասեղներ բերես, և ինչ որ տեսնես
լաւ միտքդ պահես որ վերջին պատմես:

Այն ատեն խօսք տուի քրոջս որ իրեն համար
փոքրիկ օրագիր մը բռնեմ: Խօստումս պահեցի թէ
և քիչ մը դժուարութեամբ: Ամենեին մաքէր չէր
անցնէր որ օր մ'այս փոքրիկ աշխատութիւնս Յու-
շավէպիս մէջ իր տեղն պիտի ունենայ:

Երկրորդ օրը՝ ժամը եօթին սկատրաստ էի, չը-
կրցայ համբերել և ինքզինքս հայլիին մէջ նայեցայ,
պճնասիրութիւն չէր այս: Անգլիա ճամբորդելս
անձիս այնքան մեծ կշիռ կ'տար: որ կ'ուզէի ինք-
զինքս լաւ մը դիտել և տաս տարեկան աղու մը
Լօնտօն երթալու ձեւը տեսնել:

Եռանդս սակայն արգելք մը չէր որ աչերս ար-
տառքով չեցուէին երբ մայրիկին բաժանման համ-

բոյր տալու ժամը հասաւ : Իր քովէն չէի հեռացած այն օրէն ՚ի վեր որ քիչ ժամանակի համար զիշերօթիկ դպրոց գացած էի : Սովորած էի առտու իրիկուն և նաև օրուան մէջ համբուրել զինքը , հիմակ տասն և հինգ օրի չափ զինքը չպիտի գրկէի :

Նատ լաւ իմացաւ միտքս և ուրախ դէմք մը առաւ , թէ և իզմէ աւելի տրտում էր : Ի դարձին մայրիկն ըստաւ ինձ՝ թէ իմ տիսրութիւնս իրեն հաճոյք պատճառած էր , այս խօսքս կ'շտապիմ ըսելու , որպէս զի չմոռնամ :

Մայրիկն ու Մարդրիտ մինչև կայարանը տարին մեզ : Պ. Ենտըրսօն և Հէրի արդէն եկեր էին : Քիչ մ'ետք՝ զանգակը զարկին՝ բաժնուիլ պէտք էր :

Իմ տրտմութիւնս շուտով անցաւ , գոհ էի , կ'ծիծաղէի : Ուզեւորները հետս կ'իյնային : Ամէնքը կարծէին թէ տասն երկու տարու տղայ մ'եմ :

Բարիզէն մինչև Պուլօներ ճամբան ազւոր չէ : Մեր դիմացը նստող պարոնին ալէս կրնայի շատ լաւ քնանալ , բայց քնանալու փափաք չունի : Աակայն ամենեին ձանձրոյթ չզգացի : Կ'ելնէի կ'իջնէի ըստէպ , չէ թէ միայն տեղ փոխելու , այլ ամենուն ըրածն ընելու և փոքրիկ տղու մը պէս շփոթած չերենալու համար : Ասկէ զատ մառանին անուշներըն ալ բաւական հրամբուրելի են ուղղերութեան ժամանակ : Հայրս հրաման տուած էր որ ուզածս ուտեմ , բայց ես չափաւոր էի և կրնամ ըսել թէ՝ իբրև ոկրամոլ չեն կարող ամբաստանել զիս :

Հէրի կ'հարցնէր ինձ թէ ինչպէս կ'գտնեմ ծովը :

Ես կամաւխենդ ու խելառ պատասխաններ կ'տայի,
և կ'ծիծաղէին , նոյնպէս մեր հայրերը :

Աերջապէս կ'հասնինք Պուլօներ , ճամբորդները
շտապաւ կառք կ'մտնեն , ծրարները կ'առնուն , և
կ'աճապարեն , որպէս թէ երկաթուղին պիտի մըտ-
նեն :

Հէրիին հարցուցի այս շտապումին պատճառը .
հանդարտ պատասխանեց թէ մակնթացութեան հա-
մար էր :

Իբր թէ շատ բան կ'հասկնայի , մակնթացու-
թիւն ինչ ըսել էր . անշուշտ հայրիկը զիտէր , բայց
հարցումներ ընելու ժամանակը չէր : Կամուրջէն
կ'անցնինք , աւասիկ քարափիները , կահաւոր պան-
դոկներ , ծովս իր մեծ կոհակներով , շոգենաւ մը
որու ծխնելոյզը թանձր և սև մուխ մը կ'հանէր :

Հայրիկը ձեռքէս բռնած էր , ինչու որ շատ
բազմութիւն կար , կ'երթային , կ'գային , կ'պուա-
յին : Ո՞հ . Աստուած իմ , սիրտս սաստիկ կ'զարնէր:

ՀԱՅՐԻԿԻ

Ըսէ նայիմ , Հէնրիկ փափաք ունիս մեկնելու :

ԵՍ

Անշուշտ , հայր իմ , թէ և քիչ մը կ'վախնամ ,
բայց եթէ վտանգ ըլլար , անշուշտ չպիտի տանէիր
զիս :

— Աւասիկ տղայ մ'որ լաւ կ'խօսի , ըսաւ անգ-
լիացի կին մը , որ անշուշտ ուրախ էր իր ֆրանսէ-
րենը ծախելու առիթ մը գտնելուն :

Իմ երկիւղ շատ շտեեց : Անգամ մ'որ չոգե-

նաւ մտայ , կարծես թէ օրորոցին մէջն եմ :

Ահա ճամբայ ելանք : Բուֆ , բուֆ , բուֆ :

Հայրիկը ինձ կ'նայէր : Հէրի նալուածքը չորս
դին կ'ածէր . թէ զիս և թէ ուրիշ ճամբորդները
մոռցեր էր :

Ծովը չըռնէր իմ հայրիկս , ուրախ եղաւ շատ
որ ես ալ իր բարի օրինակին կ'հետեւէի : Այնպէս
որ քիչ քիչ իմ նոր վիճակիս սովորելով՝ իմ չորս դիս
անցած ու դարձածը կ'դիտէի : Ալիքները կ'փալփէին
փլրելու ժամանակ : Քանի յառաջ կ'երթայինք
այնքան ամեն բան սիրուն կ'երևէր , չէի կ'շտանար
կոհակները նայելով :

Ափանս . ափանս , յանկարծ տեսայ բան մ'որ
ախորժելի չէր : Տեսայ Հէրի կամուրջին վրայ պառ-
կած և շատ հիւանդ : Ո՛հ , որչափ ցաւ զգացի ,
այնքան դեղներ , այնքան դեղներ էր , որ կարծեցի
թէ կ'մեռնէր . և սկսայ լալ :

Հայրիկն ըստ թէ Հէրի շոգենաւէն ելնելուն
պէս պիտի առողջանայ : Այն ատեն լացս բռնեցի ,
բայց շատ կ'ցաւէի բարեկամիս վրայ :

Ո՛հ , որչափ կ'սխալի ընթերցողը , եթէ կարծէ
թէ Հէրի այս միջոցիս չէր մտածէր իր մօր և իր
քրոջ վրայ :

Ընդհակառակն , ես կ'ըսէի , մայրիկն զիտէ թէ
երբ պիտի անցնինք Մանջի ծովին , և անշուշտ մեր
վրայ կ'մտածէ : Մայրիկը երբ անհանդստութիւն
մ'ունենայ առ Աստուած կ'աղօթէ : Ուստի հան-
գիստ եմ , լաւ ճամբորդութիւն մը պիտի ընենք
անշուշտ :

Հաս իրաւ էր , երկու ժամէն ֆօլքսդօն հասանք , խեղճ Նէրին ծրարի մը պէս վերուցին , անշուշտ պատիւ չէր բերեր այս բանս անգլիացիի մը որ այնքան պարծենալով ծովը կ'զովէր : Ա՛հ , իմ լեռներս , բոլորովին տարրեր են : Մաքուր օդ մը կ'ծծես և ծովի հիւանդութիւն մինչև այնտեղ հասած չէ :

Պէտք էր հիմակ ճամբայ ելնել դէսլ ի Լոնտրա կամ Լօնտօն , եթէ նախադաս կ'սեպես :

Որչափ որ դէմքս չէր յայտնէր , բայց շատ յոգներ էի , և երբ միանդամ շոգեկառք մտայ , արագաշարժ երկաթուղիին դղրդիւնը բանի տեղ չդնելով սկսայ քնանալ , միւս օրն առտու , Հայտ Բարքի մօտ Միվար պանդոկին մէջ տէքս բացի :

Արդեօք ընթերցողն ինձի կ'նմանի : Երբոր անկողինս փոխեմ , երկրորդ օրը՝ երբ աշքերս բանամուր ըլլալս չգիտեմ : Մանաւանդ Լօնտօն , բոլորովին շփոթուած էի լսելով խանուդպաններուն աղաղակը որ բնաւ Գրանսայի բան ծախողներուն չեն նմանիր : Բարեբաղդաբար հայրիկն ինձ օգնութեան հասաւ : Երբ ըսաւ ինձ : good morning, master Henry , ինքզինքս դտայ :

Դիչ մը միասին խօսեցանք մայրիկին , Մարգըրտին և փոքրիկ Լեռնին վրայ : Կարծես թէ կ'տեսնէինք զանոնք և անոնց ձայները կ'լսէինք , և որովհետեւ ֆրանսա դառնալու անհամբեր էինք , և աղւոր օդ մը կար դուրս ելանք որ պտըտինք :

Զմոռնամ նաև ըսելու որ փորձով իմացայ թէ

որքան օգտակար բան է՝ երբ փոքրիկ տղայ մը մի-
նակը հագուիլ զիտէ։ Հօրս բնաւ անհանդստութիւն
չտուի։ Իմ հագուելու կերպս տեսնելով այնքան
զարմացաւ որ ճամբորդի պայուսակ մը գնեց ինձի
համար։ Եթէ փոքրիկ աղոտոտ տղայ մ'ըլլայի, հայրս
բնաւ այսպիսի ընծայ մը չպիտի ըներ։ Աւելորդ է
ըսել որ անգլիական ձեռվ ճաշ ըրինք, թարմ հաւ-
կիթը կ'պակսէր, վասն զի Լոնտոնի մէջ թարմ չեն։
Հիմակ պիտի ըսեմ ձեզի պատճառը։ Անգլիացիք
առատուները միշտ խաշած հաւկիթ կ'ուտեն, հե-
տեւապէս շատ հաւկիթի պէտք ունին։ Այս հաւ-
կիթները թրանսայի այլ և այլ կողմերէն կ'բերեն։
Հայրիկն ըսաւ թէ տարին երեսուն կամ քառասուն
միլիոն հաւկիթ կ'զրկեն։ Կրնաք ասկից հասկնալ,
որ այս հաւկիթները չեն կրնար ոչ մեր զիւզին և
ոչ իսկ Բարիզի հաւկիթներուն պէս թարմ ըլլալ։

Օրինակի համար, թէյ խմեցինք, մեծկակ գա-
ւաթ մ'ունէի, ուստի, պէտք է ըսել, թէ շատ
գոհ եղայ։

Ճաշը գրեթէ լմնցեր էր, երբ Պ. Ենտըրսօն և
Հէրի ներս մտան։ Եկեր էին որ մեզ Լոնտոնի այլ
և այլ կողմերը, տանին։

Ո՞հ, որչափ գոհ էի

Աղւոր կառք մը մեզի կ'սպասէր, ինչու որ Պ.
Ենտըրսօն Հնդկաստանի վաճառական մ'էր և իր
տուրեառէն շատ ստակ կ'չահի։

Շատ դժուարին պիտի ըլլար ինձի համար եթէ
ստիպուէի Լոնտոնի նկարագիրն կանոնաւոր կեր-

պով ընել : Մտածեցէք կաղաշեմ թէ անցեալ տարի տասն և մէկ տարեկան էի , և թէ և ոմանք իմ տարիքս նայելով՝ զիս շատ յառաջադէմ կ'համարին , այս իրաւ է որ փոքրիկ ճամբորդ մ'էի : Ուստի պիտի պատմեմ ձեզ մեր պատյաներն՝ որշափ որ յիշեմ : Շատ հաւանական է որ ծաղրելի ոստումներ ընեմ և պիտի մոռնամ յիշել իմ շուրջս գտնուած տեղ մը , հեռուն երթալու և նորէն դառնալու համար : Իմ այս անկանոն ընթացքիս պիտի ներէք անշուշտ , քանի որ բնաւ չպիտի նեղանաք :

ԼՕՆՑՕՆ

Շատ կամուրջներ կան Թամիզ գետին վրայ որ ծովու կ'նմանի : Այս կամուրջները շատ գեղեցիկ են : Ինչպէս Լօնտոն պրիմ (կամուրջ) Վէստմինստր պրիմ . Ուադէրլու պրիմ . Հէնրֆըրտ պրիմ :

Թամիզի վրայ անհամար փոքրիկ շոգենաւեր կան որ ամենայն շուտութեամբ կ'վազեն , շատ զուարձալի է :

Մեր առաջին այցելութիւնը ըրինք le British Museum (կ'գուշակէք , բրիտանական թանգարան) Հէրի ուրախ զուարթ ամեն բան կ'բացատրէր ինձ , մինչդեռ մեր հայրերը կ'խօսակցէին :

Այս թանգարանն շատ ազգեցութիւն ըրաւ իմ վրայ . ինչու որ միայն Կրընօպլինը տեսած էի որ այսշափ գեղեցիկ չէ : Մոմեաները շատ տգեղ երևցան ինձ . և շուտ մը կ'ուզէի թողուլ զանոնք երթալ գեղեցիկ յարդալի թռչունները տեսնել ,

բայց Նէրի վերջը չէր բերեր : Ի՞նչ հոգս էր գիտնալ թէ այն տղեղ մոմեաները մարդիկ են , զոր եղիպտացիք զմուսած և պատատած են և կարելի է երկու հազար տարուան մոմեաներ են :

Վերջապէս յարդալի անասուններ տեսնելու գացինք . այնպէս կ'նայէին մեզի որ կարծես թէ կենդանի էին : Կային նաև շատ մը քարեր , չոր բոյսեր և ուրիշ հետաքրքրական բաներ :

Հայրիկը դիտեց որ շատ չեմ զբօսնուր , և նորէն կառք մտանք որ Լօնտօնէն երկու մղոն հեռու Բիւրեղեայ պալատը տեսնենք : Զիերը արշաւակի կ'ընթանային , երբ յանկարծ տեսանք որ կիները , դայեակները և տղայք կ'վագէին : « Ո՞հ . ըստ Նէրի » այս Punch and Judy . » է , այսինքն հտալիս են իր կինը :

Այս անձինք յար և նման մեր գիտցած անձերուն , միայն թէ , ասոնք չեն սպասեր իրենց տունը՝ որ այցելութիւններ ընդունին : Փողոցները կ'ըպտըտին , տեղ տեղ կ'կենան և ներկայացումներ կ'տան : Բընչ շար մարդ մ'է որ միշտ իր կինը կը ծեծէ , և այս բանս ամենուն ծիծաղը կ'շարժէ : Բընչը չեմ սիրէր ուստի շուտ չկեցանք տեսնելու :

Բիւրեղեայ պալատը (Cristal palace) Նորվուտի բլուրներուն փրայ շինուած է , Լօնտրայի ծառաստաններուն գլխաւորը յօրինեց այդ պալատին ծըրադիրը : Սիրելի ընթերցող , աչքիդ առջեւը բեր ընդարձակ սրահ մը բոլոր ասլակիով ծածկուած պնդամար ճեմելիքներով՝ գիտէք արդէն որ այս վայ-

րըն տեղի ունեցաւ մեծ արուեստահանդէսը: Այժմ
կ'տեսնուին անգլիական գործարաններու այլ և
այլ տարազներու արդիւնքներ : Թէ և ինձի համար
շատ զուարձալի չեին . բայց ըրած կորուստ պար-
տէզներու մէջ շահեցայ , ուրտեղ կը գտնուին , աղ-
բիւրներ , ջրվէժներ . մայրիկին թաւշէ շրջադրես-
տին պէս կանաչ մարդեր :

Հայրիկը գրեթէ կ'վախնար տանելու զիս Վէստ-
մինստրի Աքքայարանն , մտածելով թէ իմ տարիքիս
համար շատ տխուր տեսարան մը պիտի երեէր :
Բայց ընդ հակառակն շատ զարմացաւ , երբ տե-
սաւ որ այն շիրիմներն և գեղեցիկ արձանները զիս
կ'հիացնէին: Հէրի՝ Անգլիոյ պատմութիւնը դեռ լաւ
չգիտէր : Նատ բաներ հարցուցի և կարող չեղաւ
պատասխանել : Բայց Պ. Էնտրոսօն ամեն բան զի-
տէ և որչափ ուզես կ'խօսի , այս բանս Լոնտրայի
մէջ շատ դիւրին է :

Վէստմինստրի վարժարանին վրայ պատմու-
թիւն մը պատմեց մեզ :

Այս վարժարանը հիմնադրող Անգլիոյ թագա-
ւորը շատ բարի և շատ զիտուն կին մ'ունէր , է-
տիթա անուն : Օր մը , այս թագուհին փոքրիկ Էն-
կուլֆոսին պատահեցաւ որ վարժարան կ'երթար .
կեցուց զանի , և ճամբուն վրայ քննութիւն մ'ըրաւ
քերականութեան և տրամաբանութեան վրայ : (Ի՞նչ
է այս) այնքան գոհ եղաւ անոր տուած պատաս-
խաններէն , որ անոր պարգև մը շնորհեց և խոս-
տացաւ նաև ուրիշ պարգևներ ևս տալ , եթէ այս-

պէս շարունակէր ուսմունքը :

Այս փոքրիկ տղան գիտուն մ'եղաւ և գրքեր գրեց , որոց մէջ չմոռցաւ յիշելու Ետիթա թագուհին հետ տեսութիւնը . և այս շատ բնական բան էր :

Պ. Ենտըրսօն խօսքը հօրս ուղղելով յարեց նաև թէ Վէստմինստրի մենաստանն երբեմն Բէնէտիկեան միաբաններ կ'բնակէին և թէ Քաքոդն այն տեղ հաստատեց առաջին տպարանն որով այն եկեղեցականներն շատ գործեր հրատարակեցին :

Պ. Ենտըրսօնի պատմութիւնը շատ քաղաքավարութեամբ կլլեցի , բայց եթէ փոքրիկ յիշագրիս մէջ նշանակած չըլլայի , անշուշտ պիտի մոռնայի : Սակայն այնպէս կարծեմ որ Ետիթա թագուհին շատ ընտիր կին մը պիտի ըլլար որ այս փոքրիկ տղուն հետ խօսեցաւ :

Հէրի շատ եռանդով խօսեր էր Փրանսացի կնոջ մը , Տիկին Դիւսօի մոմէ պատկերներուն թանգարանին վրայ : Այնտեղ ալ գացինք : Թէ և Հէրիին բան մը չըսի , բայց Տիկին Դիւսօի և իր մոմէ պատկերներն ինձի շատ ախորժելի չերեցան : Այս նոր բան մը չէր ինձի համար : Լիօնի մէջ ասոնց նմանները տեսեր էի :

Իսկ Լօնտօնի աշտարակն ուրիշ բան էր , ասոր խօսք չունիմ : Կան հոն երկաթէ զէնքով ասպետներ , և ահա այս զուարձալի է մանր տղոց և ըսպաններու համար :

Հայրիկն և Պ. Ենտըրսօն շատ խօսեցան : Քիչ

մ'ալ կոխւ ըրին չգիտեմ ի՞նչ պատճառաւ . . . հա՛ , հա՛ , կ'յիշեմ : Կարծեմ չարամիտ թագուհիի համար էր , Եղիսաբէթ անուն : Տեսայ զանի . ձիու վրայ կ'առեսնուի գործիքներով լի սենեկի մը մէջ . այդ գործիքներով է որ տանջած և սպաննած են շատ մարդիկ իր հրամանին համեմատ : Ո՛հ , չարասէր թագուհի մ'էր . կ'առեմ զինքը :

Այս աշտարակը շատ տխուր է : Պատմեցին մեզ երկու փոքրիկ իշխաններու պատմութիւնը , որ Անգլիոյ թագաւոր պիտի ըլլային և աշտարակին մէջ զանոնք մեռցուցին : Կ'ուզէք լսել այս պատմութիւնը . այ՛ , ես ալ լսեցի :

Լաւ ուրեմն , սիրելի բնթերցող , Ետուարդ թագաւորը մեռնելով երկու որդի թողուց , Ետուարդ և Ռիշար : Իր եղրօր Ռիշարի խնամոց յանձնեց . այս շատ չար իշխան մ'էր . իր եղրօր որդիքն հոգալու և մեծցնելու տեղ , նախ բաժնեց զանոնք իրենց մօրմէն և ապա աշտարակը զրկեց թագաւոր օծել տալու պատրուակաւ : Ավանս , միտքը զանոնք մեռցնել էր : Այս հրէշը իրմէ աւելի ասկիրատ մէկը գտաւ : Դիրիյլ և իր երեք ընկերները այս ոճիրը գործեցին :

Այս իշխաններուն անդրանիկը տասն և հինգ , միւսը ինն կամ տաս տարեկան էր , թէ և լաւ չեմ յիշեր : Մեռնելէ քանի մը ժամ առաջ , երկու եղբայրներն մատուռը գացին և ծունը դնելով նոյն բարձին վրայ , իրենց աղօթքն ըրին : Այս վերջին անգամն էր : Ո՛հ Աստուած իմ , կարծես թէ Մար-

գրիտ և ես դղեկին մատուռին մէջ աղօթքը կ'ընէ-
ինք , և հազիւ թէ մեր քունը տարեր էր եկեր էին
մեզ խեղելու բարձերով : Իրաւ որ սոսկալի էր .
սակայն այսպէս մեռան այս փոքր ի՛մանները : Մար-
միններն որ սանդղի մը վարի աստիճաններուն վրայ
դրուած էին , հրմակ Աւատմինըստրի մենաստանը
կ'գտնուին : Հայրիկն Ետուարի տղոց գեղեցիկ պատ-
կեր մը պիտի ցուցընէ ինձ :

Այս տխուր պատմութեան վրայ շատ մտածե-
ցի . ապա շատ բաներ տեսնելով՝ սկսայ մոռնալ :

Լօնտոնի մէջ գեղեցիկ ծառաստաններ կան ,
գլխաւորներն են , Հայտ — Բարդ , Կրին — Բարդ ,
Սէն — Ճէյմս Բարդ , Ուժէնտս Բարդ : Զիեր և
կառքեր կ'ըրջին հոն . շատ ախորժելի է , երբ մարդ
կառք ու ձի ունենայ :

Թագուհին պալատը , Սէն — Ճէյմս , Դիւյլերիի
մօտ շատ տգեղ է : Եթէ ես թագուհի լինէի , անով
դո՞ւ չախտի ըլլայի :

Պ. Էնտըրսօն մեզ կ'պատմէր թէ լաւ և թէ վատ
բաները : Պատմեց մեզի թէ ժամանակաւ Սէն-Ճէմս
պալատին տեղ՝ համար հիւանդանոց մը
կար , բայց կ'երւէի թէ Հէնրի Ը հոգ չընելով՝ անոր
տեղ պալատ մը ժինել տուալ :

Սէն — Ճէյմս պալատին առթիւ՝ ինձ պատմու-
թիւն մը պատմեցին որ միւսին պէս սոսկալի չէ :

Անգլիոյ թագաւոր Նարլ Ա. մեռնելէն ետքը՝
իր զաւակները Սէն - Ճէյմս կ'գտնուէին և զինւոր-
ներ կ'պահպանէին զանոնք , որպէս զի չդան զանոնք

չգողնան և անսնց դլուխը թագ չդնեն : Այս արդարական պահուըստուկ կ'խաղային : Բարեբազդաբար իրենց քով դտնուած երկայն ականջներով փոքրիկ շուն մը առեր պահեր էին, վասն զի այդ շունն հաջելով պիտի երեւան հանէին զանոնք՝ երբ բարեկամներ եկան և երկրորդ որդին Եօրքի դուքսն առին տարին մօրը քով՝ ֆրանսա :

Քէնսինքդընի գեղեցիկ պարտէզները տեսայ, ուր տեղ Վիքթորիա թագուհին իր մանկութեան օրերը անցուց : Աքանչելի ծառեր կան :

Կատէրին կ'կարծէ թէ Բարիզի Լա Բէ փողոցը աշխարհիս մէջ ամենէ գեղեցիկն է, դայեակս կը սխալի : Շատ պիտի զարմանար եթէ տեսնէր Ռիժէնդ փողոցն, Օքսֆորտ փողոցն և Բիքատիլին : Լրիկներն հասարակ փողոցներու պէս լայն են :

Պ. Ենտըրսօն իմ զարմանքիս վրայ կ'խնդար, ըստ ինձ թէ ինն հազար փողոց կայ Լօնտօնի մէջ :

Վինզօրի գղեակը գացինք : Ա՛հ, իրաւի, և Հէրի չի լաէ, Վէրսայի և Աէն-Քլուի պէս գեղեցիկ չէ, թագուհին և իր զաւկները տեսանք որ մեծ հողարլուրին վրայ կ'պտտէին :

Բուսաբանական պարտէզը սքանչելի է, կենդանիները այն տեղ շատ երջանիկ են : Արեւուն կամ շուքին տակ կ'պահեն զանոնք որպէս զի կարելի եղածին չափ իրենց բնիկ երկիրն յիշեն . Սակայն կը մտածեմ թէ անոնք որ արեւը կ'սիրեն այնքան միամիտ չեն կարծելու որ իրենց բնավայրն են, վասն զի Լօնտօնի արեւն երեւելի չէ : Կ'պատահի նաև

ձմեռային օրեր որ գրեթէ ցորեկ ատեն մարդիկ զիրար չեն տեսներ : Այն ատեն կազեր կ'վառեն : Շատ կ'ուզէի տեսնել այս բանս :

Որչափ կառքեր կան Լօնտօն , Բարիզէն աւելի դէշէ : Շատ շուտ կ'երթան և առանց իրարու զարնելու : Հետեւակները անոնց մէջէն հանդիսա կ'անցնին , առանց հոգ ընելու անոնց շարժման :

Շատ հետաքրքրական բանի մը վրայ պիտի խօսիմ ձեզի , այսինքն նաևակայք : Գիտենք ամենքո թէ Անդլիա վաճառաշահ երկիր մ'է , թէ անդլիացիք աշխարհիս ամեն կողմ կ'երթան գեղեցիկ բաներ փնտռելու , Հնդկաստանէն կ'թերեն կերպասներ , աղամանդներ . Զինաստանէն թէյ , մետաքսեղէն , խնկենի , և նաև չինացիներ , Ուստի նաւեր կ'հասնին անհատնում հարստութեամբ լցուած : Ժամանակ մը երբ մեծ շոգենաւներ Հնդկաստանէն կ'գային , Դայմզ գետը նաւակներով կ'լեցուէր , որպէս զի ասլրանքներն առնեն և Լօնտրայի մթերանոցները փոխադրեն : Այս անդին վաճառքներէն շատերը կ'կորսուէին կամ կ'գողցուէին ճամբան : Ուստի մտածեցին որ Դայմզի վրայ քաղաքի նման բան մը շինեն : Մեծ նաւերը կ'ալտափին այս փողոցներուն մէջ որ անհատնում գետակներ են և ամեն մէկ վաճառականին խանութին դիմաց կ'կենան , և անմիջապէս կ'ալարպեն շոգենաւը , այս կերպով հիմակ բնաւ կորուստ չըլլար :

Ահաւասիկ ուրիշ նշանաւոր բան մը : Դայմզի տակէն անցայ առանց հովանոցի , առանց մոմէօծ գլխանոցի , և սակայն բնաւ խոնաւութիւն չզդացի

ոսքիս տակ : Եթէ կարող է թող ձուկ մը ինձի սկս
անցնի , վասն զի Դայմզի տակ փողոց մը կայ :

Եթէ ընթերցողն երկաթուղիով ճամբորդած է ,
անշուշտ անցած պիտի ըլլայ այնպիսի մութ տեղերէ
որ դունիլ կ'ըսուին : Այս անցքերն ապառաժներու
կամ լեռներու մէջ փորուած են : Լաւ ուրեմն այս
իմ յիշածս Դայմզին տակ պեղուած է : Կարծէի թէ
Անդլիացիք մի միայն զուարձութեան համար շինած
են այս ճամբան , բայց չէ՝ օգտակար է , կամուրջ
մը չպիտի կարենային այնքան բարձր շինել որ նա-
ւերը տակէն անցնէին և վաճառականներու համար
անպատճառ հաղորդակցութեան միջոց մը պէտք
էր : Ուստի Պ. Պրինիլ Փրանսացին ձեռք զարկաւ ,
այս նշանաւոր Գունէլն շինելու : Երկու կողմէն որ-
բահներ կան խանութներով : Այն տեղ սուրճ եւ
թէյ կ'ծախեն ինչպէս վերը :

ՈՒԽՄՈՆՏ Լօնտօնէն երեք մղոն հեռի է , Դայ-
մզին եղերքը : Շատ չքնաղ տեղ մ'է : Շատ անդ-
լիացի թագաւորներ այն տեղ մեռած են . ասոնց
մէջն է նաև Եղիսաբեթն՝ այն չար կինը որու վրայ
արդէն խօսեցայ : ՈՒԽՄՈՆՏԻ քիչ մը մօտ կ'դտնուին
Քիուի սիրուն ջերնոցները : Տարօրինակ սքան-
չելիք մ'է : Պտուտակաւոր և սանդուղով մը դէպ
ի վեր կ'ելնես , տեսակ մը պատշգամ կ'հասնիս , և
այն տեղէն կ'տեսնէս վարն տուներէն աւելի բարձր
ծառեր , ամեն երկրի հաղուագիւտ բոյսեր : Մայրս
միտքս եկաւ որ այնքան կ'սիրէ գեղեցիկ ծառեր
և ծաղիկներ :

Պ. Ենտղրսօն , ՈՒիշմօնտի մէջ աղւոր տուն մը ունի , հրաւիրեց նա հայրս որ ժամը երկուքին lunch ընելու երթայ : lunch , նախաճաշ մ'է ե . չէ խաղ , ինչպէս որ կարծեր էի առաջ , սակայն շատ զուարձացայ :

Այս կերակուրը բարի անդլիացւոց մէջ մեծ գործ մ'է , ճաշ ըսելու արժանի սեղան է . ինչու որ ապուրէն զատ ամէն բան կայ : Նիտակն ըսելով շատ լաւ մտածեր են թանը վերցնելով , ինչու որ Անդլիացւոց թանը շատ վատ է : Պ. Ենտղրսօն , երեք օր վար դրաւ մեզ : Մշուշը Տօֆէնի բնակիչ-ներուն չհամարձակեցաւ երեիլ , երկինքը պայծառ էր որքան ատեն որ մնացինք : ՈՒիշմօնտի աղւոր պարտէզներուն մէջ որչափ կ'վազէինք , և կայ վազելէն աւելի զրօսալի բան մը , երբ մանաւանդ չը դիտես թէ ուր կ'դիմես : Զգիտեմ ինչ է պատճառը , բայց ընթերցողը կրնայ ըսել թէ ճշմարտութիւն մ'է ըսածս : Հէրիի բոլոր բարեկամները լընջի ժամանակ կ'գային : Նախ անձայն կ'դիտէին զիս , բայց երբ անդլիարէն հարցուցի եթէ կ'ուզեն զընդավան (croquet) խաղալ , տեսայ Անդլիացւոց զարմանքը իմ անդլիերէն լեզուն խօսելուս վրայ :

Ա՞հ , որչափ կ'սխալին տղայք երբ չեն աշխատիր որ բան սորվին : Կ'տեսնէք որ եթէ անդլիարէն լեզուն շգիտնայի , այսքան ախորժ չպիտի զգայի Լօնտօնի մէջ և կարելի է հայրիկն ալ դիս հետը չի պիտի ատնէր :

Պ. Ենտղրսօնի սպասաւորներուն մէջ , դեղնա-

գոյններ ալ կան : կատակ չեմ ըներ : Ասոնք հընդիկներ են , այսինքն Հնդկաստանի բնիկներ : Շատ զարմացայ տեսնելով որ իմ անգլիական յեղուս չեն իմանար :

Հէրի բացատրեց ինձ թէ այս . մարդիկ մասնաւոր լեզով կ'խօսին , որ է Հինտուսրանի : Իրենց տէրերը սլարտաւոր են զայն սորվելու , վասն զի բնիկներն , հաղիւ կ'յաջողին անգլիարէն քանի մը խօսք սորվիլ :

Իրիկուն թէ յի կ'նստէինք , Հէրի և ես , և որովհետեւ հայրիկը Պ. Ենտըրսօնի հետ Հնդկաստանի և Անգլիացւոց վաճառականութեան վրայ կը խօսէր , շատ կարեւոր բաներ սորվեցայ : Ինչու որ Պ. Ենտըրսօն տեսնելով որ այս սլատմութիւններն իմ հետաքրքրութիւնս կ'շարժէ , հօրս երկար բարակ սլատմածներն պարզ կերպով ինձ կ'մեկնէր : Ուրիշ սլատմառ մ'ալ ունէի լաւ մտիկ ընելու : Հէրի կը պնդէ թէ Անգլիացիք Թրանսացւոցմէ աւելի լաւ գիտեն աշխարհագրութիւնը : Ես ասոր հակառակը պնդեցի առանց գիտնալութէ ըստծո ճիշդ է թէ ոչ , բայց հայրիկը Հէրիին իրաւունք տալուն համար , միտքս դրի աշխարհագրութիւնը լաւ սորվիլ , և որովհետեւ սեղանատունը Հնդկաստանի մեծ և աղւոր աշխարհացոյց տախտակ մը կախուած է , այն տեղէն սկսայ դիտել թէ Պ. Ենտըրսօն և իր դեղնագոյն ծառաներն ալ աշխարհագրութեան կ'մասնակցէին :

Հէրի շատ գոհ եղաւ երբ խնդրեցի իրմէ որ

Հնդկաստանի վրայ տեղեկութիւններ տայ , ինչու
որ , արդէն ամեն բան տեսածի պէս զիտէ և ա-
պագայ ճամբորդութեանց վրայ կ'խօսի : Հիմակ ձեր
աշքին առջեւ բերէք երկու բարեկամներ աշխար-
հացոյց տախտակի մը վրայ ծռած և Հէրին՝ որ ինձ
ցոյց կ'տար հարաւային Ասիոյ երկու մեծ թերա-
կղզի , Պէնկալի և Գանգէսի ծոցերով զատուած :
Այս թերակղզիներուն մին կ'կոչուի Հինտուադան:
Ահա մանաւանդ այս երկիրն Անգլիացիք շատ ա-
ռուտուը կ'ընեն :

Հէրի պարագ տեղը ճոռոմաքան ոճ մը կ'գոր-
ծածէր որ ամեն ինձ բացատրէ , կ'խոստովանիմ
որ բնաւ համ չէի առնէր : Թէ և իրեն ըստի , մա-
նաւանդ թէ ուշադրութեամբ մտիկ ընել կ'ձեւա-
ցնէի : Հիւսիային կողմը Հիմալայա լեռները նայե-
լով , աշխարհիս ամենէ բարձրերը (Հէրի չմոռցաւ,
այս ըսելու , վասն զի մերիններն իր սրտին վրայ
կ'ծանրանային) արեւելքան հիւսիսային կողմը , Գա-
րոյ լեռները , հիւսիսային արեւմտեան կողմը Հին-
տուքուշ , և արեւմտեան կողմը կողմէ լեռներու
շղթան : Ապա զետերը , Գանգէս , Ինդոս և ուրիշ
գետեր , որոց անունը չեմ յիշեր :

Եթէ ճամբորդութեան ժամանակ Պ. Հէրսան
աշխարհագրութեան դաս մը տար ինձ , անշուշտ
մտիկ չպիտի ընէի , մինչդեռ բարեկամիս տուած
բացատրութիւնները ամենայն ուշադրութեամբ մր-
տիկ կ'ընէի :

Շատ անգամ դիտած եմ , որ երբ բռնի գործ

մ'ընելու ստիպեն զիս , բնաւ կատարել չեմ ուղեր : Այնպէս կ'երեւի ինձ թէ հակառակը պիտի պատահի , բոլորովին ստոյգ եմ :

Քաղաքները աւելի զուարձալի էին : Այսչափ դիտնալով բաւական պիտի սեպէի , ինչպէս եւ դուք , բայց հետի բարեկամս այս կալկաթայի վը-րայ տեղեկութիւններ առած է գրեթէ ծնելէն ի վեր , իր դիտցածները ինձ հաղորդելու առիթը չփախցուց : Մանաւանդ թէ , չի ուզեր որ ըսեն ինձ թէ կալկաթա մեծ և գեղեցիկ քաղաք մ'է , Հուկի գետին եղերը շինուած :

Զսիրած մէկ բանս ալ այս էր որ իրարմէ շատ տարբեր երկու քաղաքներ կան , մէկը աղքատ-ներուն համար , որ white town (սեւ քաղաք) կ'կոչուի , որու մէջ միայն հիւղեր և թշուառներ կ'տեսնուէին : Միւս փողոցը black town (սպիտակ քաղաք) վառա-ւոր սքանչելի քարափներով , Եւրոպիոյ տուներուն պէս գեղեցիկ , և պալատ մը կառավարիչին համար :

Հէրի նկարագրեց նաեւ վելեամ ամրոցը , ուրտեղ շատ թնթանօթներ կան : Քիչ մնաց որ նորէն կուուի պիտի բռնուէինք , ինչու որ ես կը հաստատէի թէ վիլեամը կրընօպլի ամրոցէն աւելի մեծ բան մը չէր : Աակայն իրաւունք տուի անոր մտածելով որ բարեկամիս տունը կ'գտնուէի , եւ անշահ բան էր կուուիլ հետը կրընօպլի ամրոցը պաշտպանելու համար , և թէ ինքն ալ կրնար ինք-ղինքը պաշտպանել , եթէ գաղղիացիք վրան յար-ձակէին :

Վերջապէս իր կալկաթայէն ելնելով , միշտ մեր
մատերուն ծայրով՝ դացինք շիտակ , Պունկալ ,
Մատրաս , Ակրա , Առւրատ , Պոմպէյ , Քաշմեր :

Հէրի ինձ ըստ , Հնդկաստանի փոքրիկ վաճա-
ռականի մը պէս , ինչ որ այս քաղաքները կ'ար-
տադրեն Անգլիոյ վաճառականութեան , ինչպէս ,
շաքար , բրինձ , ծուխ , մետաքսեղէն , բամպակ
ևա ևա :

Հէնրի քաջ գիտնալով թէ կ'սիրեմ կենդանինե-
րը , խօսեցաւ ինձ փիղերու , առիւծներու , յո-
վազներու , կոկորդիլոսներու և օձերու վրայ , որ
Հնդկաստանի մէջ կ'գտնուին : Աստ ելանք սենեակ
մ'ուր տեղ շատ յարդամած թուշուններ կային մեծ-
ու սրբտիկ : Ուժանք կանանչ փետուրներ ունէին և
կարմիր գլուխ , ուրիշները կասրոյտ և սեւ , այլք
ոսկիի պէս դեղին . ի՞նչ գեղեցիկ տեսարան կ'ըն-
ծայեն աչքին՝ երբ այս չքնաղ թուշունները օդին
մէջ իրենց թեւերը տարածելով կ'թռչին : Հէրի կը
հիանար տեսնելով որ շար հետաքրքիր մտիկ կ'ը-
նեմ և շարունակեց :

«Հէնրիկ , ըստ Հնդկաստանի մէջ կան ան-
ստառներ ուր ծառերն անուշ հոտ մ'ունին ճանտա-
նի փայտէն : »

Գիտեմ այդ , Մարդիտ ճանտանէ տուփ
մ'ունի :

ՀԵՐԻ

կան նաեւ հնդիկ ընկուզ , հնդկեղեգն , ոսկիի
և արծաթի հանքեր , աղամանդ , դոհար , մեղեսիկ :

Հէրի այս ամեն հարստութեանց վրայ այնպէս
կ'խօսէր որ կարծես թէ իր հօրն էին , և կ'ձանձ-
րանայի : Յանկարծ յիշեցի առջի օրուան խօսակցու-
թիւնը և ըսի բարեկամիս .

Կ'մոռնաս քոլէռան , երեք իրիկուն հայրդ կ'խօ-
սէր» : Զարասիրտ էի , այնպէս չէ , ետքը զգացի
և խօսակցութիւնը դարցուցի :

«Հէրի ըսի , խօսէ ինձ Քաշմերի վրայ : Եթէ
Մարգրիտ այն տեղ գտնուէր անշուշտ գեղեցիկ
շալերը այդ քաղաքը չսիտի թողուր անցնէր : »

Հէրի խնդաց և ըսաւ , արդարեւ Քաշմերի մէջ
աշխարհիս ամենէ գեղեցիկ շալերը կ'ժինեն և տա-
րին գրեթէ վաթսուն հազար հատ կ'շինեն : Դի-
պէս լեռան վրայ արածւող այծերուն բուրդը կը
գործածեն . ինչպէս որ տեսանք աշխարհացոյց
տախտակին վրայ : Քաշմերի հովտին արևմտեան
կողմը : Եթէ բարեկամիս խօսքը ճիշդ է , այծերը
միայն այն բարձը տեղերը լաւ կ'ապրին , օդի
պէտք ունին , յած տեղերը կ'նիհարնան :

Հէրի տուաւ ինձ գեղեցիկ տափակ շիշ մը ո-
րու մէջ վարդի հիւթ կար որպէս զի մայրիկին և
Մարգրիտին տամ : Պ. Ենտղրսօնի տունը հետա-
քրքրական բաներով լեցուն է : Աեղանատան մէջ
սեւ և ոսկի կահերը Քաշմերէն բերած է :

Հիմակ պիտի զարմանաք և գոհ ըլլաք կարծեմ

Պ. Էնտըրսօն իր սենեակը կանչեց մեզ, ուրտեղ հօրս հետ նստեր էր : Եղեգնեայ փոքրիկ դաւազան մը դոր Հնդկաստանէն բերած էր, և Մարդրտին համար մէկ դաղտակուր արկղ մը պամպուի ազնիւ փայտէ շինուած ինձ տուաւ, բացի զայն, և մէջը դտայ մեղեսիկէ վզնոց մը :

Կարծեցի թէ ամէնն այս էր . բայց ո՛չ, Պ. Էնտըրսօն սնտուկ մը բացաւ, դոյնզդոյն քաշմերներ հանեց և ըստ :

«Կ'աղաչեմ, սիրելի Հէնրիկ, Հէրիին բարեկամը, մօրդ համար շալ մ'ընտրէ :»

Հայրիկն ուզեց մերժել, ես շուտ մը աղւոր կասոյտ շալ մ'առի, ինչու որ իմ սիրուն մայրիկս այս դոյնը շատ կ'սիրէ : Այնքան դո՞ն էի որ ալ իմ դաւաղանիս վրայ չէի մտածէր :

Նոյն օրը ճաշէն ետքը, Լոնտօն վերադարձանք, Պ. Էնտըրսօն ուզեց մեզի ուզեկից լինիլ. շատ քաղաքավար է :

Անգլիոյ մէջ ինչպէս ֆրանսա շուտ կ'անցնին ժամերը, և շատ զարմացայ երկրորդ օրը՝ երբ հայրիկն ըստ :

«Իմ փոքրիկ Հէնրիկս, երթանք սլիտի նորէն Հէրիին այցելութիւն մ'ընելու և Բարիկ վերադառնանք, ուր տեղ անհամբեր մեղ կ'սպասեն :»

Տխուր էի, միանգամայն գո՞ն : Մարդրտին անեղներէն զատ, ուրիշ ընծայ մը տանելու պարտաւոր էինք : Ընծային որոշումը ես պլիտի ընէի :

Շատ մտածելին ետքը, որոշեցի առնոււլ մոմէ

պիպեկ մը՝ որ ձիշդ անգլիական գոյն, մազեր և ձեւեր ունէր:

Հայրիկն կ'խնդար շփոթութեանս վրայ, իային խարտեաչ, թուխ, մեծ, պղափկ պէպէկներ, բոլորն ալ կ'ուզէի առնուլ:

Որոշեցինք վերջապէս որ նախաճաշէն ետքը երթանք այն երեւելի պէպէկն առնուլ, երբ սպասաւորը ներս մտաւ ըսելով թէ խեղճ մարդ մ'անպատճառ կ'ուզէ հօրս հետ խօսիլ:

«Չորրորդ անգամն է որ կ'գայ, ըսաւ ծառան չկրցայ վռնտել:»

— Ներս կանչէ այդ մարդը շուտով, ըսաւ հայրիկը յանդիմանական ձայնով մը:

Խեղճ մարդը ներս մտաւ: Մաքուր հագուածէր, թէ և շատ աղքատ կ'երեւէր: Ոչ գեռատի էր և ոչ ծեր, բայց բաղդաւոր ըլլար, պիտի կարծուէր թէ նորահասակ է:

«Ներեցէք, պարոն, դուք ֆրանսացի էք նոյնպէս և ես: Չորս օրէ ի վեր ձեզ տեսնելու սպատիւն ունիմ, քանի պատուհանիս տակէն կ'անցնէիք: Մինչեւ կրին—բարք, ետեւէդ եկայ որ ձեր պաշտպանութիւնը խնդրեմ, կ'ուզէի խօսիլ, ձեզմէ ծառայութիւն մը խնդրել:

Շատ լաւ պիտի ընէիր, բարեկամս, պատասխանեց հայրիկս այնպիսի բարեսրտութեամբ մը, որ խեղճ մարդուն վախը փարատեց: Նստիր եւ պատմէ ինձ քու պատմութիւնդ ըսաւ:

ԲԻԵՐ ԼԵՐՈՒԱ

Իմ պատմութիւնս շատ պարզ է, պարոն, ա-

նունս Բիէր Լըրուա է , Շալօն-Սիւր-Սօնէն եմ ,
աղւոր գաւառ մը , պարոն , արհետով կօշկակար ,
շատ համեստ աղջկան մը հետ ամուսնացայ , և եր-
կու տարիի չափ երջանկութիւնը մեզի հետ էր :
Վերջապէս գործերս գէշցան և յանկարծ բոլորովին
պարապ մնացի : Վեց տարի կայ պարոն , որ ան-
խոհեմ մարդ մը մեզ ըստ . Լոնտօն դաշէք , այն
տեղ ոսկին և արծաթը բահով կ'վաստիին : Ես
հաւատացի , ծախեցի փոքրիկ տունս , վճարեցի
պարտքս , և կինս ու զաւակս առնելով եկայ .
տղաս երկու տարեկան էր , ունէինք միայն շատ
թէթև քսակ մը :

«Յանձնարարական գիր մ'ունէի , որ Բարիզի
պանդոկին մէկ սպասաւորը տուաւ ինձ : Իմ չնոր-
հակալիքս յայտնելու համար անոր զոյդ մը կօշիկ
շինեցի : Նամակն այդչափ բան չէր արժեր : Շատ
գէշ ընդունելութիւն գտայ : Երկու օր ետքը իմա-
ցանք ես և Մարիամ մեր սխալմունքը : Բայց ինչ
օգուտ , պարոն , երբ մարդ ունի կին մը և զաւակ
կ'ըսէ , ես անոնց օրապահիկը պիտի ճարեմ : »

«Շարունակ երթալ գալով՝ ֆրանսացի գործա-
ւորներու հետ ծանօթացայ : Վիրով տեսնուեցան
հետս : Անոնց չնորհիւ գործ գտայ : Դշրազդաբար
ծախքս օրողչքէս աւելի էր : Գիւղն մարդ օդով
և արեւով կ'ապրի : Այս աեղ առտուընէ մինչեւ
իրիկուն աշխատելով՝ և գործ բնտուելու համար բա-
ւական տեղ քալելով հազիւ կարող էի վճարել ան-
շահ սենեկի մը վարձքը , և քիչ մը սնունդ ճարել
կնկանս և զաւկիս : »

ԱՇ , սիրելի պարոն , մեր բնիկ երկիրն հաց ունինք և լաւ հաց , բայց Լօնտոնի մէջ , նոյն իսկ հարուստին հացը աղքատին հացէն աղւոր չէ : Մեր տեղը գործաւոր մը ուրախ սրտով կ'ուտէ աղւոր հացը և ուրիշ բաներ չի փնտուէր : Մարիամ , այն սիրելի և սիրուն կինը , կարող չեղաւ գետնախընձորի վարժուիլ , մանաւանդ միայն գտնախնձոր ուտել : Ասոնց վրայ աւելցուր նաեւ մշուշը և խոնաւութիւնը : Խեղճ կինս , պարոն , որ այնքան թարմ , այնքան սիրուն էր , դեղնեցաւ և նիշարցաւ : Արտի հիւանդութենէ բռնուեցաւ և տարի մ'ետքը որբեվարի մնացի : »

Բիէր Լըրուա պահ մը լուեց , լալ կ'ուզէր :

ՀԱՅՐԻԿ

Խեղճ՝ մարդ , և բնչ կրնամ ընել քեզ օդնելու համար : Բարեկամ մ'ունիմ , կ'ուզե՞ս որ քեզ անոր յանձնարարեմ , ինչու որ պիտի մեկինք :

ԹԻԷՐ ԼԵՐՈՒԱ

Այդ չէ ուզածս , պարոն . ամէն բան պիտի ըսեմ քեզի , և ներէ ինձ , և ինչ որ կամիս ըրէ :

Սիրելի կնկանս մահուանէ ի վեր՝ միայն մէկ մտմտուք ունիմ : Այն է , թէ պառկիմ , թէ ելնեմ շարունակ աչքիս առջեւն է իմ գիւղս . Ռօնը և արել և կ'ըսեմ , Աղքատներուն Աստուածը , տա՛ր զիս իմ երկիրս :

Այն , պարոն , վեց տարիէ ի վեր այս աղօթքը կ'ընեմ : Բաւական կ'աշխատիմ , իմ վարձքս և կերակուրս կը վճարեմ : Բայց , պարոն , կ'նայիմ հիմա

որ երբեք չպիտի կարենամ ճամբորդութեանս ծախս-
քը ճարել, և միայն իմ վիճակս ունեցող գործա-
ւորներ կ'ձանջնամ։ Այն ժամուն որ ձեզ տեսայ
ձեր որդւոյն հետ, յոյս մը ծնաւ սրտիս մէջ։ Կ'ու-
զէի սրտէս հանել այս յոյսը, բայց անկարելի եղաւ,
պարոն, շարունակ միտքս կը պաշարէ։

ՀԱՅՐԻԿ

Իրաւունք ունէիր, բարեկամս, կարելի է որ
միջոց մը գտնեմ որ ձրի ընես ճամբորդութիւնդ
զաւկիդ հետ։

ԲԻԵՐ ԼԵՐՈՒԱ

Աստուած իմ, իրաւունք չունէի՞ հաւատալ ձեր
բարեսրտութեան, պարոն, սիրտս վկայեց դէմքդ
տեսնելով որ ընտիր մարդ մ'էք։ Եւ մանաւանդ
տեսնելով այս փոքրիկ պարոնը, բարի, այնքան սի-
րուն տէսք ունի, որ անշուշտ բարի հայը մը պիտի
ունենայ։

ՀԱՅՐԻԿ

Զաւակդ քանի՞ տարեկան է, բարեմիտ մարդ։

ԲԻԵՐ ԼԵՐՈՒԱ

Իմ փոքրիկ՝ Մարիս ութ տարեկան է, պարոն։
Եթէ տեսնէք, հրեշտակի կ'նմանի, այլ թշուառ։
Կրցածիս չափ խնամեցի զինքը, քանի քանի ան-
դամ դրկացս մէջ տաքցուցի զինքը։ Արդէն իսկ կը
ծառայէ, պարոն, իր անկողինը կ'պատրաստէ,
կ'աւլէ, սենեակը կ'հաւքաէ։ Բնաւ չի գանդատիր։
Անդամ մը՝ միայն անդամ մը լացաւ, վասն զի մի-
այն պաղ գետնախնձոր ունէինք ուտելու։ Սակայն

պարոն , մի կարծեր թէ ողորմասիրութիւնն ալ կը պակսի այս երկրիս մէջ : Ո՞չ , ո՞չ , բնաւ , կան բարի հոգիներ : Ես որ կ'խօսիմ ձեզի հետ , կ'ձանչնամ այս տեղ այնպիսի տիկիններ , որ՝ թէև կրնան Հայտիարք երթալ պատիլ կամ հանդիսատ իրենց տունը նստիլ , բայց ընդհակառակն կ'վազեն Ստրետ փողոցը , կամ ուրիշ մարդաշատ տեղեր , որպէս զի աղքատութիւնը մօտէն տեսնեն և մսիթարեն : Անդամ մը հիւանդացայ և այս տիկինները խնամեցին զիս , և կրնամ ըսել թէ առանց անոնց օգնութեան պիտի մեռնէի : Եւ երբ իմ փոքրիկ Մարիս կարմըրուկ ունեցաւ , կրնամ ըսել թէ տաս հիւանդապահ դայեակիներ կային իմ մօտ . զաւակս մինակ չէին թողուր բնաւ , այս տիկինները հետզհետէ բոլոր օրը կ'խնամէին զանի :

ՀԱՅԲԻԿ

Բարեսիրտ մարդ , մեր նախաճաշին մնացորդը հետդ տար և ժամը չորսին եկուր որ ընելիքս ըսեմ :

ԲԻԵՐ ԼՅՈՒԽԱ

Ո՞հ , պարոն :

Անկարող եղաւ շարունակել , դուրս ելաւ , դէմքը դաշկինակին մէջ պահելով :

Երբոր Բիէր դուրս ելաւ , հօրս հարցումներ կ'ընէի իմանալու համար թէ ինչ պիտի ընէր այս բարի մարդուն :

« Ժամանակը կարծ է , ըսաւ հայրիկս , և քըսակիս մէջ հաղիւ պէտք եղած դրամն ունիմ Բա-

րիկ հասնելու համար : Անշուշտ ուրիշ ճար մը
կայ . . . :

— Ո՞հ , այո՞ , հայրիկ , լաւ միջոց մը դտի գո-
չեցի ուրախութեամբ մը , կ'սիրեմ Բիէր և իր փոք-
րիկ աղջիկը :

— Բայց եթէ այդ միջոցը քեզ զրկում պատ-
ճառեր , տղաս , միթէ միշտ լաւ պիտի գտնէիր :

— Այո՞ , բայց ես զրկում մը չեմ տեսնէր :

— Մարգրիտին պէտէկը , Հէնրիկ :

— Մարգրիտին պէտէկը^o , Այդ անկարելի է ,
հայր . Պարոն ինտըրսօնէն ստակ ուզէ կամ մայրի-
կին գրէ որ մեզ ստակ զրկէ , քիչ մը կ'սպասենք :

Ցաւէս կ'խեղդուէի մտածելով որ քրոջս ընծան
պիտի զոհեմ : Բիէր աչքիս բոլորովին գէշ մարդ-
մը կ'երևէր որ կ'գար գողնալ երջանկութիւնս զոր
ամեն բանէ վեր կ'դասէի : Ներէ ինձ , սիրելի ըն-
թերցող , չեմ կրնար չմտածել որ հայրիկը եթէ
բարկասիրտ ըլլար այս փոքրիկ ծախքը բանի տեղ
չէր դնէր , ես ինքովինքս աւելի բարի կ'նկատէի :

Բարեբաղդաբար բոլոր այս մտածումներս չի
պահեցի և ամէն ինչ լալով յայտնեցի հօրս (առա-
ջին անգամն էր որ Անդիոյ մէջ կ'լայի) :

« Մտածենք Հէնրիկ , ըստ հայրս առանց բար-
կանալու , թէպէտ և Պ. ինտըրսօն դիս բարեկամի
պէս ընդունեց , բայց ծանօթ մ'եմ իրեն համար ,
և արդարեւ չեմ կարող փոխ ստակ խնդրել այնպիսի
մարդէ մ'որ մեզ այնքան պատուեց և ընծաներ
տուաւ : Կրնայի ուշացնել երթս , զիտնալով որ մայրդ

և քոյրդ պիտի վշտանան եթէ Բիէրին խոստանամ
Լօնտօնէն մեկնելու համար պէտք եղած ստակը
զրկել իրեն . խեղճ մարդը շատ պիտի այլայլի կար-
ծելով որ օտարական մ'անշուշտ զինք պիտի մռո-
նայ և իր զգացած ուրախութիւնը որու դուն ա-
կանատես եղար տրտմութեան պիտի փոխուի :
Ուստի Մարգրիտին պէպէկը զոհելը աւելի մեծանձ-
նութիւն և աւելի իրաւացի չէ : Ոհ , քու փոքրիկ
քոյրդ շատ աւելի շուտով պիտի հաւանէր :

ԵՍ

Ճշմարիտ է , բայց ես ալ զրկուիմ քրոջս ուրա-
խութիւն պատճառելու հաճոյքէն :

Պատասխանի չսպասեցի , աչքերս վար առի և
շուտ մ'ըսի . Բիէրին տուր ստակը :

ՀԱՅՐԻԿ

Դու շատ լաւ տղայ մ'ես : Դու այդ աւետիսը
պիտի հաղորդես Բիէրին :

Այս յոյսը քիչ մը սիրտ տուաւ ինձ , բայց իրօք
միշտ անմիխիթար էի որ շուտ մ'որոշումս չըրի գեղ-
ձան մազերով փոքրիկ պէպէկ մ'որ շարունակ աչ-
քիս առջեւ կ'երեւար :

Հայրիկը զիս հետը տարաւ Բիէրին վրայ տեղե-
կութիւն առնելու : Նախ իր առջի բնակութեան
տեղը գացինք , այսինքն Մարի լը Պօն փողոցն եւ
ապա Ստրէնտ : Բոլոր դրացիներն միաբերան Բի-
էրին վրայօք լաւ խօսեցան : Եւ նոյն փողոցին մէկ
ոստիկանը մեզի շատ նալաստաւոր տեղեկութիւն-
ներ տուաւ :

Բայց մի՛ կարծէք թէ կ'փափաքէի որ աննպաստ լուրեր առնունք , ոչ բնաւ , այնչափ չարամիտ չեմ : Ընդհակառակն քիչ քիչ կ'մսիթարուէի : Շատ կը փափաքէի գիտնալ թէ ընթերցողն ալ ինձի կ'նըմանի , թէ չար և թէ բարի եմ : Կ'ուզէի հեղ ըլլալ և չըլլալ : Կարծես թէ երկու փոքրիկ տղայ էի , բայց բարի տղան միշտ երջանիկ կ'ընէ զիս :

Հազիւ տուն դարձեր էինք , որ Բիէր իր փոքրիկ աղջկան հետ եկաւ : Խեղճ մարդ , շատ կ'հալարտանար իր աղջկան համար , ինչպէս հայրս Մարգրիտին համար : Սակայն այս փոքրիկ աղջիկը աղւոր չէր , շատ դէշ հագուած էր բայց մաքուր : Մանաւանդ բան մ'աչքիս զարկաւ իր հագուստին մէջ , այսինքն իր կօշիկները , որ նոր էին : Շատ սիրուն կերպով բարեւեց , և երբ հայրիկն ըստաւ .

« Գո՞հ սիխի ըլլաս Ֆրանսա դառնալով : »

Պատասխան տալու տեղ հօրը վիզը պլուեցաւ :

« Օ՛ն ուրեմն , բարեկամս , պատրաստուէ , իմ պլտիկ տղաս ճամբու ծախքը սիխի վճարէ :

Այս խօսքերուն վրայ Լօնտօնի բոլոր պէտէկները աներեւոյթ եղան , և զգացի այն բանն ինչ որ զգացեր էի , կ'յիշէ՛ք , երբ անդամ մը մայրիկն պատւոյ վրայ խօսեցաւ ինձ : Կ'կարծէի թէ հարուստ մարդ մ'եմ , կարեսրութիւն ունեցող բարի և մեծանձն , և շուտ մը կ'ուզէի նաւ մտնել Բիէրի և իր աղջկան հետ :

Հայրիկը Բիէրին հինգ ֆրանք տուաւ , որպէս զի իր աղջկան համար շալ մ'առնու , ինչու որ օգը

կ'զովանար և խեղճ աղջիկը շատ թեթև հագուածէր : Ապսպրեց որ միւս օրը առատու ժամը իննին դան որ միասին մեկնինք :

Բարեսիրտ մարդն , ձիչդ ժամուն հասաւ , ինչպէս որ դիւրին է երեւակայել , իր աղջկան հետ երկու փոքրիկ ծրարով , բաւական էր ակնարկ մը նետել այս տարաբաղդ ճամբորդներուն թշուառութիւնն իմանալու համար :

Հայրիկն աղւոր նախաճաշ մը մեծարել տուաւ անոնց և շուտ մը ճամբայ ելանք :

Երբ որ ուրախ եմ , կ'ցատկտեմ , կ'խնդամ և կ'երգեմ : Գիտեմ որ մարդ մը չկրնար տղու ալէս ըլլալ . սակայն կ'յուսայի որ Բիէր Լըրուա խնդումերես պիտի երեւէր : Դեղներ էր և գրեթէ կ'դողար , և աւելի տխուր կ'երեւէր : Իր փոքրիկ աղջիկը կը վախնար և հօրը թեւերուն մէջ կ'պահուէր :

Ճամբորդութեան ժամանակ անշարժ կեցան իրենց տեղը : Իմ զարմանքս հօրս յայնեցի : Բսաւ ինձ թէ մեծ ուրախութիւն մը շատ անդամ թեթև տխրութեամբ կ'ծածկուէր , ուսկից գուշակեցի թէ այլ և այլ տեսակ երջանկութիւններ կան և թէ քիչ քիչ պիտի իմանամ :

Ծովը ալիք չունէր . կարծես մեծ գետ մ'էր : Ուստի գրեթէ ամենքն ուրախ էին : կ'խօսակցէին , կ'կարդային . կիները ասեղնագործ կ'ընէին : Ես ալ որ միշտ գնդակներ կ'պահեմ գրանիս մէջ , այն հանդարտ և հարդ գետնէն օգուտ քաղելով կը խաղայի :

իմ վորքիկ պաշտպանեալիս վրայ հոգ կ'տանէի,
և որովհետեւ ծովէն բռնուած չէր, անոր գեղե-
ցիկ քաքարներ կ'տայի, և իր հայրն ալ վերջապէս
ուրախ կերեւէր : Երբ որ Պուլօնյը երեւցաւ, կար-
ծես թէ խելքը կ'թոցնէր : Երբոր շոգենաւէն
դուրս ելանք դարձեալ՝ հայրիկն անոր մինչեւ Բա-
րիզ երթալու ճամբուն ստակը վճարեց, ապսպրե-
լով, որ գայ նորէն պանդոկը մեզ տեսնելու :

« Բարութիւնդ չափէն աւելի է, պարոն, չա-
փէն աւելի : »

Բայց որչափ որ մերժել կ'ցուցնէր, իր դէմքը
կ'ըսէր . « Շատ իրաւունք ունիս, պարոն, առանց
քեզի ի՞նչպէս պիտի ազատէի թշուառ վիճակէս :





ԳԼՈՒԽ ԻԵ.

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԵԱՆՑ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Պուլօնյէն մինչեւ Բարիդ ուղեւորութիւնն ինձ
առջի անգամէն աւելի երկար երեւցաւ : Վասն զի
մայրիկը և Մարգրիտը վերստին պիտի տեսնէի :
Եւ սակայն քանի կ'մօտենալինք իմ երջանկութիւնս
տիրութեամբ կ'խառնուէր : Ես որ կ'կարծէի թէ
մեծ վլաստ մը չէր քրոջս համար պէտէկ մը չբե-
րելս և այս ակամայ զանցառութեանս համար կը
սփոփէի , հիմակ կ'զգայի որ սխալեր եմ և Բիէրին
ֆրանսա գալովը բոլորովին գոհ չէի : Կ'սկսէի նորէն
հայրս ամբաստանել : Աւաղ , կ'տեսնէք որ միշտ
չարասիրտ տղայ մ'էի :

Աստուած իմ , ինչ աղւոր բան է Անգլիայէն Ֆը-
րանսա գառնալը , մայրիկն ու քոյրը կայարան գըտ-
նել պագնել և պագնուիլ , կարելի է ձամբորդու-
թութեանց մէջ այս ամենէ լաւն է :

իրաւ հայրիկը շատ ստակ չունէր : Ստիպուած էր Բիէրին ապազրել որ պանդոկ գայ , որպէս զի մինչեւ Շալօն ճամբռու ծախքը վճարէ :

Մայրիկը հարցուց ինձ թէ ո՞վ էր այն մարդը , դործը պատմեցի , բայց պէտէկին խօսքը չըրի :

Սեղան նստած էինք՝ երբ Բիէր իւր պզտիկ աղջկան հետ եկաւ : Մայրիկն ուզեց որ իրենց ճաշ տրուի , բայց անկարելի եղաւ զանոնք վար դնել : Կատէրին հազիւ ժամանակ գտաւ Մարգրիտին հիներէն ծրար մը կապել և անոնց տալ , որ բոլը տունը օրհնելով մեկնեցաւ :

« Ո՞հ , որքան բարի գործ մ'ըրեր ես , Գէորգ , այս բարեմիտ գործաւորը բերելով , ըստ մայրիկը : Շատ դոհ կ'ինիմ երբ ճամբորդութեան հաճոյքին բարի գործ մը կ'միանայ :

Մարգրիտ ինձ կ'նայէր և կ'խնդար : Օրիորդ Արապէլլա նաև աչքերը կ'բանար և մեր պատմութիւնները անշուշտ մտիկ կ'ընէր : Կարծեմ թէ Անդլիոյ համար ցոյց տուած զմայլումս օրիորդ Արապէլլային սիրտը բոլորովին գրաւեց :

Իմ օրաթերթու քրոջս ներկայեցի , բայց այնպէս գէշ մրոտուած էր , որ աղաչեց զիս բերնուց պատմել իմ ճամբորդութիւնս : Իմ պատմութիւնս երկար շեղաւ : Մայրիկը մեզ նշմար ըրաւ որ սենեակնիս քաշուինք :

Շուտ մը քնացայ և անդլիերէն երազեցի :

Կատէրին այնպէս ընդունեց զիս որպէս թէ մեծ վտանգէ մ'ազատեր էի : Անհամար հարցումներ ուզ-

զեց ինձ որպէս զի իմանայ թէ լաւ վիճակի մէջ
եմ և կարծես թէ կ'ցաւէր որ իր գէշ գուշակու-
թիւնները չիրացան : Գնդասեղներ և ասեղներ առ-
ուի անոր , և որչափ որ անհաշտ էր Անդլիոյ հետ ,
իմ ընծայներու վրայ քիչ մը խնդաց :

Մեր ճաշը շատ զուարձալի ելաւ : Հայրիկը
պատմեց բոլոր մեր արշաւանքները : Ատեն ատեն
ալ ես մէջ կ'մտնէի , թէ և այս բանն բնաւ չէին
ներեր որ ընեմ : Այս շնորհքն ինձ հասկցուց թէ
որքան կարեւորութիւն կ'ստանայ ուեւոր մը թէ և
ինք դեռահասակ ըլլայ :

Դայեակս պարոն կնտըրսօնի պարգեւները ներս
բերաւ : Մայրիկս շատ հաւնեցաւ շալը , թէ և կար-
ծածիս չափ ուրախութիւն չցցուց . իրաւ փորձ փոր-
ձեց խնդումերես երևնալու , որպէս զի հայրիկին
հաճոյք պատճառէ : Իսկ Մարգրիտ կ'ուզէր որ ան-
միջապէս իր վզնոցն անցունեն : Եւ իր գեղեցիկ
տուփին մէջ իր ամենէ աւելի սիրած բաներով լե-
ցուց :

Կարող էի պէտէկին պատմութիւնը պահել քը-
րոջս , բայց չկրցայ , գիտեմ ինչ է պատճառը , այն-
քան կ'սիրեմ քոյրա որ իրմէ բան մը չեմ պահէր :

Դիւյլի գացեր էինք :

ԵՍ

Մարգրիտ , քեզի բան մը պիտի ըսեմ , որու վը-
րայ շատ պիտի զարմանաս և կարելի է ցաւիս :

ԵՍ

Փափագ ունէիր անդղիական պէսպէկ մ'ունենալ, այնպէս չէ^o, քոյր իմ:

ՄԱՐԳՐԻՏ

Ո՞հ, այո, եղբայր իմ:

ԵՍ

Կարծէիր թէ աղւոր բան մը պիտի բերեմքեզի:

ՄԱՐԳՐԻՏ

Այո՛, բացց ուրիշ անդամ պիտի բերես :

ԵՍ

Իրաւոր յանցանքը իմս չէ, և բաւական լացի, երբ կ'ըսեմ թէ յանցանքն իմս չէր կ'սխալիմ, եթէ շուտ որոշէի գեղեցիկ պէսպէկ մ'առնելու, որ աշքերը և բերանը կ'բանար, և քիչ մը լեզուն կը քաշէր, այսպէս չպիտի պատահէր :

ՄԱՐԳՐԻՏ

Լեզուն կը քաշէ՛ր, եղբայր իմ:

ԵՍ

Այո՛, քոյր իմ:

ՄԱՐԳՐԻՏ

Ո՞հ, Հէնրիկ, ի՞նչ ըրեր ես ուրեմն :

ԵՍ


Հայրիկն գրեթէ ալ ստակ չունէր վերջերը, Կ'ուղէր մեկնիլ և նիկըն ալ կ'ուզեր բերել: Ուստի հայրիկն ըստ՝ թէ չենք կրնար պէսպէկ մը գնել եւ միանդամայն Բիկըին ճամբու ծախքն ալ հոգալ: Մարգրիտ, կարծեմ թէ հայրիկն ուզեց ինձ զոհողութիւն մ'ընել տալ, այս անիրաւէ, դեռ փոքր եմ:

ՄԱՐԳՐԻՏ

Այդ մի՛ ըսեր, եղբայր իմ, վաս բան է : Հայ-



Ըսելով զիբար համբուրեցինք . . . Եր. 265



ըիկը բնաւ մեզ չխարեք : Կ'խոստովանիմ թէ պէտք մ'որ աչքերը կը բանայ ու կը գոցէ , մանաւանդ լեզուն կ'քաշէ , զիս ուրախութենէս պիտի խենդեցնէր : Բայց չեմ ուզեր ալ անոր վրայ մըտածել : Կ'ուզեմ մտածել թիէրին և իր աղջկան վրայ : Պէտք է որ դու այ անոր վրայ մտածես , այն ատեն երկուքնիս ալ գո՞յ պիտի ըլլանք :

ԵՍ

Քո՞յլը իմ:

ՄԱՐԳՐԻՑ

Եղբա՞յլը իմ:

ԵՍ

Կարծեմ թէ փոքրիկ աղջիկները աւելէ արժէք ունինքան թէ փոքրիկ տղայք : Եւ դո՞ւ :

ՄԱՐԳՐԻՑ

Զեմ գիտէր , Հէնրիկ , մայրիկի հարցնե՞նք :

Եւ առանց ուրիշ խօսք ըսելու զիրար համբուրեցինք :

Պարոն մը մեզ տեսաւ և գոչեց . ո՞հ , ի՞նչ աղնիւ մանկիկներ են :

Այնուհետև բնաւ այն պէտէկին վրայ խօսք չեղաւ , մինչեւ անգամ այն օրը , երբ պատահմամբ , քոյլս հատ մը ստացաւ : Յայանի է թէ մայրիկը այս պատմութիւնը գիտէր :

Կատէրին մեր մեկնելուն ամենեւին առարկութիւն մը չըրաւ , կարծեմ դուք ալ չպիտի պարանանաք եթէ իմանաք որ ոչ քոյլս և ոչ ես հոգ չըրինք Բարիդէն մեկնելով : Տօֆինէն շատ աւելի կ'սիրենք , և այն տեղ մանաւանդ մեզ շատ աւելի կ'սիրենք . երբ ամենքը մեզ տեսնեն ուրախ զուարթ պիտի ըլլան :



ԳԼՈՒԽ Ի Ը.

ՈՐ ՎԵՐՁԻՆՆ Է

Ահաւասիկ հասանք վերջապէս Տօֆինէ , իրաւի
աւելի լաւ կ'սեպեմ վերադարձը քան մեկնիլը :

Ահմենեւին չէի սխալած , մեր մշակներն ու ըս-
տասաւորներն , մեզ այնպէս ընդունեցին որպէս թէ
տարի մը կար որ գիւղէն մեկնած էինք : Չգիտեմ
եթէ իմ երեւակայութեանս արդիւնքն է այս , բայց
ինձ այնպէս կ'երեւէր որ նոյն իսկ խաղողները պի-
տի ուրախանային երբ տեսնէին որ մեր ձեռօք
պիտի հաւաքուին և ուտուին :

Ես ալ աւելի երջանիկ չպիտի լինէի , տեսնե-
լով նորէն մեր լեռները , մեր դարաստանը և մեր
կենդանիները եթէ Հէրիին հետ կալկաթայէն դառ-
նայի : Մեր շունը կ'ցատկէր , կ'հաջէր , մեզ կ'լը-
զէր : Խեղճ բարեկամ , իրաւ է որ շատ խաղեր ը-

րած ենք միտաեղ առանց զիրար խածնելու :

Պարոն Հէրսան ըստ ինձ թէ ժամանակը իրեն շատ երկար երեւցեր էր : Ես չեմ կարծեր, վասն զի շատ կարճ գտայ ժամանակն : Նոյնը պիտի ըլլար և Պ. Հէրսանին համար :

Կ'յուսայի որ նորէն պիտի սկսիմ իմ ուսմունքս և այս շատ օրինաւոր էր : Ուստի շատ զարմացայ տեսնելով որ հանգիստը դեռ կ'տեւէր : Ամեն օր նոր պտոյտ մ'էր :

Անցած էր արդէն այն ժամանակն երբ հայրիկը զիս ձիուն գաւակը կ'նստեցնէր, վասն զի ես ալ փոքրիկ ձի մ'ունէի, շատ լաւ կ'հեծնէի և ամէն օր դուրս կ'ենէինք : Ստիպուած եմ խոստովանիլ որ այս կրթութիւնը թէ և առողջութեանս օգտակար, չէր այնքան համեստութեանս համար : Երեւելի անձի մը տեղ կ'զնէի ինքզինքս, երբ որ դըղեկին գաւիթը կ'մտնէիք, և երբ ամեն մարդ ինձ նայէր որ հօրս քովէն կ'արշաւէի : Հետիոտն մարդիկ այնքան գութս կ'շարժէին որքան փոքրիկ եղացը երբ իր փայտէ ձիուն վրայ կ'նստէր :

Բայց յուսամ թէ պիտի հաւատաք եթէ ըսեմ որ այս փոքրիկ եղօրս համար բարի էի : Անոր հետ խաղալով հաճոցք կ'զգայի, թէ և չէի հասկնար թէ շատ ժամանակէ ի վեր արհամարհած խաղերէս ինք հիմա ի'նչ համ հոտ կ'առնէր : Կ'ուզէի որ մեծնար, որպէս զի միասին աշխատէինք, ինչու որ, Մարդրիտին հետ առած քանի մը դասերէս զատ, մեր ուսմունքը նոյնը չէին : Ամեն մարդ իմ բարձր հասա-

կիս վրայ կ'զարմանար , որ բնաւ չէր յարմարէր
կատէրինի մէկ քանի քմածին հաճոյ քին հետ՝ թէ
և պարոն Հէրսան կ'ջանար ուղղել :

Եթէ ուրախառիթ էր գարունը ինձի և Մար-
դրիտին համար , աշունն իր անուշութիւններն ու-
նէր , շագանակի ծառերուն տակ կ'փաղէի , մրգաս-
տանը և այգիները կ'թափառէի : Ինչպէս կ'ըսէ
մայրիկը , վերջին գեղեցիկ օրերին օգուտ կ'քաղէի :
Կ'երթայինք լեռները ծաղիկներ հաւաքելու , խո-
տեր ժողվելու , երբեմն հագուստներս պատռած
կ'դառնայի և փոքրիկ քրոջս ըրած քաջութիւններս
կ'ծախէի :

Ի՞նչ մեծ ուրախութիւն էր ինձի համար երբ
առտու մը կանուխ հօրս հետ կ'ելնէի և մտքէս ան-
ցածը կ'հարցնէի : Շատ երջանիկ էի և կարծէի թէ
միշտ այսպէս պիտի ըլլար , բայց արդէն դիտած
էք անշուշտ որ միշտ չսպասուած ժամանակ վիշտեր
կ'պատահին մարդոց : Ո՞հ , սիրելի ընթերցող , եթէ
զիս քիչ մը կ'սիրես ինչպէս որ կ'յուսամ , պիտի
ցաւիս վրաս :

Գեղեցիկ եղանակին՝ մեր բարեկամներ և դրա-
ցիներ ստէպ մեղի հետ տեսնուելու կ'գային : Չ'էր
անցնէր օր մ'որ կառք մը չկենար դրան առջեւ ,
և շատ անդամ կ'տեսնէինք փոքրիկ բարեկամներ
դռնակէն դուրս կախուած :

Զկայ այնքան զմայլելի բան մը , երբ շարադ-
րութեան դժուար նիւթով մը զրաղած մէկն , որ-
քան կառքի մ'անիւներուն ձայն որ գաւիթ կ'մըտ-

նեն, իրը թէ մէկը դար և ականջիղ վար ըսէր .
« Բարեկամ, անակնկալ բան մը կ'հասնի, կարելի
է նորեկները փոքրիկ բարեկամներ են, և քու ներ-
կայութիւնոց անհրաժեշտ է : Անշուշտ ճաշը ամեն
օրուընէ աւելի գեղեցիկ պիտի ըլլայ, յուսալի է
որ ամեն բան ուտես և վերջն բերդախաղ խաղաս :»

Կ'տեսնէք որ կեղծաւոր չեմ, բայց պէտք չէ
կարծել որ իմ պակասութիւններս սիրուն կ'գտնեմ :
Ո՞չ, միտքս դրած եմ ժամանակին ուղղել իմ թե-
րութիւններս : Մեր ծեր բժիշկն առած մը կ'ըսէ
զոր ի գործ կ'զնեմ երբ ինձ յարմար երեւի : Ո՞վ
որ ծանր կ'քայի, ապահով կ'քայի : Դարձեալ այս
բարի բժիշկը (փորձառու անձ մ'է) անդամ մը մօրս
ըսաւ, թէ շատակեր տղաք առ հասարակ առողջ
կ'ըլլան : Եւ որովհետեւ ներկայ կ'գանուեի, մայ-
րիկն երկար բարակ խօսեցաւ անմարսողութեան
վրայ : Բայց և այնպէս չեմ ուզեր աւելի չար ցոյց
տալ ինքզինքս, քան ինչ որ իրօք չեմ ունեցեր եւ
ամօթապարտ պիտի մնայի եթէ որկրամոլութեան
ոպատճառաւ հիւանդ անայի :

Հիմակ ընթերցողը դիւրաւ կրնայ երեւակայել
իմ վարած կեանքս, արշաւներ, զուարձութիւններ
լուններու մէջ էշերով կամ ոտքով, փոքրիկ տղոց
հետ, գնդախաղ, օդապարիկներ, մտրակներ, ճա-
շիկներ, զոր կատէրին կ'պատրաստէր . ոստումներ,
ցնծութեան աղաղակներ, և անձրեւի ոչ կաթիլ մը,
թէ և այս ամէնն յանկարծ ջուրն ընկան և ան-
հետ եղան :

Առատու մը ճաշի ժամանակ , հայրիկը մեծ նամակ մ'ընդունեց , արտասովոր գիր մը , վրան մեծ կնիք և զանազան բաներ կային : Պատերազմի պաշտօնեայն էր որ կ'գրէր հօրս թէ պէտք էր զօրադընդին երթայ միանայ : Մօրս սիրաը խաղաց , ինչու որ հայրիկը կ'կարծէր որ դեռ վեց ամիս ևս մեզի հետ պիտի մնար :

Երբ Մարգրիտ և ես նախաճաշը ըրինք , մեզ զրկեցին : Պարոն Հէրսան և օրիորդ Արապէլլա դիտմամբ մեզի ընկերացան որպէս զի հայրիկն ու մայրիկը առանձին թողուն որ խօսակցին :

Ո՞հ , որքան կ'փափաքէի լսել անոնց խօսակցութիւնը : Եւ սակայն մեծ պակասութիւն է այսչափ հետաքրքիր ըլլալը , նամանաւանդ դիտած էք անշուշտ որ գէշ լուրերը չուտ կը հասնին : Իմ խոհեմութեան շնորհիւ (որովհետեւ զգաստացած էի) , տասն և հինգ օր ևս ժամանակս աղւոր անցուցի : Ահա պատահածն , լերան մը մէջ տեղն ուր սովորաբար նախաճաշ կ'ընէինք , հայրիկն ըստ ինձ .

« Սիրելի տղաս , քանի մը շաբաթէն պիտի երթամ կոսդանդինա իմ զօրագնդիս միանալու : Քեզ մէ շատ գոհ եմ , և սակայն օդտակար կ'գտնեմ քեզ վարժարան զրկելը : Հիմակ այն տարիքն ունիս որ լաւ տղայ մը ուրիշ տղոց հետ գտնուի , և ինչպէս կ'ըսեն մարդու կարգն անցնի : Ամենքս ալ լիօնքաղաքը պիտի երթանք ուր գործեր ունիմ , եւ քանի մ'օրէն վարժարան պիտի մտնես : Վստահ եմ որ հիմակ բաւական խելահաս ես և վիշտ չես պատ-

Ճառէր մօրդ : Գիտես թէ որչափ կ'սիրէ իր փոք-
րիկ Հէնրիկը :

Այս խօսքին վրայ սկսայ լալ :

« Ես ալ վարժարան գացած եմ, վրայ բերաւ
հայրս, Նորիկ և Պող անցած տարի մտան դպրոց :
Ամեն մարդ դպրոց կ'երթայ :

Ամեն մարդիկ : Այս վերջին նկատումը իմ ա-
րիութիւնս գրգռեց : Սկսայ իմ կօշիկներս և եր-
կաթէ գաւաղանս քննել, կ'մտածէի Պօղին և Նո-
րիկին վրայ և հայրիկն երբ խօսք տուաւ անոնց
գացած վարժարանը դնել զիս, կ'պարտաւորիմ խոս-
տովանիլ, որ իմ վիշտս դադրեցաւ, այն մեծ ամ-
պին ալէս որ առտու վախս պատճառեր էր մեզ :

Շատ հաճելի է մտածել թէ վիշտը այսպէս շու-
տով կ'փարատի . պարապ տեղը կ'դառնայ, մարդ
կ'մխիթարուի :

Մեր պտոյտն ընելու միջոցին հարցմունքներ կ'ուղ-
ղէի հօրս, որոց հայրիկն սովորականէն աւելի ա-
նուշութեամբ կ'պատասխանէր :

Սակայն որչափ որ մարդու կարգ պիտի մտնեմ
կ'ըսէի, կ'տեսնէի նաև թէ ինչ անուշութիւններ
պիտի կորանցնէի, նաև մայրիկս, սիրական քուրիկս
և վորքիկ եղբայրս, վերջապէս կատէրին իր ա-
մենօրեայ տուրմին դասը ձեռքը բռնած :

Կ'հաւատաք, ցաւ կ'զգայի նաև պարոն Հէրսա-
նէ բաժնուելու վրայ : Բարեսրատութեամբ կ'վար-
ուէր մեղի հետ, մեր թեթեւ հիւանդութեանց
ժամանակ : Թիթեռնիկներու աղւոր հաւաքածոյ մը

ունէր : Գիտէր նա լեռներու բոյներուն անունները , վերջապէս ինքն պատճառ եղաւ որ հայրս ինձ փոքրիկ ծի մը գնեց :

Այս բաները կ'խորհի հօրս հետ խօսելու ժամանակ : Գլուխս այլ և այլ գաղափարներով լեցուած էր , ուստի շարունակ միտքս կ'փոխուէր , ինքնիրեն կ'ըսէի թէ պիտի տեսնեմ քարափիները , եւ վերջապէս բուսաբանական պարտէզը :

Երբ տուն դարձայ մօրս քով վազեցի , այնպէս համբուրեց զիս որով ըսել կ'ուզէր՝ զիտեմ իմ սիրականս : Եւ ես դեռ քիչ մը լացի :

Շատ զարմացայ տեսնելով որ Մարգրիտ աւելի հանդարտ կ'երեւար : Նա խօսեցաւ արձակուրդի օրերուն , մեր ընելիք պտոյտներուն վրայ և թէ որչափ հաճոյք պիտի զգայինք գիւղը դառնալով :

Այս բնական չէր , մտածեցի որ Մարգրիտ մայրիկէն դաս առած պիտի ըլլար , վասն զի նա որ այնքան սիրուն և հըրտ էր , կ'ըսէր ինձ անշուշտ մայրիկին ապսպրած բաները :

Պող և Նորայր եկան և իմ բարի որոշումներս աւելի հաստատեցին : Տարի մը կար որ զանոնք չէի տեսէր : Այլ ևս տառատոկով և տղայական հագուստով հագուած փոքրիկ տղաքը չէին , հասպադալրոցական հագուստ հագեր էին : Երբ անոնց կոճակներն և պայուսակը տեսայ , սիրտ առի , և առանց վայրկեան մը կորսնցնելու իմ բարեկամներս մեծ ծառուղին տարի որ իմացնեմ անոնց նշանաւոր լուրը :

« Ի՞նչ երջանկութիւն, պոռաց Նորիկ նատարանի մը վրայէն ցատկելով : Որչափ լաւ կ'զրօննուն տղայք դպրոցը, թմբուկի ճայնին կ'արթննաս, ճաշ և նախաճաշ կ'ընես թմբուկով : Կարգ կանոնով կ'քալեն և ոտքով ճայն կ'հանեն, կ'խաղան եւ կ'կռուին :

Եւ Նորիկ օդը թնտացուց իր աղաղակներովը : Մայրիկը վարժարանին խօսնարանին մէջ կ'տեսնես վրայ բերաւ Պօղ, դուրս կ'ենես և տարւոյն վերջը պարգեւ կ'առնոււ :

Պօղի խօսքերուն հակառակ՝ ես որ միշտ կը վախիպէի որ ժամանակը շուտ անցի, հիմակ կ'ուզէի որ կամաց քալէր : Բայց ժամանակը խօսք մտիկ չընէր, և հայրիկին մեկնելու օրը եկաւ հասաւ առանց ուրիշն վիշտ լսելու : « Աստուծոյ աջը վրբան ըլլայ . » կ'ըսէին մեր ծառաները և ագարակակապանները : Կատէրինին գալով՝ պատերազմի, թնդանօթներու և Պէտէվիներու դէմ նախատինք կ'թափէր : Ի՞նչ խելք է կ'ըսէր Ավրիկէ վերադառնալ, երբ այսպէս երջանիկ, այսպէս հանգիստ է մարդ այս տեղը :

Մարգրիտ և ես դեռ ևս չսկանք լալ, վասն զի՞հօրս մինչև Վիոն սիփտի ընկերանայինք : Մայրիկն որ երբ հիւանդանանք դոյնը կ'նետէ, և Վեռն ամենէ թեթև ցաւ ունենայ՝ անհանգիստ կ'ըլայ, այս անդամ անվրդով դէմք մը կ'ցուցնէր . թէ եւ չեմ կարող ըսել ցատ չէր վշտանար :

Այնքան տղայամիտ չեմ որ մեր ճամբորդու-

թեանս ամեն պարագաները պատմեմ։ Միշտ մի և
նոյն պատմութիւնն է։ Ուստի Լիօն քաղաքն ենք,
օդն աղւոր է։ նաւակներ կ'երթան կ'գան, շատ
ծաղիկներ կան պարտէզները, ծառերը միայն հին
դեղնած տերեւներ ունին։

Տօֆինէի մէջ, աշնան տերեւներ գոյն զգոյն
են։ Շատ սիրուն են, կարծես թէ այնպիսի ծաղիկ-
ներ են. . . է՛հ, չեմ ուզեր տիրիլ։

Հայրիկն հազիւ կ'տեսնէինք, ամեն օր մօրս
հետ դուրս կ'ելնէր։ Շատ կ'ուզէի ձիշդ գիտնալ թէ
ո՞ր օրը սիրտի մեկնէր։ Եւ ոչ մէկը այս հարցումիս
պատասխան կ'տար։

Հաճոյք մ'ես կար ինձի համար, այն էր տես-
նել հայրս իր համազգեստով զօրահանդէսին մէջ։
Հայրիկն կ'երթար ու կուգար ձիարշաւ։ Ո՛հ, որ-
չափ կ'փափագէի յանկարծ մեծնալ, մէջքս սուր
կասել, ուսնոցներ ունենալ, և զինուորներու հը-
րամայել, կարծես թէ ամօթով էի որ ես բռնի հե-
տեւակներու մէջ կ'գտնուէի։

Կ'խնդրեմ որ ընթերցողը չմոռնայ թէ զինուո-
րական վիճակին համար որչափ շատ է աւիւնս։
Պատճառներ ունիմ այս կէտը յիշեցնելու։

Հայրիկը բնաւ չէր վախնար պատերազմի եր-
թալու։ Պատերազմներու վրայ ըրած հարցումներս
իրեն հաճելի էին, թէպէտ քիչ մը մեծ էի, իմ կա-
պարեայ զինուորներս կ'շարէի և նա ուազմական
կրթութիւններ ընել կ'տար։

Պատերազմի դաշտէն վարժարան կ'դարձնէին

մեր խօսացութիւնը : Բայց ի՞նչ խրատներ որ կ'տար հայրս որ լաւ վարք ունենամ և խելօք լինիմ , ամենէ աւելի իմ վրաս ներգործողն էր , մօրս հաճոյք պատճառելու խրատն , և ապա այս նկատումն թէ իմ լաւ նիշերս Ափրիկէ պիտի երթային հօրս : Անշուշտ չպիտի զարմանաք այս ըսածիս վրայ : Կ'ըմբըոնէի թէ լաւ վարմունք մի ի՞նչ խնդութիւն կը պատճառէ , եթէ այս խոստովանութիւնը ձեզի կ'ընեմ , բուն նսղատակն է համակրութեան արժանի ըլլալ : Այս , սիրելի ընթերցող , փոքրիկ Հէնրիկը կ'փափագի որ զինքը սիրէք և ներէք իրեն , և եթէ իր պակասութիւնները ձեզ պատմելով կարող եղաւ ձեզ ուղղել , շատ գոհ ոլիտի ըլլայ :

« Զաւակներս , ըստաւ մեզի մայրիկը այս իրիկուն ձեր հայրը կը մեկնի : »

Այս խօսքին վրայ սկսանք լալ , կատէրին մեզ պտոյտի տարաւ , և մեր լացը դադրեցաւ : Վերջապէս իրիկուն հայրիկը Լիօնի կայարանը տարինք : Ո՞հ , որչափ տխուր բան է , մենէ և ոչ մէկը կ'խօսէր : Կ'իջնեն , ծրարները վար կ'առնեն : « Փոքրիկ պարոնս , զգուշացի՛ր ոտքերդ : » Զանգակը կ'հնչէ : Թոյլ կ'տան մեզ որ մինչեւ շոգեկառքերուն մօտենանք : Հայրիկը սովորականին պէս մեզ կ'համբուրէ , սակայն՝ երկրորդ անդամ երբ զիս նորէն գրկեց , որ սիրտը սաստիկ կը զարնէր և մանաւանդ իր աչքերը տխուր էին : Հապա խեղճ մայրիկը : Իր երեսի քօղը իջեցուց , բայց ամեն մարդ կ'առենէր խոշոր արտառքները որ աչքերէն կ'հոսէին : Ցրտում տխուր անոր կ'նայէին :

Մինչև վերջի վայրկեանը այնտեղ մնացինք : Վերջապէս շոգեկառքը ճամբայ ելաւ, տանելով մեր պատուական հայրը :

Երբ կառքը կ'դառնայինք, Մարգրիտ ըսաւ :

Եղբայր իմ, մայրիկին հետ չխօսինք, վերջէն կ'մխիթարենք զինքը » :

Թէ և ես ասոր հակառակը պիտի ընէի : Շատ բնական կը գտնէի համբուրել իմ փոքրիկ սիրական մայրս որ կ'լար : Սակայն, որովհետեւ քոյրս իզմէ տարի մ'աւելի մեծ է, և ես շատ անդամ անոր տաս տարի աւելի կ'տամ, անոր խրատն պահեցի : Մինչև տունը հասնելս լուռ ու մունջ կեցանք : Այն ատեն մայրիկը մեզ համբուրեց՝ այնպիսի գորովանօք համբուրեց՝ որ կարծես թէ մեղմով կ'մխիթարուէր :

Զինուորական կենաց վրայ ունեցած եռանդս կարծես թէ յանկարծ անցաւ : Ակսայ մտածել թէ հայրիկին այս երթն որչափ կ'վշտացնէր մեզ, և թէ բնաւ մտքէս չէր անցած որ կրնայ չի գերադառնալ : Իմ կապարեայ զինուորներուս հետ խաղալու ժամանակ երբ անոնցմէ երկու ծիաւորներ սուրբ հարուածով մը գետին ընկաւ, սկսայ այս բաները մտածել : Մարգրիտ զիս սենեկին մէջ տեղ գտաւ թեերս իրարու կապած և անշարժ :

ՄԱՐԳՐԻՏ

Ի՞նչ բանի վրայ կ'մտածես, Հէնրիկ :

ԵՍ

Ալ զինուոր ըլլալ չեմ ուզեր, բաժանումը շատ դառն է և արտսուքներ թափել կ'տայ :

ՄԱՐԳՐԻՑ

Չատ իրաւունքը ունիս Հէնրիկ, ես բնաւ չեմ
սիրէր պատերազմը : Ամէն բան միայն համազգեստ
մը և սուր մ'ունենալով չի լմնար, պէտք է նաև
կռուիլ և սպաննել : Եւ սակայն հայրիկն որքան
բարեսիրտ է : Ուրեմն եղբայր իմ բնշ վիճակ պիտի
ընտրես :

ԵՍ

Ես գիտուն պիտի բլլամ, Մարդրիտ, աւելի
հանդիստ կեանք կ'վարէ գիտունը, իմ գրատունս
պիտի նստիմ, պիտի ունենամ զրքեր, աշխարհա-
ցոյցներ, գունտեր, ճճիներ և յարդալից կենդանի-
ներ, և համազգեստի տեղ աղւոր տնային պատ-
մուճան մը, հողաթափներ՝ դոր դու պիտի բանիս :

Մարդրիտ եռանդագին ընդունեց իմ խոր-
հուրդներս, վասն զի ինձմէ շատ հեռի էին մար-
տական գաղափարներս, թէ և նա ստէալ նահանջի
թմբուկը զարկած էր :

Դեռ վարժարան մտնելու համար քանի մ'օր ևս
հանդիստ ունէի : Կարելի է կարծէք թէ շատ աը-
խուր էի, կ'սխալիք : Կարգէ դուրս փոփոխութիւն
մը կ'զգայի իմ փոքրիկ թեթև գլխուս մէջ : Առ-
տուընէ մինչև իրիկուն իմ վրաս չէ մտածէր :
Մօրս վրայ հոգ կ'տանէի, իր փափաքները կ'գու-
շակէի, և ուրախ էի տեսնելով որ իր փոքրիկ Հէն-
րիկը զինքը կ'միխիթարէր :

Իմ Յուշավէպս կարդացողը համոզուած է ան-
ըսւշա որ ես պարկեշտ տղայ մ'եմ, և թէ ճշմար-
տութիւն միշտ գրչիս ծայրն էր : Ո՞հ . այ՞ , սու-

տէն կ'սոսկամ : Բայց ահա աւելի տարօրինակ բան մը , հաստատ միտքս դրի նշանաւոր դպրոցական մ'ըլլալ , ամեն բանի մէջ առաջին կարդը բռնել , կարելի եղածին չափ ամենէ աւելի մրցանակ չահիլ , իմ դասակիցներուս հետ լաւ վարուիլ , կատարեալ ըլլալ , այ՞ , այս է նպատակս :

Այս մտածմունքը ոյժ՝ նոյնպէս մեծ ուրախութիւն տուին ինձ : Արդէն կ'փափագէի համազգեստըս հագնիլ , դրասեղաններու վրայ նստիլ , իմ դըրակալս տեղաւորել , շարադրել և աշխատիլ . . . սուաջինն ըլլալ :

ԱՌ , եթէ կարենայի իմ լաւ խորհուրդներս ցոյց տալ , ինչպէս նաև իմ վրայ ըրած ներգործութիւնն ինձի ծանօթ քանի մը տղոց , անտարակոյս շուտ մը իրենց ծուլութիւնն ոլիտի թօթուէին :

Սակայն մեկնելէս օր մ'առաջ թեթև վհատութիւն մը զգացի , շատ թեթեւ . սրտայոյզ մնաք բարեւ ըսի իմ կապարեայ զինուրդներուս : Մարդը րիտ դիտեց իմ յուզմունքս , և այս ընտիր փոքրիկ քոյրս խօսք տուաւ ինձ ատեն ատեն անոնց վրայ նստած փոշիները մաքրել , և երբեմն , պատերազմի դաշտն հանել , որպէս զի իրենց մարտական բնաւորութիւնը չկորսնցնեն :

Միտքս դրած էի չի լալ , ուստի սկսայ երդել , այս ընթացքն շատ յաջող գնաց : Երիկուն մը իմ սիրական մայրիկս զրկելու ատեն անոր ըսի . « Արիանաննք . » բայց զինքը սիովիելու աեղ , իր արտսուքը դրդուեցի :

18 . . հոկտեմբերի 14ին , գեղեցիկ օր մ'էր : 0դը սքանչելի այլ քիչ մը ցուրտ : Արդէն շագանակ վաճառողներն փողոցներուն անկիւնը նստած էին : Ժամը երկուքին վարժարան կ'մտնէի : Պօղն ու Նորայր խօսնարանը գտայ , երբ զիս տեսան ծափ զարկին : Որովհետև չէի կարող երդել , վասն զի յարմար տեղը չէր , սքանչացայ ընկերներս տեսնելով : Կոկորդս տանջող գնդակիը վար գնաց : Ամէն բան կատարեալէր : Առանց ժամանակ կորսնցնելու , Նորիկ գրպանէն գնդակներ հանեց , ես ալ իմիններս հանեցի որ ակատէ էին և Պօղին ուշը գըրաւեց :

Թմբուկը զարկաւ : Մօրս և քրոջս հեռուէն համբոյրներ տուի , որպէս զի սիրաս չի շարժի և բարեկամներուս հետ հեռացայ :

Մի յուսաք որ Յուշավէպիս մէջ իմ դպրոցական կեանքս պիտի պատմեմ : Շատ ծանր գործ է յունարէնի և լատիներէնի վրայ խօսիլ , Կ'փափագիմ միայն ըսել , ձեզ իմ մխիթարութեանս համար , որ շատ չանցաւ ցոյց տուի որ հաստատամիտ տղայ մ'եմ և իմ ուսուցիչներս բոլորովին գոհ էին : Խրաւդանդաղութիւնն իմ ականջիս քանի մը խօսք փըսփըսաց , բայց ես վանեցի զայն . . . : Իմ ընկերներուս խենդութիւններն չտեսնելու համար աչքերս կ'գոցէի :


Իմ սիրելի Պօղին օրինակին հետեւեցայ : Պատւոյ ցուցակին մէջն եմ , և յուսամ մրցանակներ ըստանալ : Նորիկի հետ կ'խաղամ , խնդագին խօսա-

րանը կ'վազեմ ուր մայրս և Մարգրիտ ինձի կ'սպասեն : Վերջապէս դուրս ելնելու ալ արտօնութիւն ունիմ , որով պտըտելու կարող կ'լինիմ , քրոջս հետ խաղալ և մեր սիրած տեղերը միասին շրջագայիլ : Երջանիկ եմ և կ'մաղթեմ որ ընթերցողն ալ ինձի պէս ըլլայ : Իմ օրինակիս թող հետեւի և կարծեմ նոյն նպատակին ալիտի հասնի :

Դեռ չլմնցայ , ինչպէս որ ընթերցողը պիտի կարծէ . չէ՝ կ'ուղեմ պատմել նաև ուրախութիւն մ'որու յիշատակը յաւէտ պիտի աւէ , տարակոյս չունիմ :

Հինգչարթի օր մը , մայրիկը բերաւ ինձ , գուշակեցէ՞ք թէ ի՞նչ էր : Անուշեղէններ , ո՞չ , օդապարիկ մը , ո՞չ ամենեւին : Ո՞հ , սիրելի ընթերցող , չեմ կրնար համբերել , մայրիկն բերաւ ինձ նամակ մը հօրմէս ինձ ուղղուած , պահարանի մէջ , կարմիր կնքամունզ գոյուած , կոստանդին դրօշմով :

Վայրկեան մ'ապշած մնացի . ապա անուրջը պաշարեց զիս : Այս նամակը՝ զօր կարելի է յիսունը հինգ անգամ կարդացեր եմ կանչազդոյն դրականիս մէջ կ'գտնուի , երթամ բերեմ և ձեզի հաղորդեմ :



44 Նոյ. Կոստանդինա 48 . .

Իմ սիրելի Հէնրիկս .

« Ահա վերջապէս վարժարան կ'գտնուիս : Անշուշտ սկսար հիմակ այնպիսի ըւսմունքներ որ հետզհետէ աւելի կարեւորութիւն պիտի ստանան : Այս բաւական չէ, սիրելի զաւակս, բոլորտիքդ ընկերներ ունիս, որոց հետ պարտաւոր ես լաւ ապրիլ սորվիլ : Ունիս լաւ յատկութիւններ ու թերութիւններ, քու պարտքդ է դիտել, ուղիղ ճամբան բռնել և անվեհեր քալել :

« Մինչեւ այսօր դու ազնիւ մօրդ և սիրունքրոջդ մօտ կը գտնուէիր, այդ շատ դիւրին և ախործելի կեանք մ'էր : Հիմակ պարտաւոր ես առանձին խորհել և գործել, հնազանդէ խղճմտանքիդ, այն քեզի չափտի խարէ երբեք :

« Շատ անդամ ըսած ես ինձ թէ բարի և ջարտղայ մը կայ քու մէջդ : Պիտի մեծնան անոնք, այսինքն, սիրելի տղաս, քու բարի և չար կամքդ միշտ պիտի մաքառին, և քու բռնելիք ճամբուդ համեմատ պատուելի պատանի մը պիտի ըլլաս, նոյնպէս կիրթ, և իր պարտաւորութիւնները կատարող, և դու երջանկութեան կամ դժբաղդութեան պատճառ պիտի ըլլաս : Պիտի խօսին քու պակասութիւններուդ վրայ : Մի գոցեր ականջներդ, իմ փոքրիկ Հէնրիկս, ընկերի մը կողմէ տրուած դասը

անդին է : Մի՛ յուսար մօրդ և իմ վրայ տեսած ներողամտութիւնն գտնել նաև քու ամենալաւ դաստիարակներուդ վրայ : Քու առաջին սլարտաւորութիւնդ ըլլայ , որդեակ , ուսուցիչներդ յարդել :

« Եղի՛ր միշտ անկեղծ , հնապանդ : Մի՛ մոռնար քաղաքավարութիւնն զոր ընտանեացդ մէջ օրինակ տեսար :


« Կարելի է , վոքրիկ զաւակս , անիրաւութիւններ կրես , միշտ ընելիք բարիքիդ տեղ չպիտի դըտնես բարիք , բայց համբերող եղի՛ր :

« Դպրոցը , Հէնրիկ , մանրանկար աշխարհ մ'է : Այս պատճառաւ ուզեցի որ դու ալ մտնես այդ աշխարհը : Դու պիտի ըլլաս հիմակ պատասխանատու քու վարմունքիդ , պիտի սորվիս ինքզինքդ սիրելի ընել , և յաղթել քու տարիքդ ունեցող տղու մը պատահած դժուարութեանց :

« Վերջապէս , սիրելի Հէնրիկս , պիտի վարժը-ուխս աշխատութեան , և եթէ սիրես շատ ու շատ սխալմունքէ ազատ պիտի մնաս . մինչեւ անդամ ընելիք սխալմունքդ պիտի ուղղես :

« Մայրիկդ կը գրէ ինձ թէ Ռըշափ լաւ կ'վարուխս հետն իմ՝ մեկնելէս ի վեր , զիաեմ թէ ինչ վեհանձն հաստատամտութեամբ հեռացար իրմէ : Շատ լաւ ըրիր , Հէնրիկ : Քաջ իմացար թէ զաւակ մը պարտի իր մօր գորովը խնայել : Շատ զոհ եմ քեզմէ : Շարունակէ , սիրելի որդեակ , շատ խօսակցէ մօրդ հետ , երբ նաքեզ տեսնելու կ'գայ , խօսէ անորդասերուդ և կրթութեանցդ վրայ : Պատմէ անոր





քու թեթև վիշտերդ , նոյնալէս զրօսանքդ , ամէն բան ըսէ անոր , ամենէ լաւ միջոցն է այս' վինք երջանիկ ընելն , և ցոյց տալ թէ զինքը որչափ կ'սիրես : Աւելորդ է Մարգրիտը յանձնարարել քեզ ձեր գորովը միասին կ'մեծնայ : Իսկ Լևոնին գալով՝ զիտեմ արդէն շատ ժամանակէ ի վեր անոր պաշտոնան կանգնած ես :

« Այս տեղ գեղեցիկ սիրուն ձիեր կան : Անցած օր կարծէի տեսնել պզտիկ սև նժոյգի մը վըրայ նստած և իմ պատուհանիս առակ կ'արշաւէիր , այնալէս որ միտքս դրի երբ ֆրանսա մտնեմ փոքրիկ ձի մը հետս բերեմ , ի՞նչ կ'ըսես ասոր :

« Իմ զինուորներէս մին անապատէն դտաւ շուն մը , քեզի համար կ'կրթենք : Կարմիրի զարնող ըսպիտակ գոյն մ'ունի և քթին վրայ սև բիծ մը : Շատ զարմանալի փոքրիկ կենդանի մ'է : Շատ լաւ պիտի զրօնուս անոր հետ : Անոր անուն մը չդրի , մտածելով որ շատ պիտի ուրախանաս եթէ դու դտնես ինքնին անոր անուն մը : Երբ որ արմաւները ժողովին , բաւական պաշար պիտի զրկեմ քեզ , և կ'յուսամ որ կատէրին նորէն սխալմունք չպիտի գործէ արմաւով լեցուն տիկը ասլուխտի տեղ առնելով , դու պիտի հսկես անոր վրայ :

« Մի՛ վախնար , Արաբներուն հետ շատ բարեկամ ենք : Իրաւ է որ չպիտի համարձակին յարձակի հայրիկիդ և զինուորներուն վրայ , անհոգ եղի՛ր :

« Մնաս բարով , իմ սիրելի փոքրիկ տղաս ,

մէկ տարիէն զքեզ շատ մեծցած պիտի գտնեմ
անշուշտ բայց դարձեալ պիտի սղմեմ քեզ սրտիս
վրայ , ինչպէս որ ըրի երբ մեկնեցայ :

» Աղօթէ Աստուծոյ , ինձի համար , սիրելի
Հէնրիկս , մայրդ և քոյրդ իմ կողմէ համբուրէ :

« ՔՈՒ ՀԱՅՐԻԿԴ »

Եւ ես , կ'զրկեմ ընթերցողը , խնդրելով որ իր
փոքրիկ բարեկամը չմոռնայ :

ՀԵՆՐԻԿ



ton.

/

16-54

2013

